

891.99

9-42

7909



~~289~~ 337

57

~~315~~

2003

891. Եղ. մ. Տար. ՀՀ Տար.  
Հայաստանի Հանրապետություն  
9-42 9-97

6254 Յ. ԳԵՂԱՄԵԱՆՑ

891.542-3

9-42

# ԳԻՒԵՐ ԳԵՂ

(ՉՈՐՍ ՕՐՈՒԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ) .

100  
100  
100



Առաջին օր - Առաջին մասն.

## ՑՓԽԻՍ

Ա. Առաջին եանցի և ընկ. տպաքանութ:



# ԳԻՒԵԳԵՒ.

(ՉՈՐՍ ՕՐՈՒԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ).

## Ն Ո Ւ Ե Ր

«Մեղու Հայաստանի լրագրի քսանեւհինդ  
ամեկի յիշատակին».

~~~~~Գ.ՅԵԶ.Յ.~~~~~

Թռւականը չեմ յիշում, բայց լաւ մըտ-  
քումն է որ օգոստոս ամսումն էր:  
Մի ուրախ և զուարթ օր էր: Վաղուց  
արեգակը դուրս էր եկել: Տանից դուրս  
եկայ փողոց գնալու: տեսնում եմ ծեր  
և երիտասարդ մարդիկ: Կնանիք, փո-  
ղոցի մանուկներ խումբ-խումբ վազ են  
տալիս դէպի մի փողոց: Կանդ առայ:  
—Հայրիկ, մայրիկ, այ աղայ, ուր էք  
գնում, ինչ կայ, ինչ է պատահել, ան-  
դադար սրան և նրան հարցնում էր ես:  
Ոչոք չէր ուզում կանդ առնել մի բո-  
պէ և ինձ պատասխան տալ: Զարմա-

ՅՈՒՆԻ ՊՐԵ ՅՈՒՆԻ ՊՐԵ  
891.542-3

(ՅԱՀԱՏԱՑ ՎԱՐԱՐ ՎԱՐԱՐ ՅԱՀԱՏԱՑ)

1760  
1761

Дозволено цензур. Тифлисъ, 1883 г. 31 марта.

8881

ցայ. Քայլերս իսկոյն ղէպի այն փողը ուղղեցի, ուր խառնիճաղանճ ամբոխը հետագիտէ խռովում էր. Ահա զին բազմութիւնիցը ընդարձակ փողոցում ասեղ ձգելու տեղ չը կար. Քըրթմանջնւն, շշնւկ, փափանց, նախատինք, կշտամբանք ու հայհոյանք լսուում էր ամեն մի կողմից. Մի տան երկիեղկանի գուռը շրջապատած էր հրացանակիր զինուրների մի թեթև գումարտակով. Ոստիկանները անդադար խրնդրում, յորդորում էին ժողովուրդին ցրուիլ, բայց ոչոք չէր ուղում անդիցը ժամ գալ. Ոստիկանարանի մեծաւորի սպառնալիքներից երկիւղ կրելով, ամբոխը ժամանակ առժամանակ թէն լսում էր, բայց մի քանի բոպէլց յետոյ, ինչպէս մի կատաղի ծով, նորից մրրկուում. Բաղդից մեծաւորի հետ և բարեկամ էի, Մօտը դնացի:

— Ասացեք խնդրեմ, ինչ է պատաշզլ, հարցրի ես իմ բարեկամից:

— Ի դէպ, պատասխանեց նա ինձ, դուք ուսերէն իմանում էք, մահք, քննիչին պէտք կը գաք, ես մոայ, Հաշտարար դատաւորը, դատաստանական քննիչը, քաղաքապետը, քաղաքական և զինուրական բժիշկներ, զորագիրներ, վկաններ—ամենքը զբաղած էին մի-մի տեսակ գործով. Տունը, ուր ես մոայ, մի ընդարձակ, բոլորաձեշնութիւն էր. Յատակի մի մասը ծածկած էր հողով, միւսը տախտակամած և գետնիցը քիչ բարձր. Տան վանդակապատ սէքիւն էր դա. Այդտեղ ընկած էր մի երիտասարդ աղամարդու արիւնաշաղախ դիակը. Մուկացի. Դաշոյնի խորը հարուածներով ութ տեղից կտրատած էր դիակը. Փորոտիքների մեծ մասը, ինչպէս ասացին, փողոցի կատունները հանած, լափած էին. Մեռելը երեք օրուայ էր. Ամեն տեղ անտանելի գարշահոտութիւն էր տիրում. Ամեն տեղ ծեփած էր արեան բծերով.

Տան մէջ տեղում, մի ամանի մէջ, մի  
ինչոր ծխում էր, կարծեմ գարշահո-  
տութիւնը մեղմացնելու համար, Զոյգ  
պատահանների բոլոր ապակիններն էլ  
դրեթէ ջախջախած էին. կտրներըներ-  
կած էին արեան խոշոր բծերով, Մի  
ափսէի վրայ անկարգ կերպով դրած էր  
թափթփած զահուէի ութը խոշոր գա-  
ւաթ, Դրանցից մինի զիրտը հաւաքող  
բժիշկը պնդում էր թէ նա առանց այդ  
զիրտը լուծելու անդամ, կարող է վր-  
կայել, որ նրանում խառնած է թոյն:

Կտուրի խաչքից կախարած էին  
հաստ-հաստ պարաններ, որոնցից մինը  
մէջտեղից կարուած էր, Յատակի վր-  
այ, ուղիղ խաչքի տակին, վայր էր  
ընկած մի սեղան, Աչքիս առաջ մի կա-  
տարեալ կախարան էի բանում, Մի  
քանի նշաններից պարզ երևում էր որ  
հանգուցելոյն կախ տալու փորձերը  
անյաջող էին եղել, Դէպի պարտէղ հա-  
նող դռան շէմքի առաջ ընկած էր մի

կանացի մուճակ, Դռան մէջ ցցուած  
մնացած էր մի կոտրած նիզակի ծայրը:

Զարմացած ու զայրացած երբ ևս  
դիտում ու զննում էի չորս կողմու-  
խնդրեմ, պարոն, ասաց ինձ քննիչը,  
թարգմանեցէք ինձ այս առարկաների  
անունները:

— Սա քրդի կապայ է, սա քրդի  
գլխարկ, սա քրդի նիզակ, սա տէգ, ևս  
թարգմանում էի, Քննիչը գրում էր:  
Յետոյ նա դարձաւ վկաներին և հարց-  
րեց.

— Դուք լաւ իմանում էք, որ այս  
ամենը հանգուցելուն իրանն էին:

— Իմանում ենք, աղա, հաստատ  
իմանում ենք, միաբերան վկայում էին  
վկաները: Լուսահողին միշտ այդ հա-  
գուստով ու զէնքերով էլ լինում, երբ  
քաղաքից դուրս շրջում էր:

— Ինդրում եմ, պարոն, կրկն զէ-  
պէի ինձ դարձաւ քննիչը, նեղութիւն  
կրեցէք և այս թղթերը աչքից դուք  
մէկ անցկացրէք: Ես թերթեցի:

— Տաղեր, խաղեր, պարերդեր, ասացի քննիչին. սա ահա մի վաւերացրած կոտակ է. սա մի ինչ որ զինեդեմ երգը, սա էլ դարձեալ մի ինչ որ հայքորդի յիշատակարանը։ Քննիչը վեր էր առնում բոլորը և կնքում։ Սիրտս չը դիմացաւ. թողի գուրս ելայ։ Մտախոն և մտատանջ իմ բան ու գործին էի գնում։ Յանկարծ փողոցի հեռաւոր ծայրում մի ծերունի հանդիպեցաւ աչքիս. Գերանների վրայ կուչ եկած նստած էր ծերունին, վիշտն ու թախիծը երեսիցը կաթում էին. Լափճերմակ մաղերին նայեցայ, երիտասարդական առոյգ կերպարանքը զննեցի և զարմացայ ու ափշեցայ. Մօտ գնացի. — Բարե, հայրիկ, ինչի այդքան տիսուր ես, հարցրի ևս ծերունուց։ Նա լուռ էր.

— Երեխ, հայրիկ, դու ճանաչում ես այսօրուայ զոհին. Արտասուաթոր աչքերը ծերունին ինձ վրայ շորթեց և

դարձեալ լոեց։ Հետաքրքրութիւնս սաստկացաւ. — Պարզ երեսւմէ, հայրիկ, որ դու տեղեակ ես այսօրուայ սոսկալի եղեռնագործութեան, կամ նրա նախընթաց պատմութեան հետ, պատմիր, ինձ մի բան պատմիր այդ մասին։

— Աթող ինձ և քո գործին դնած, վերջապէս փնթփնթաց ծերուկը, ահա ժութեան ձև ու շարժմունքներ անելով։

— Հայրիկ, գէթ մի փոքրիկ բաւականութիւն իմ անչափ հետաքրքրութեանս, ևս անդադար թախանձում էի։

— « Աւելի լաւ է ոչինչ չ'իմանաս», խնդիրս նորից մերից ծերունին։

— Իմանամ, անպատճառ, պէտք է իմանամ։ Մի քիչ առաջ տեսածս պատկերը մի լաւ և սրտառուչ վէպի նիւթկարող է լինել։ Ծերունին վրաս նայեցաւ և ժպտաց դառնապէս։

— « Այժմեմն ժամանակում, այժմեան մեր այս անտարբեր և նիւթպաշտ ժամանակում, այս բառերը ծե-

բունին շեշտեց — ինչ խորհուրդ ունի  
գրի անցկացնել պատմութիւնը մի երի-  
տասարդի, որը իրան պատանեկական  
հասակիցը մինչ այս գմբաղդ, ուն օրը...  
և ծերունին օքուռ, օքուռ լաց ելաւ։  
Սիրաս տակնուվրայ եղաւ։ Անձինը-  
ման ծերունուն ջանին կպայ ևս այ-  
նունետես և վերջապէս արի իմը — կա-  
ռապան, ձայն տուի իսկոյն մի կառքի։  
Հեծանք, գնացինը։ Գրասենեկում ա-  
ռանձնացանք մենք։ Առաջարկածս մի  
փոքրիկ գաւաթով արազը ծերունին  
անյագարար կուլ տուեց։ — Մինն էլ,  
հայրիկ, մինն էլ, սիրաշահիլ էի ու-  
զում ես իմ հիւրին։ Երկրորդ գաւա-  
թը գատարկեց ծերունին և մի սրտանց  
ռամա քաշեց։

— Հայրիկ ջան, հայրիկ... ես միշտ  
թախանձում էի։

— Պատմութիւնը, որ քեզ անել ինձ  
ստիպում ես — ծերուկիս լեզուն կար-  
ծես բաց ելաւ — շատ երկայն է։

«Գորս օր, չորս գիշեր» պատմեմ հա-  
զիւթէ կարողանամ վերջացնել...»

— Ո՞ր օրին, ո՞ր ժամին, որ դու ա-  
զատ միջոց կ'ունենաս, հայրիկ, խընդ-  
րում եմ ինձ իրաւունք տաս գալ քո-  
տանք և կամ...»

— Չ'ունիմ, այսուհետեւ ես չունիմ  
ոչ օր, ոչ ժամ, և աւաղ, ոչ էլ մի  
բոյն, ուր կարողանամ այս գարաքաշ  
գլուխը... Արտասունքները նորից խեղ-  
դեցին ծերունուն ձայնը։

— Այն ժամանակ ես յոյս ունիմ,  
հայրիկ, որ դու ինձ չես զրկել քեզ  
իմ տանք հիւրասիրելու մեծ բաղդաւո-  
րութիւնից մինչև որ...»

— Մինչեւ որ ես պատեհ առիթ կ'ու-  
նենամ թողնել ձեր այս երկիրը և քա-  
շուիլ, երթալ իմ վաթանը։

— Այդ պատեհ առիթը, հայրիկ, ես  
ինքո քեզ համար պատրաստիմ։ Ծե-  
րունին սիրտ առաւ և — այս անգամ  
իրան բերանով — ինձնից արագ խնդրեց

Կրկին։ Միայն, յարակցեց նա, թքամանով չը տաս արազը, այլ մի մարդավարի գաւաթով։ Ժպտացի, ուրախացայ և արազի լիք շիշը նրա առաջը դրի։ Մէկ ումպով ծերունին դատարկեց շիշի կէսը և իրան պատմութիւնը այսպէս սկսեց,

ԱՌԱՋԻՆ ՕՐ—ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Ապառիկները ժողոված և առետրական գործերին միանգամայն վերջ տուած պլծած էր Անթառեան Գրիգոր-աղան։ Անհամբեր սրտով նա սպասում էր ոսկերիչ Խաչոյի վերադարձին կոստանդնուպօլսից, որպէսզի Էրզուրումից օր առաջ դուրս գայ մինչդեռ ամառային շոգերը դեռ սկսած չէին։ Գրիգոր-աղան ընտանիքով փոխադրուելու էր Ախալցիսայ քաղաքը, որին ուները մի քանի տարի առաջ նուաճած էին։ Արէգնազան խանումը—տիկին Անթառեանը—իրան հերթում հարսնացուին և

ազգականներին համար յաւ լաւ ընծաների պատրաստութիւն էր տեսնում։ Անթառեաններին միակ ժառանգ է Առն պատանին էր միմիայն, որի սրտովը չէր այդ գաղթականութիւնը,

Բ.

Մի օր յանկարծ Էրզուրումում լուր տարածուեցաւ, թէ կոստանդնուպօլսից վերադարձող վաճառականների կարաւանը քուրդ աւազակներից կողոպտուած է։ Այդ փորձանկը պատահած էր Տրապիզոնի ճանապարհի վրայ, իլիջա զիւղի մօտ, որը Էրզուրումից հազիւմի քանի ժամուայ ճանապարհ հնուու է։ Գրեթէ ողջ Էրզուրումը դզրդաց այդ ձախող լուրի վրայ։ Այդպիսի փորձանքներն ու լուրերը, ծմարիտ է, Էրզուրումցիների համար անսովոր բաներ չէին առհասարակ, բայց այս անգամ վայ կողոպտուող կարավանը բեռնասրուած էր բազմաթիւ վաճառականների մեծաքանակ և մեծագին ապ-

բանքներով։ Ոչոքի համար գաղտնիք չէր, որ տասը հազար գառպոնի<sup>1)</sup> ակնեղեն մինակ ոսկերիչ խաչօն ունէր հետք։ Իսկ թէ կողոպտուղների միջին էր ինքը և խաչօն, դրա ապացոյցը այն նամակն էր, որը իրան ընկերիցը մի քանի օր առաջ Տրապիզոնից ստացած էր Անթառեան Գրիգոր-աղան.

Գ.

Հազիւ յիսուն տարու կը լինէր Անթառեանը, բարձր հասակով և առողջ կաղմուածքով։ Բնութեամբ նա շատ ծանրաբարոյ էր, հանդարտ, սակաւախոս, ինչ որ ուրիշները խօսքով կամ շարժումներով կարող էին հասկացնել, Գրիգոր-աղան մի լոկ նայուածքով հասկացնում էր, Զը նայած ահազին հարստութեանը՝ Գրիգոր-աղայի կենցաղավարութեան առաջն սակաւապիտութիւնն էր։ Աստուածավախ և ժամասէր՝ նա ամենայն օր գնում էր

<sup>1)</sup> Արծաթ մանէթ։

և կնղեցի, ուր իրան նուիրած ս. Գէորգայ պատկերի առաջ մշտապէս վառում էր արծաթեայ կանթեղի ձէթը։ Ինչպէս կանթեղը, նոյնպէս նրանում այրուելիք ձէթի մշտական վճարը, Անթառեանի իրան նուէրն էին դարձեալ Աստուածոյ տանը։ Եկեղեցումը բռնած երկիւղած դիրքովն ու ջերմեռանդութիւնով Գրիգոր-աղան մի կատարեալ հայելի էր ձշմարիտ քրիստոնէի համար։

Եկեղեցուց, միշտ օօրհնեալք եղերուք-ի, վերջը, դուրս գալիս Գրիգոր-աղան սովորութիւն ունէր սժամի զըռան աղքատներինն քառասնական փարայ<sup>1)</sup> բաժանել օրական։ Հոգեորականները շատ յարգում և ակնածում էին Անթառեանից, իսկ աղքատները նրան օրհնելու համար աղօթք՝ իսկ զովաբանելու համար խօսք չէին գտնում։ Որպէս գերդաստանի գլուխ Գրիգոր-

<sup>1)</sup> 40 փարան 1 դուռուշ է, իսկ զուռուշը 5 կօպ։

աղան մի օրինակելի մարդ էր ողջ կը-  
գուրումում։ Խստաբարոյութիւնը, որնա  
ունէր իրան գերդաստանի վերաբերու-  
թեամբ, նրա առաքինական սկզբմունք-  
ները միմիայն ապացուցանում էին։  
Մեծի պահոց առաջին շաբաթիցը սկը-  
սած մինչև ճրագալուցին օրը անկողին  
մանելից առաջ Անթառեանը կնոջն ու  
որդուն հեա ամենայն երեկոյ «Եկես-  
ցէի էր կանգնում»։ Հոգեպէս հըրձ-  
վում էր Գրիգոր-աղան, երբ Լեոնը  
անկաչ քաղցրութեամբ աղօթքը «Ճրի-  
պէս» կարդում էր Նարեկի վրայ։ Հայ-  
րը որդուն շատ էր սիրում, թէն որեւէ  
արտաքին նշանով այդ սէրը արտայայ-  
տել չէր ուզում։ Որդին կարող էր զը-  
րանով «Երես առնել, առկոց ելնել,  
կեանքի պատահարներումը փորձառու-  
Գրիգոր-աղան յոյսը երբէք չէր  
ուզում իրան հարստութեանը վը-  
րայ դնել։ Այդ էր ահա պատճառը, որ  
Գրիգոր աղան, առանց ազգականների

ասածներին ուշք դարձնելու, իրան օ-  
ջախի համար նուաստութիւն չը հա-  
մարեց Լեոնին յանձնել խաչոյին, որ-  
պէսզի պատանին, որպէս Ըսկեր-աշա-  
կերտ սակերչի ձեռքից վալէ նրա ար-  
հեսալը \*): Եւ երբ տեսաւ Գրիգոր-ա-  
ղան, որ Լեոնը առանց հայրական  
կարողութեանը կարող է, հարկը ստի-  
պած ժամանակ, իրան ձեռքերի շնոր-  
հով իրան համար մի պատառ հաց ճա-  
րնլ, այնուհետև նա որդուն նշանեց։  
Այդ բանը տեղի ունեցաւ Ախալցիա-  
յում, ուր մի քանի ամիս առաջ Ան-  
թառեանը եղած էր իրան առետրա-  
կան գործերով։

Ախալցիացի Մարկոս-աղա Ասլան-  
եանիցը լաւ ինամի, սրա աղջկանիցը  
լաւ հարսնացու երբէք չէր կարող ճա-  
րել իրան համար Անթառեան Գրի-  
գոր-աղան։ Այդ էր ահա պատճառը,

\* ) Խլել արհեստը՝ նշանակում է ոս-  
փորել, ըմբռնել։

որ էրզըումում և Ախալցիսյում, երբ  
լսեցին մարդիկ Լեռնի նշնուիլը Դըշ-  
խուհինի (Մարկոս-աղայի աղջիկը այդ-  
պէս էր կոչուում) հետ, ասացին. «Պը-  
լորեցաւ խուփիր, գտաւ պուտուկը»:  
Տաճկաստանից դադթող ժողովրդին այդ  
ժամանակ ռուսի տէրութիւնը աղատ  
թողած էր ամեն տեսակ հարկերի վը-  
ճարումից և, որ զիսաւորն էր, վաճա-  
ճառակաները աղատ էին նաև մաքսա-  
յին տուրքից:

Անթառեանի նման վաճառականին  
այլ ևս հաշիւ չը կար մնալ էրզըումում,  
Ասած է. ամեն ձուկը, մեծ ջուր է պըտ-  
ուում, թէ Գրիգոր-աղային Ախալցիսյ  
գաղթելը որդուն նշնելու հետեանք էր,  
թէ Լեռնի նշնելը գաղթելու մտքի հե-  
տեանք—այդ դժուար է ստուգել, Այս-  
քանս լաւ յայտնի է, որ Գրիգոր-աղան  
գաղթելու ցանկութիւն այն ժամանակ  
յայտնեց, երբ արդէն որդու նշանադ-  
րութիւնը կատարած պրծած էր:

1001  
400



Անթառեանը իրան հարստութեան և  
առաքինական բարեմանութիւններին  
համար մեծ անուն և համբաւ ունէր ևչ  
միայն հոգեորականների ու աղքատնե-  
րի առաջ, այլ նաև ողջ էրզուրումում:  
Սովորական վորքիկ աստղերն են մի-  
միայն, որոնք ամեն տեղ լոյս չեն տա-  
լիս, իսկ արեգական ճառագայթները  
ամեն տեղ, և ամենքի վրայ անխոտիր  
թափանցում են:

Տնական, առեստրական—երբեմն նաև  
քրէական—վէճերի ու գործերի ժամա-  
նակ, էրզուրումի թէ մեծը և թէ փոք-  
րը, Անթառեանի դատ ու դատաստա-  
նին էր զիմում և Գրիգոր-աղայի օկա-  
պածը-կապած էր, քանդածը-քանդած:

Կառավարչական այս և այն հրաման  
ու կարգադրութիւն, որոնք օտանեան  
բարեխնամ տէրութիւնը անում էր ի-  
րան սիրելի հայ «միլէտի»<sup>1)</sup> օգտի

<sup>1)</sup> Ազգ.

համար, և որոց կարնորութիւնը այդ  
ազգը, գմբաղդաբար, չեր կարողանում  
լսելոյն ըմբռնել, այդ հրամաններն ու  
կարգադրութիւնները շատ անգամ իրա-  
գործվում էին Անթառեանի միջամտու-  
թեամբ։ Հպատակ ազգին վերաբերեալ  
ծանր բողէներումը էրզուրումի հայ  
ժողովուրդը գունդագունդ Անթառեա-  
նին էր զիմում և զրիգոր-ազան—ինչ-  
պէս էրզուրումցիք իրանք ասում էին  
—կարողանում էր թէ չչարը խափա-  
նելը և թէ իրան ազգակիցներին առն-  
հաւատ տաճիխն ձեռքից պաշտպանել։  
Էրզուրումի վալի<sup>2)</sup> փաշալիցը սկսած  
մինչև յետին պաշտօնեան Անթառեանի  
ծանօթ ու բարեկամ էին։

Հարկը ստիպած ժամանակ նա ամեն-  
քի մօտն էլ աղատ մուտք ունէր։ Նրա  
խնդիրը կամ միջնորդութիւնը ոչ մի  
պաշտօնէի կողմից զեռ մերժուած չեր,  
որովհետեւ ինտիմներն ու միջնորդու-

<sup>2)</sup> կուսակալ։

թիւնները, որ Գրիգոր-ազան անումէր,  
իրան համար և իրան կողմիցը չէին,  
այլ օմիլէտին կամ սրա այս կամ այն  
դասակարգի կողմից։ Անձնական, սեղ-  
հական գործերի համար Անթառեանը  
էրզուրումի պաշտօնեաններին չեր դի-  
մում երբէք։ Այդ բանին հարկաւորու-  
թիւն էլ չը կար, որովհետեւ Անթառ-  
եանի հետ գործ ունեցողները հօ անբան  
անառուններ չէին։ Ինչի նրանք գործը  
մինչև այդ կէտին կը հասցնէին։ Գաղ-  
թելուց երկու ամիս առաջ Գրիգոր-  
ազան ևձայն տուեցա իրան պարտատէ-  
րերին և պարտատէրնարը—թէկուզ քա-  
րը գլխներին աղալով—ճարեցին, ճու-  
րեցին իրանց պարտերը և Գրիգոր-ա-  
զայի նշանակած օրերում ճշտութեամբ  
գրանց մուհակները թափեցին։

Ե.

Հազիւ մէ երկու ժամ անցած էր կա-

բաւանի կողապտուելու լուրը տարածուելուց յետոյ: Երգուրումի վաճառականներից շատերը խումբ-խումբ դիմում էին Անթառեանի վաճառասենեակը: Նրանք որոշած էին Գրիգոր-աղայի առաջնորդութեամբ գնալ վալի մօտ պատահած փորձանքի մասին մի շուտափոյթ օգնութիւն խնդրելու համար: Մինչև վաճառականները բոլորն էլ կը հաւաքուէին, մինչև նրանք երեք պատգամաւոր կ'ընտրէին իրանց միջից և յետոյ: մինչև այդ պատգամաւորները Գրիգոր-աղայի հետ միասին վալին երակը գտնելու<sup>1)</sup> կերպի ու եղանակի մասին կը խորհէին և արժանը կը տնօրինէին, ինքը, Գրիգոր-աղան սենեկից գորս ելաւ:

Նա գնալու էր ոսկերչու խանութը: Այնտեղ հայր ու որդի պէտք է մի եղանակ գտնէին ոսկերչու ընտանիքին միաստացնելու համար: Լեռնը, ըստ

<sup>1)</sup> Կաշառել.

սովորականին, խաչօյի խանութումը աշխատում էր: Կարաւանի դլմին եկած փորձանիրը պատանին ինքն էլ լուսած էր և գուցէ աւելի ցաւում էր քան հայրը և քան միւս վաճառականներու: Գրիգոր-աղան ներս մտաւ: Նա հրամայեց որդուն խանթի միջից վեր քաղել բոլոր ակնեղէնները, պահուծուն մնտկից հանել մի քանի կտոր ծուլածոյ խոշոր արծաթները և այդ բուլորը միասին տանել տուն, մօրը յանձնել: Հօր պատուէրները որդին ծշդութեամբ կտարեց:

Հօր այդ տարօդինակ վարժունքի պատճառը որդին, ինչ ասել կուզէ, հարցնելու իրաւունք չ'ունէր, և լեռնը ծպտուն անգամ չը հանեց: Նա լաւ դաստիարակուած էր, խանթի աշկերտին, փոքրիկ Կարօյին, շալակը տուեց Լեռնը փոքրիկ բեռը: Ինքը նրա ետքերը պէտք է գնար: Գրիգոր-աղան կողբեց իրան ընկերին խանութը, բանա-

լին գրագանը քայեց և դառնալով գէպի  
որդին ասաւ.

— « Մօրդ ասմա, Լեռն, այդ ամենը  
թող մեծ սնդկի մէջ զգուշութեամբ  
պահէ, իսկ ինքդ ձեռաց գնա և Մար-  
խաթունին (այդպէս էր կոչվում ոս-  
կերիչ Խաչօյի կինը) միամտացրու։ Ա-  
սա նրան որ իրան մարդը կողովուող  
կարաւանի միջին չէ, թող միամիտ լի-  
նի։ Ասմա, որ ես այդ մասին նամակ  
ունիմ, Անտեղից յետոյ կը վերադառ-  
նաս տուն և մօրդ հետ կ'սպասէք ինձ  
ճաշին։ Իսկ քեզ համար, Կարօ, այսօր  
փայտօսդ<sup>2)</sup> է, դուն էլ գնա ձեր տու-  
նը», Լեռնն ու Լարօն իրանց դործին  
գնացին։

Գրիգոր-աղան դարձաւ վաճառական-  
ներին մօտ, Փոքր ինչ յետոյ ընտրուած  
երեք պատգամաւորների գլուխն անցած  
Անժառեան Գրիգոր-աղան գնում էր  
վալիի սարայը։

<sup>2)</sup> Արձակուրդ։

— Եթէ տեսաք, որ վալին այդքա-  
նով չը բաւականացաւ, դուք նրան  
համկացրէք, Գրիգոր-աղա, որ մենք  
պատրաստ ենք դարձեալ նրան ծառա-  
յութիւն անկլ, Գնալիս պատգամաւոր-  
ներից մինը այդպէս էր ասում։

— Եթէ կարծում էք, որ նա, դու-  
ցէ, չը համաձայնի սպասել, դուք իս-  
կոյն ինձ աչքով արէք, Գրիգոր-աղա.  
վազ կուտամ փողոց և այդ անիրաւի  
համար էլի մի բան կը բերեմ։ Այս ա-  
սովը երկրորդ պատգամաւորն էր։

— Ես մօսս քսան ոսկի ունիմ կըր-  
կին, եթէ հարկ լինի և դուք բաւական  
համարեցիք, Գրիգոր-աղա, հրամայե-  
ցէք իսկոյն...

Երրորդ պատգամաւորը խօսքը դեռ  
վերջացրած չէր, երբ Գրիգոր-աղան  
ընդհատեց նրան։

— Ծանր, դուք ձեզ համար ծանր  
կացէք, ասաց Գրիգոր-աղան, ծանր  
կացէք, որ լիար քաշէք։ Եւ միթէ 100  
ոսկին դուք քիչ բան էք համարում, որ

Նոր ի նորոյ գումարների պատրաս-  
տութիւն ուզում էք տեսնել։ Վալին  
քարեր նետեց, ձեռքնը հողնեցրեց,  
որ հարիւր ոսկիով չը բաւականանայ,  
Տեսնում եմ, որ ես կը զուրումից դեռ  
չը հեռացած, գուք հիմֆկուանից սկը-  
սում էք նրան նրես տալ։ Չ'անէք,  
գուք այդ բանը չ'անէք, բարեկամներ,  
Տաճիկ պաշտօնեաներին շատ տաք,  
շատին կը սովորին, քիչ տաք քշն։  
Դրանց իրանց պարտքն է բըռ-  
նել գողերին, պատել աւազակներին։  
Մենք նրանց ընծաներ տալու պարտա-  
կանութիւն բնաւ չ'ունինք, բայց որ  
այս երկրին մէջ մէ անգամ այդ  
բանը սովորութիւն դարձած է, որ ա-  
ռանց դրան այս անկիրթ երկ-  
րումը գործ չէ դառնում, Բնէ կարող  
ենք անել։ Միայն երկու չարիքից միշտ  
փոքրագունին ընտրելը—մեր ուզգակի  
հաշիւն է և պարտքը, բարեկամներ,  
գուք չը կարծեք թէ ես այս հարիւր  
լիրան մէկ գլուխ այն անիրաւի առա-

ջին պէտք է համարեմ, ոչ այլ նախ  
50 ոսկի, յետոյ 70, 80, 90 և վերջա-  
պէս, եթէ տեսայ որ կարելի չէ, ճա-  
րահատեալ կուտամ 100.ն էլ. Բայց  
մինչև 100 ոսկին տալս՝ ես գիտեմ թէ  
ինչեր կ'ասեմ նրան։ Այդպէտերի հետ  
նիստ ու կաց անողը, վայաը միշտ ի-  
րան ձեռքում պիտի ունենայ։ Մեծու-  
նանք ասել են. աշան հետ լնկերացիր,  
վայաը ձեռքիցդ մի ձգիր։

— Հարկաւ գուք մեզանից լաւ էք  
իմանում, Գրիգոր-աղա, այդ մարդի-  
քի բնութիւնը, բայց այս պէտքում,  
ի սէր Աստուծոյ, աշխատեցէք մէկ  
զլուխ բաւականացնել դրան։

— Մեզ այս փորձանքը չը պէտք է  
պատահիր, երբ պատահեց, ճախսի շատ  
ու քշն նայելու չէ, Գրիգոր-աղա, Այ-  
սուհետեւ մէր բանը, ինքդ այդ լաւ հաս-  
կանում ես ։ Գաւիթ մարդարէի առա-  
ծին նման եղաւ. ողիր զմեծո ի վերայ  
մեղաց։

— Գրիգոր-աղա, ձեր գիմաց խօսիլը  
թէն համարձակութիւն է, բայց կը  
ներէք եթէ ևս էլ իմ կողմից նկատեմ  
այն, ինչոր ընկերներս ասացին, ևս էլ  
կարծում եմ նմանապէս, որ այս ան-  
դամ վալիին իրան կամքովը պէտք է  
ժամ գալ միանգամայն. Մի գուցէ ա-  
նիրաւը յետոյ զլիներիս տակ բարձ  
դնէ և մեզ քնացնէ:

Այսպէս խօսում էին պատգամաւոր-  
ները, երբ Գրիգոր-աղան քնթի տակով  
ժպտալով առաջ էր գնում. Երբ պատ-  
գամաւորութիւնը մտաւ այն փողոցը,  
ուր գտնուում էր կուսակալի բնակա-  
րանը, վերջին խօսքը պատկանում էր  
անթառեանին, իրան, Նա ասաց:

— Բարեկամներ, զիտեմ թէ ինչն է  
ստիպում ձեզ այդքան արհամարհել  
փողը, որ մենք ամենքս փարայ-փարայ  
մեր ճակտի քրտինքովն ենք դատում.  
Գիտէք, որ այս գէպքում ես ձեզ ոչ  
միայն կարելից եմ, այլ նաև վիճակա-

կից: Ծնորհակալ եմ ձեր ինձ վրայ ու-  
նեցած վստահութիւնիցը. Մեծունանց  
ասածը միշտ լաւ է, և յի խելքը դովե-  
լի, երկուսն աւելի»:

Եթէ կարծում էք, որ վալիին  
հետ խաղանելը կարող է գուցէ  
մեղ մի թեթև խւաս հասցնել, կարող է  
գործը կաղացնել, համեցեք, կուտամ,  
100 հատիկ ոսկին էլ մեկ զլուխ անի-  
րաւին իրան կուտամ: Բայց, ևս մտա-  
ծում եմ, գոնեա պահանջել արդ ան-  
իրաւիցը, որ այս անգամ չը բաւակա-  
նանայ գայմագամներին ու մութասա-  
րիքներին վրայ լոկ հրամաներ արձա-  
կնլով, այլ...

— Այլ, ինչ, Գրիգոր-աղա, քեզ  
մատաղ, միաձայն երեք պատգամաւոր,  
ներն էլ հարցրին Անթառեանից:

— Այլ որ անիրաւը շուտով այստե-  
ղից մի գունդ զօրք ուղարկէ աւազակ-  
ների ճամբան կտրելու: Անթառեանի  
վրային միտքը շատ խելօք և դորձնա-

կան միտք էր. Պատգամաւորմերը չառ  
հաւանեցան այդ մտքին: Պատգամաւո-  
րութիւնը պալատ հասաւ:

Զ.

Խաչօն մի հասարակ ու աղքատ ար-  
հեստագործ էր: Բացի ոսկերչութիւնից Ա-  
նա մեծ հմտութիւն ունէր նաև ջավա-  
հիրջութեան մէջ: Բայց սեպհական դը-  
րամաղլուխ չ'ունենալով խեղճը չէր  
կարողանում լաւ գործ դարձնել: Նրա  
օրական վաստակը հազիւ բաւականա-  
նում էր իրան գերդաստանին կերակ-  
րելու և հազցնելու համար: Խաչօյի ան-  
գաղրում աշխատաթեան միակ նպա-  
տակն էր — ինչպէս հայ արհեստաւորը  
ինքն էր ասում — «օրէ մալէզ, օրէ խը-  
լէզ», այսինքն օրական վաստակել, ա-  
րական ուտել: Արհեստաւորին օգնում  
էր մասամբ և նրա կինը: Մարիսաթու-  
նը օրն ի բուն, զիշերն անքունց ամե-  
տաքս էր բանում, և կոճ ու շալ գոր-  
ծում: Հայ արհեստաւորներից վերց-

րած այդ գործերի վաստակով, Մար-  
իսաթունը կարողանում էր տան լուաց-  
քի սապոնը գնել, թել-ասղի, բաղնիսի  
փող ճարել և փոքրիկներին ունաման-  
ներ հազցնել:

Մօր այդ բոլոր աշխատանքներին,  
որքան ձեռնհաս էր, մասնակից էր 10  
տարեկան գսարիկը Եսթեր (անունով:  
Ոսկերչումիւս որդիքը, երկու արու զա-  
ւակներ, դեռ փոքր էին: Նրանք դեռ  
սպառող ոյժեր էին: Հայ արհեստաւորի  
ընտանիքը այդպէսով կըզբումում պի-  
րան գօրա» բարեբաստիկ կեանք էր վա-  
րում: Նախնիք ասել են՝թէ՝ «Քաղցա-  
ծութիւնից ոչ ոք չի մեռնի». զրան  
պէտք է աւելացնել — եթէ միայն աշ-  
խատի, Դարձեալ՝ նախնիք ասել են.  
«աղքատի ճրագը մինչ ի լոյս չի վա-  
սի», մի առած, որ ոսկերչու վրայ ար-  
դարացաւ միանգամայն: Մի տարի  
կըզբումում երեխաների տարափոխիկ  
հիւանդութիւն յայտնուեցաւ — դա ծա-

դիկն էր, Հարիւրաւոր մանուկներ զոհ գնացին այդ հիւանդութեանը: Ծնողքների շատ արտասուլքների հետ հասարակութեան ապագայ շատ յոյսեր էլ սե հողի տակ թաղուեցան այդ տարին Երգումում Դմուար բան է ծնող, մի գերգաստանի հայր լինել, աւելի գժուար է հասարակութեան, ազգի խնամատար լինել, բայց եթէ մարզիկ այդ ծանր լծի տակ մտնում են, պէտք է բարեխղճութեամբ քաշեն լուծը: Գլժբազար շատ անզամ այդ այդպէս չէ լինում... Խնչիցէ: Ծաղկից ոսկերչու երկու աղացքն էլ մէկզմէկու վերայ մեռան: Թունաւորուեցաւ ընտանիքի կեանքը: Խաչօն, որպէս տղամարդ, էլլի դիմացաւ ցաւին, սակայն Մարիսաթունը ցաւագար գարձաւ: Նա միշտ տնքանքում էր: Մէկ մի տեղն էր ցաւում, մէկ միւսը:

Մօր ոսկորական բոլոր աշխատանքը այնուհեակ միայն Եսթերի վերայ ծանրացաւ, Եսթերը, բարերազդաբար, մի

առոյզ և առողջակազմ աղջիկ էր: Զաւկաների հիւանդութեան պատճառով ոսկերիչը շատ անկամ խանթի դործերիցը յետ էր մնում, շատ գործի էլ վնրայ չէր համում: Այս օրերում նա վաստակում էր քիչ, իսկ ծախսում շատ: Փոքրիկ, խուջուջիկ ու մուջուջիկ նրա գառնուկները մէկ այս են ուզում, մէկ այն պահանջում: Պէտք է առնել: Ծնողական գութ ասածը ուրիշ բան է: Խրան զառնուկների նման շատերը ոսկերչու աչքի առաջ մեռնում, կոսորդում են ամենայն օր: Էլ որ հօր—որի աղացքը կենդանի են—աչքումը նշանակութիւն ունի այնուհետե փողը—չունիմութիւնը: Խաչօյի յաճախորդները փէրկցան \*), ոմանք երես դարձուցին, ուրիշները ուրիշ ոսկերիչներ ճարեցին: Բայց արհեստաւոր—այս պէտք է խստավանել—չը յուսահատեցաւ գարձեալ: Մէկի փօխանտկ

\*): Յրուեցան, հեռացաւ.

Նա երկուս աշխատում էր և ամեն հը-  
նար գործ էր գնում իրան գործերը ա-  
ռաջուան կապիճն դնելու, բայց ան-  
տեր գործ առածկ էլ միայն այն ժա-  
մանակ կարդին է գնում, երբ գործողը  
սրտով աշխատում է, խաչօյի սիրտը,  
դժբաղդաբար, կոտրած էր, Մի քնքոյշ  
և նուրբ ապակի, երբ ջախջախուեցաւ,  
կարելի է նրան կարկատել, կտարները  
մէկզմէկու կցել, բայց նորոգել բոլո-  
րովին՝ զա անկարելի է, Արհեստագոր-  
ծի ցաւը որդոց մեռնելը շէր մինակ,  
մենակ գործերի խանգարուիլը չէր,  
Խեղճի մած ցաւը կնոջ ցաւագարութիւ-  
նըն էր, իսկ մեծ մտածմունքը աղջկան  
հետզհետէ մեծանալը, Աղջկերքը մար-  
դու գնալիս, ճշմարիտ է, ծնողաց  
վերայ մեծ փող չ'արժեն Երպումում,  
բայց ախր էլի մի բան կ'արժենան: Մի  
բան էլ կայ, վաճառականի համար մեծ  
հարուած է, երբ մարդիկ նրա համար  
ասեն թէ՝ «ընկած է», Այդպէս է ամեն

կարդի և աստիճանի մարդկանց համար  
էլ: Արհեստաւորն էլ ունի իրան գընկ-  
նիլը: Մարդիկ առհասպակ անտար,  
բեր և թեթեանողի են, Մէկի կամ միւ-  
սի ընկնելու պատճառը նրանք չեն  
հարցնում, նրանով չեն հետաքրքրվում,  
այլ միայն ասում են գընկաւու, Ընկնել  
թշնամուս անգամ թող չը կամենայ  
Աստուած:

Արհեստագործ տղամարդու, Խաչօյի,  
հանսրակաց աչքումը այդ ընկած ժա-  
մանակն էր ահա, երբ Սնթառեան Պը-  
գորազան բարերար ձեռք կարկառեց  
զէպի նա: Ճանաչելով ոտկերչու տո-  
կուն աշխատութիւնը, զիտնալով նրա  
հմտութիւնը սեպհական արհեստի և  
ջաւահիրջութեան մէջ, Գրիգոր-աղոյն  
ոտկերչուն իսկոյն իրան ընկեր շնեց:

Նա նրա ձեռքը զրամագլուխ տուեց,  
և, ինչպէս տեսանք, որդուն էլ ոտկեր-  
չու մօտ ընկեր-աշակերտ կարգեց:  
Այսպիսով ընկած Խաչօն բարձրացաւ,

շուտով : Ի զուր չէ ասած թէ օխառ  
ը տէրը զօրաւոր կ'անէն : Անթառեանի  
առեարական տան անուանն տակ ջա :  
ւահիրջութիւն մի ընդարձակ առնառուր  
սկսեց սոկերիչ խաչօն : Աղատ ժամա-  
նակին նա իրան համար երբեմն երբեմն  
և պահական արհեստով չէլ պարապում  
էր : Այդ բանը Գրիգոր աղան նրան  
թողլատրած էր, որովհետեւ զրանով  
ընկերութեան գործին ոշինչ վաս չէր  
հասնում : Ինչ էլ որ լինի, Անթառեանի  
արածը խաչօյի համար կրկնակի աղա-  
յութիւն էր : Չորս տարվայ ընթացքում  
սոկերիչը լաւ փող դատեցաւ ինքը և  
դատեցրեց Անթառեանին : Տարհկան  
հաշիմերը ընկերին հետ քննելուց յե-  
տոյ Գրիգոր աղան ամեն անգամ որ-  
դուն այս խրատն էր տալիս :

— « Տեսնում ես, Ենոն, թէ վարպետք  
ինչպէս կարողանսւմ է փող զատել,  
ինչպէս մէկին երկուս մեզ վաստակ-  
ցնում է . խլիր, աշխատիր շուշ խլիր,

նրա ձեռքի այդ մասանու ակր, ար-  
հեստըն : Չորս տարուց յահայ խաչօն  
մի սեպհական տուն և 25.0 ռուբլի ի-  
րան բաժին գրամագլուխ ուներ արգէն  
ընկերութեան մէջ : Խաչօն ակր խաչօն  
խանթի մէջի ակնեղէնները, որոնց  
այժմ Գրիգոր աղայի տան են : Խաչօյի  
հետ ընկերովի Երն նոյնպէս : Իրանք  
600 ռուբլի կ'ամենան : Ասած է : Երբ  
Աստուած տայ, ոյց ձեռքով կուտայ :  
Մարիաթունի առողջութիւնն էլ, բա-  
րերազդարար, մնծ մասամբ կազզու-  
րուած էր : Անթառեանի գաղթելը աշ-  
քի առաջ ունենալով ընկերները կամե-  
ցան միենանցից բաժանուիլը մի մեծ  
վաստակով անել : Ընկերութեան  
500.0 ռուբլի գրամագլուխի վրայ Անթառ-  
եանը կրկին 5000 ռուբլի ըմեր եկաւ և  
վերջին անգամ խաչօյին Կոստանդնու-  
պօլիս օլիրիար ճամրեցաւ : Այդ եղաւ  
գարնան սկզբին առ ծառան առ առան  
իրանից վերեկած 5000 ռուբլիի վաս-

տակը ոչ միայն հաւասար բաժին պէտք  
է լինէր Անթառեանի և Խաչօյի մէջ, այլ  
այս անգամ այդ գումարի հարիւրից  
երեսուն սովորական տոկոս ևս չը պի՛  
տի վերցնէր մեծահողի Գրիգոր-աղան:  
Ահա, թէ ինչպէս գոյացել էր այն 10,000  
ռուբլին, որի փոխարէն ակնեղէններով  
և գոհարեղէններով բեռնաւորուած ոս-  
կերիչ Խաչօն վերադառնում էր Կոստանդնուպոլսից:

Ըսւնը,

որը Խաչօն գնած էր, թէն  
ընդարձակ շինութիւն էր, բայց բաւա-  
կան չին, Նրան կարկատելու համար  
պէտք եղած ատազծները ձմեռուանից  
ոսկերիչը գնել պատրաստել էր, Վար-  
պետների հետն էլ արդէն սակարկել և  
փողի մի մասը նրանց վճարել էր Խաչօն,  
Տան նորոգութիւնը պէտքէ սկսուէր հէնց  
որ օրերը կ'ըացուէին, Վարպետներին  
հասանելի մնացած փողը ձեռնառձեռն  
Անթառեանին յանձնելով, արհեստա-

գործը նրանից ինպրած էր վարպետնե-  
րի վրայ աչք ունենալ և փողը շաբթէ-  
շաբաթ մասնատրել նրանց: Կարկա-  
տանքը սկսելուց առաջ ոսկերչուն ըն-  
տանիքը առժամանակեայ վարձած մի  
տան մէջ զետեղեցնելը, նրանց օրական  
ծախսի հոգալը, Գրիգոր-աղան իրան վը-  
րայ առաւ նոյնպէս, Բարեբաղդաբար  
այդ տարին օրերը շուտ բայց եղան,  
Ոսկերչու մեկսելից մի շաբաթ յետոյ  
վարպետները արդէն բանում էին նրա  
տան վրայ: Ընկերի ընտանիքին համար  
Գրիգոր-աղան Դիվան-եօլի փողոցում  
մի փոքրիկ տում վարձած էր: Մարիսա-  
թունի և Եսթերի մօտ որպէս աղա-  
մարդ և հոգու ընկեր ամեն գիշեր  
ննջում էր փոքրիկ կարօն, խանթի ա-  
շակերտը: Տան օրական ծախսերն էլ  
սրա միջոցաւ հոգում էր Անթառեանի  
որդին, Լոռնը, Լեռնը տամնեչորս տա-  
րեկան էր երբ նրա հայրը ոսկերչու  
հետ ընկերացաւ: Որպէս աշակերտ

փոքրիկ Անթառեանը չորս տարի շա-  
րունակ զնում գալիս էր սովորչու-  
տունը: Լաւ աշտկերտը իրան վարպե-  
տի տան տղան է: Լեռնը ոչ միայն լաւ  
աշակերտ էր, այլ դրանից էլ շատ ու  
շատ վեր: Նա ուկերչու ընկերն էր:  
դԱյ պատճառով թէ ուկերիչը եղած  
նրա կինը շատ սիրում էին Անթառ-  
եանին: Անթառեանը նոյնպէս փոխա-  
դարձարար:

Պատանին ուկերչու տունը միշտ նա-  
խագաս համարում էր հայրական տա-  
նիցը, մանտաւանդ ընկերութեան վերջին  
տարիներում, երբ իրան տարիքին հստ  
Եսթերն էլ հետզետէ մեծանում էր:  
Սիրահարութեան շարժառիթի մասին  
շատերը շատ բան են ասել կամ գրել:  
Ես միայն այսքանու եմ ասում, որ մա-  
տաղ սրտերի համար սիրահարութիւն  
ասածը ոչ այլ ինչ է: Կթէ ոչ յաձախ  
տեսակցութիւն: Նախնիք ասել են  
չը տեսածը, անձին կուսու-

թիւն է օրիա շատ խելացի անացուած  
է: Այս տեսակէտից նայելով հարցի վը-  
րայ արդեօք հարկ է ասել: Որ չորս  
տարի շարունակ մէկզմէկու հետ տե-  
սակցու Լեռնն ու Եսթերը չեն կարող  
չը սիրահարուել: Լեռնն ու Եսթերը  
սիրահարուած էին: Նրանք մասնաւուն ան-  
որմնք, մանաւանդ Ամօնը, սիրահա-  
րուած էր առանց հօր գիտութեանն ու  
հրամանին: — ահա այս է գարմանալին:  
Անթառեանները իրանց տեսակումը  
խելօք և հեռաւես են լինում: առհա-  
սարակ, բայց մի բան, ուր նրանց  
խելքից բարձիկ լինելը բացարձակաբար  
երնան է գալիս, այդ այն է: որ նրանք  
գրեթե ոչինչ ուչք չեն դարձնում իրանց  
ջահիների սրտի վրայ, Նրանք համո-  
զուած են, որ իրանց որդիքը ինչպէս  
դվառի, նոյնպէս և սրտով ծնողքին են  
պատկանում միանդամայն: Այսպէս  
նրանք ասում են, օրինակի համար:

թէ որովհետեւ կեռնը խելք ունի, գիտէ  
և հասկանում է, որ ինքը, որպէս  
յայտնի և հարուստ վաճառականի, ա-  
ղայի, որդի չէ կարող մի որեէ հասա-  
րակ արհեստաւորի աղջկայ հետ պսակ-  
ուել, հետեարար նա, կեռնը, չէ կարող  
իրան սրտումը և սէր տածել դէպի այդ  
աղջիկը, Ենթազրենք, որ կեռնը խելք  
չ'ունի, այդ բանը չէ էլ կարող մտա-  
ծել, բայց իրան հերթում գրիգոր-ա-  
ղան ինքը հօ այդ բանը լաւ գիտէ և  
հասկանում է, Ուրեմն կեռներին մը-  
նումէ անպատճառ սեպհական խելք  
ունենալ, իսկ եթէ նրանք այդ չ'ունին  
ծնողների խելքը հօ կայ ու կայ, Եւ  
մզ է ասում թէ մի կեռն կարող է մի  
Գրիգոր-աղայից աւելի խելք ունենալ,

Այսպէս է եղել և այժմես այդպէս է  
հայ Ենթառեանների հայեացքը իրանց  
գաւակների անհատական իրաւունքնե-  
րի մասին: Բայց Գրիգոր-աղայի և Ա-  
րէգնաղան խանումի նման չին մտա-

ծում ոսկերիչ խաչօն և սրա կինը,  
Մարիսաթունը,

Բարերար ձեռնտուութիւնը, որ Գը-  
րիգոր-աղան ցոյց տուեց դէպի ընկած  
ոսկերիչը, որդոն սրա մօտ ընկեր և  
աշակերտ կարգելը, մի քանի տարվան  
մէջ խաչօյին առաջ գալու այնքան մի-  
ջոցներ ընձեռելը, ոսկերչու և սրա  
կնկայ համար շօշափելի փաստեր էին  
թէ ուրեմն Գրիգոր-աղան մտադիր է  
ժամանակին Եսթերին էլ իրան հարս  
ընտրել: Անթառեաննը իրան միւս բա-  
րեմասնութիւններով մի գեղեցիկ բա-  
ցառական էր Երզուրումի աղանների  
մէջ, ինչի՞ն չ'ենթազրել թէ նա բացառիկ  
և օրինակելի հայր կը դառնայ և որդուն  
համար ամուսին ընտրելումը, Եսթերի  
ծնողքը այսպէս մտածում էին ինքն-  
իրանց, Ընկերութեան վերջին տարի-  
ներում նրանք, մանաւանդ Մարիսա-  
թունը, արդէն կեռնին փեսայ էր երե-

ւակայում իրան համար և գոքանցի  
նման էլ վարդում պատահու հետ ինչ  
ասել կուզի, որ Լեռնը Մարիսաթունից  
յետ չէր մեռում այդ բանում: Նա ինքն  
էլ վաղուց ինքնիրան Եսթերին ապագայ  
կողակից էր նշանակել: Բայց այդ ա-  
մենը ի հարկէ լինում էր միմիացն արր-  
տերի լուռումունջ բանակցութիւննե-  
րով:

Խաչօն մանաւանդ մի խօսք անգամ  
չէր ուզում ակնարկել այդ մասին ոչ  
միայն Լեռնին ու Ասթերին, այլ նաև  
կնոջը, Մարիսաթունին:

Մարիսաթունը իրան հերթում չէր  
համարձակփում իրան որտի գաղտնիքը  
մարզուն առաջ մերկացնել, բայց մըտ-  
քումը նա շատ անգամ ծիծաղում էր  
խաչօյի վրայ: — Ասոծուն էլ աչքով տե-  
սած չենք, ինքիրան ասում էր Մար-  
իսաթունը, բայց խելքով գտել ենք և  
հաւատում: Յետոյ մայրը քաշում գըր-  
կում էր Ասթերին և չերմ համըոյներ

առաջին նրասերեսին, առանց ոի հարկէ,  
թացատրելու այդ համբոյրներին պատ-  
ճառը: Բայց եթէ մայրը բացատրում  
չէր, Եսթերը հօ համկանհամ էր զի-  
տէր: Լեռնի նշանութիւն ախալցիսցի աղջ-  
կայ հետ, երկու ամսից իվեր, միան զա-  
մայն ապացուցեց այդ հաշիւների մի-  
անգամայն սխալ լինելը:

Մարիսաթունը այն ժամանակ զգաց  
որ ինքը գծուրը չը տեսած ըսրվիկցած  
էր:

— Ինչպէս էլ յիմարացայ և աղջկաս  
թոյլ էի տալիս, որ օտար տղայի հետ  
նստի ու վերկենաց, մորմաքալով իրան-  
իրան ասում էր Մարիսաթունը: Ասթե-  
րին նա էլ չէր համրուրում: Այդ դառն  
հանգամանքում եթէ կար մի բան, որ  
փոքր ինչ միսիթարական էր, այդ այն  
է, որ Մարիսաթունի ներքին խորհար-  
ծուրդը ոչ ոք չը գիտէր:

Թէ իրան և թէ Ասթերի յարաւերու-  
թիւններում դէպի կեն Անդառեանը

Մարիսաթունը որեէ անպատռութիւն,  
որեէ անպատչաճ վարմունքի տեղիք  
տուած չէր ամենեին։ Նրա ծանօթնեւ  
րիցը ոչոք չէր համարձակվում որեէ  
ծուռ միաք տանել ոսկերչու կնկայ կամ  
նրա դաստիարակած աղջկայ վրայ։ Ոչ  
ոք չէր համարձակում ասել թէ Ես-  
թերի և աչքերի վրայ թերթենիներ  
կան։ Մարիսաթունի միակ երկիւզը  
Լեռնիցն էր, որը նշանուելից իփեր ըն-  
կեր-վարպետին տունը երթենելուց  
միանգամայն դադարած էր։

Հենց ահա այդ մէկ բանիցը Մարիսա-  
թունը երբեմն-երբեմն բաւականին շը-  
փոթվում էր։ Նա կարծում էր, որ  
Լեռն Անթառեանը նշնուելուց առաջ  
նկատել է գուցէ մի որեէ անպատչաճ  
վարմունք դէպի ինքը և դադարել վար-  
պետին տունը այլ ես այցելելուց։ Եթէ  
իրաւի մի այդպիսի բան երբեցէ, չորս  
տարուայ ընթացքում, եղել է և հիմայ  
Լեռնը վերկենայ և այդ բանը հրատա-

բակէ, այն ժամանակ այն ժամանակ  
ոսկերչու ընտանիքին այսքան տարվայ  
անրիծ, մաքուր անունը անշուշտ կ'ա-  
րատաւորուին այդուղի առաջնորդ է։  
Մարիսաթունի համար այդ հօ կա-  
տարիալ ման կը լինի։ Բայց ինչի, ա-  
խըր այդ խեղճ կինը կամ նրա աղջիկը  
հօ ոչինչ մեղք չ'ունին։ Այդ բանը  
Մարիսաթունը ինքն էլ չառվաւ զիտէ,  
զգում է, բայց և այնպէս նա յաճախ  
յաճախ շփոթվում է։ Ախր կտն մեղ-  
քեր, որոնք մեղք են համարվում ոչ  
միայն այն ժամանակ, երբ գործվում  
են, այլ ն երբ մոքից անդամ անցկաց-  
նվում են։ Մարիսաթունը Եսթերին այլ  
ես չէր համբուրում։ Այդ առաջնորդ  
առաջնորդ մասն առաջնորդ իւրաքանչ  
նշնուելուցը ի վեր վարպետին տու-  
նը չ'այցելելուն Լեռն Անթառեանն էլ  
իրան պատճառները ունէր։ Այդ օրից  
ի վեր պատճանին երես չ'ունէր իրան,  
և Մարիսաթուն-արլային և Եսթեր քրոջը

Երեսին ուղիղ մտիկ տալու . Երկուաշ  
միս շարունակ այդ միտքը տանջումէր  
Լեռն Անթառեանին և Նառչ միտ և հնար  
չէ գտնում ցրուելու իրանից այդ միտ-  
քը Հայրը նրան պատուիրեց այժմ  
ուկերչու տունը գնալ և Անոնը պէտք  
է գնար, բայց հեշտէ ասել գնալ, բնչ  
երեսով, որ ճակատով կարօյի շալկի  
բեռը պատանին մօրը յանձնեց, վեր-  
ջնիս արած մի քանի հարցերին վայր  
ի վերոյ պատասխան տալուց յետոյ,  
Անոնը դէպի Դիվան-եօլի փողոցը ուղ-  
ղեց իրան գտնողադ քայլերը, Նա մտա-  
տանջ և յուղուած էր երեսում, Երա-  
գլուխը — ինչպէս առում են — առաջիցն  
էր գնում: Սիրտ ու զլուխ երկար ժա-  
մանակ մաքառում էին մէկզմէկու հետ,  
Պատանի սիրահարը մի փոքր յետոյ  
ճակատ առձակատ պէտք է կանգնէր  
Եսթերի հանդէպ, որի վրայ սիրահա-  
րուած լինելը նա այն ժամանակ լաւ  
իմացաւ, երբ արդէն ուրիշի վրայ նը-

շնուած պրծած էր Վլահի և ձեռքերի  
մեքենայական չարժումներով վորքիկ  
Անթառեանը իրան-իրան չափում և ու-  
չափչփում էր ճանապարհին: Յան-  
կարծ նա սթափեցաւ:

Մի գիւտ անող մարդու նման պա-  
տանու երեսի տիպութիւնը ուրախու-  
թեան փոխուեցաւ յանկարծ: Քայլերը  
շտապացրեց Անոնը:

Մի քանի րոպէից յետոյ նա արդէն  
Գիվան-եօլի փողոցումն էր: կէս օրը  
մօտ էր: Դուռ ու զրացի ամենքն էլ  
զբաղած էին իրանց տնային գործերով:  
Փողոցում ոչ ոք չը կար: Անոնը սկեր-  
չու տունը մտաւ նշնուելուց յետոյ  
այս առաջին անգամը: Մարխաթունն  
ու Եսթերը տնային գործեր էին անում:

Աղջիկը շապիկ էր կարում: մայրը  
գուրրա գործաւմ: Երկուսն էլ իրանց  
ճանապարհորդ այր ու հօգսն էին  
քաշում: Խաչօյի զլխին եկած փորձան-  
քի մասին, ինչպէս երեսում էր, նրանք

դեռ ևս տեղեկութիւն չունէին. Չորս  
պատի մէջ մշտապէս նոտած կնիկ ար-  
մատները ժբառեղից կարող էին լսել  
իսկոյն փողացի լուրերը. Աւ իսկզերի  
համար ինչ լսելու բան էր:

Մօրիցը առաջ դրսի բակում Լեռնին  
տեսնելով Եսթերը յանկարծ շառագու-  
նեցւ. Օրիորդը նոտած առղիցը ան-  
զգայաբար նախ՝ մի խղճահար և ապա  
մի արհամարհալից հայեացք ձգեց Ան-  
թառեանի վրայ և իսկոյն բարձրացաւ  
տան սերիւն. Օրիորդի այդ հայեացքնե-  
րը կարծիս սպանեցին Լեռնին. Բակի  
միջին նու քարացաւ մնաց. Մարիսա-  
թունը գլուխը բարձրացրեց, որպէսզի  
աղջկան հեռանալուն պատճատը իմա-  
նայ. Նրա աչքին հանդիպեցաւ Լեռնը,  
Ոսկերչու կնիկը մէկ Լեռնին նայեցաւ,  
մէկ Եսթերին կերպարանքը դիտեց և  
յանկարծ փղձկաց. Բռնութեամբ աչ-  
քերի մէջ խեղղելով այնտեղ լճացող  
արտասունքները վերջապէս Մարիսա-  
թունը Անթառեանին ներս հրաւիրեց:

Պատահնին, ինչպէս մի կատարեալ  
ժմահապարտ, ներս մտաւ. Հարց ու բա-  
րով երկու կողմիցն էլ մոռացած էին  
կարծես:

— Եկայ ձեզ իմաց տալու, արլա-  
ջան, վերջապէս կմիմաց Անթառեանը,  
որ ձեր տունը գալ շարթու պատրաստ  
կը լինի. Պատրաստուեցէք շուտով  
փոխադրուելու, Այս մի սուտ էր, որ  
պատահնին ձեռաց յօրինեց:

— Վարպետիցդ ինչ լուր, նամակ  
չը կայ, երբ է գալու, հարցրեց ոսկեր-  
չու կնիկը.

Հօր յանձնարաւթիւնը Անթառեա-  
նը նոր մտարերեց. Աա պատաժանեց:

— Վերջին նամակիցը երեսում է, որ  
նա կողով... որ նա դեռ Տրավիկո-  
նումն էր Քիչ էր մնում թէ «կապեր-  
տը ջուրը աւար» Լեռնը, բարերազդա-  
րար նա չուտ կծկեց. Մարիսամունը,  
ոչ Էլ նրա աղջիկը, բարերազդարար  
մուսի չընկան:

— Զերոնք բնչպէս են, զրիգոր-ա-  
ղան, Արէգնաղան խանումը, լաւ են,  
էլի հարց առաջարկեց Մարիսթունը.

Եսթերը լուռ ու մունջ նստած իւր  
կարն էր անում:

— Փառք Աստծու, շատ լաւ են, աբ-  
լա: Զեղ յատուկ բարե ունին նրանք,  
իրեւ պատասխան Լեռնի այդ խօսքե-  
րին Եսթերը քամակ արաւ:

— Շնորհակալ ենք, որդի, Բարե  
դրկողն էլ ապրի, բերողն էլ: Ասումես  
թէ տունը շուտ պատրաստ կը լինի,  
շատ բարի: Եթէ վարպետ Տրապիզո-  
նումն է, մինչ գալ շաբաթ ուրեմն նա-  
ինքն էլ վրայ կը համնի և մենք այն  
ժամանակ միր տուն կը փոխադրուենք,  
ասաց մարիսթունը:

Լեռնի համար այդ նշանակում էր  
թէ՝ գնա, էլ մի կանգնի, բայց Լեռնը  
գնալ չէր ուզում, Երկու ամիս չը գա-  
լուց յետոյ պատանին վերջապէս իրան  
սիրեկանին մօտն եկած էր, ճանապար-

հին իրան համար որոշմունքներ արած  
էր: պէտք էր յայտնել այդ որոշմունք-  
ները: Ուղիղը խոստովանած Մարիս-  
թունի իրան սրտովն էլ չէր Լեռնի  
շուտ կնալը, Ոսկերչու կնիկն էլ ախր  
իրան փորացան ունէր:

Անթառեանի որդին երեսը պնդաց-  
րեց և առանց հրաւերի նստեցաւ իրան  
երեակայեալ զռքանցի հանդէպ, Եսթե-  
րը նստած տեղումը դարձեալ մի ան-  
հանգիստ շարժում արաւ:

— Վարպետիդ գալուցը յետոյ, Լե-  
ռն-աղա, զուք էլ, հարկաւ, շուտով կը  
գնաք Ախալցխայ, հարցրեց Մարիս-  
թունը և բնչպէս ասում են գոյն  
տուեց ու գոյն առաւ: «Լեռն-աղա» բա-  
ռը Մարիսթունի բերանից Անթառ-  
եանը առաջին անգամ լսում էր: Ա-  
ռաջ նա Լեռնջան էր, Նշանակում է  
այսուհետև Անթառեանը ուկերչու ըն-  
տանիքի համար օտարացած պրծած է:  
Այդ միաքը մասու չափ հարուածեց  
պատանու փափուկ սիրաը:

— Ծնդհակառակը, արլաջան, մենք  
այլ ես չենք գնում Սխալցիսայ, Գլուս-  
տրապէս զրա համար էլ ես հէնց այս-  
օր եկայ, որ ձեղ աւետիս տամ, Հանա-  
պարհում հնարած ստերը Անթառեանը  
սկսեց մի առ մի առաջ բերել Եսթե-  
րը գլուխը վեր բարձրացրեց և բամա-  
կը կամացուկ շուռ տուեցաւ մարտադ  
ճառ — Ո՞նց թէ այլ ես չեք գնում, ինչ  
ես ասում, Լեռն ի՞նչ խարար, որդի:  
Ոսկերչու կնիկը կամաց կամաց վափ-  
կանում էր կարծես:

— Խաբարը այն է, արլաջան, որ  
նշանածն, Գշխուհին, մեռած է, և ու-  
րեմն մեղ հաւար աւելորդ է Երզուրու-  
մից հեռանալ:

— Ո՞նց թէ Գշխուհին մեռած է.  
ինչ ես ասում, Լեռն ջա...ն... լեռդ  
աղջիկ... իրաւ ես ասում թէ...

— Բաս զու կարծում ես թէ կա-  
տակ եմ անում, Եւ ինչ կատակի բան  
է: Կարը Եսթերի ձեռքիցը վայր ընկաւ-

մեքենայաբար, Մարիսաթունը աշխա-  
տում էր ծածկել իրան զգացած ներ-  
քին ուրախութիւնը:

— Ինարիէ, սրդի, ինչ կատակի բան  
է, լեռդ աղջիկ, ու մմուրազ Դշխուհի:  
Լեռնջան, (ջան ու հաջանը էլի առաջ  
եկաւ Մարիսաթունի բերնում) այդքիզ  
ով ասաւ... լեռդ աղջիկ...:

— Հայրս նամակ ստացաւ:

— Վայ կուրանամ ես..., լեռդ աղ-  
ջիկ, Մայրդ լոեց այդ բօթը, Լեռնջան,  
լեռդ Գշխուհի...

— Նրանից առօտամանակ հայրս ծա-  
ծուկ է պահում այդ լուրը:

— Երբ է մեռել... լեռդ աղջիկ,  
ինչից է մեռել... վայր հարիկ մարի-  
կին զելսուն... լեռդ Գշխուհի...

Դրսի զուռը այդ միջոցում կրնկա-  
հան բաց ելաւ յանկարծ և փողցից  
անցնող զօրքի ձիերու արսիփիւնը լուսե-  
ցաւ: Զօրքի առաջից, ետքեց և կող-  
քիրից վազվում էին մանուկներ:

Այդ մանուկներից մինն էր, որ ոսկեր-  
չու տան դռան խփած բաց արած էր:

Մի ներքին, անախորժ նախազգաց-  
մունք իսկոյն Մարիսաթունին դուրս  
մղեց: Անթառեանը այլայլուած զոքան-  
չի ձեռքիցը բռնտծ չէր կամենում  
դուրս թողնել նրան: Նա ինչ որ կըմ-  
կում էր ոսկերչու կնկան միամտաց,  
նելու համար, Դա աւելի վատ: Մար-  
խաթունը աւելի շփոթեցաւ: Նա թափ  
տուեց Լեռնի ձեռքերը և մի րոպէում  
ինքնիրան դրսի դուռը ձղեց: Եսթերը  
կամեցաւ մօր օրինակին հետեւել, բայց  
պատանու զօրեղ բազո կների տակ օ-  
րիորդը թուլացաւ, բակումը մնաց: Ի  
դուր Անթառեանը կանչում էր Մար-  
խաթունին տուն յետ դառնալ: Ոսկեր-  
չու կնիկը այդ միջոցին այլ և այլ հար-  
ցեր էր առաջարկում վողոցումիւնած  
հարեանուհիներից:

— Քա, ի ոէր Աստուծու, ինչ խա-  
րար: Զմրուտ-չեքէր, չեղնար, Մարճ,

քմա զօրքը ուր է կնում: Տուտու,  
Արբուն տուտու, քմա մէկ ինձ էլ ասա-  
ցէք, ինչ է պատահել:

— Զորնամ ես, Մարիսաթուն իբաւ,  
քո մարդն էլ այդ կարաւանի միջին  
պէտք է որ լինի մի կին մի կողմից  
փնթփնթաց: Ոսկերչու կնիկը թուլա-  
ցաւ, ճնգները թուլացան և նաևավայր  
քնկաւ:

— Մի կողմից հարևանուհիները, միւս  
կողմիցը Լեռնն ու Եսթերը Մարիսա-  
թունին օդնութեան հասան: Զբօքը ար-  
դէն Ռիփան-Կոլի փողոցի ծայրում էր:  
Հարեանուհիներից շատերը լալագին աչ-  
քերով բարի ձանապարհ և յաջողու-  
թիւն բարեմազթում էին զօրքի համար:

Լեռնին և Եսթերին տանից դուրս  
թռչելը մի մեծ սխալմունք և միանգա-  
մայն անխելքութիւն էր: Բայց այդ-  
պիսի րոպէներում ուր մարդու գլխին  
կարող է խելք մնալ: Մարիսաթունին  
օդնութեան համար հարեանուհիները

Տէնց որ տեսան Եսթերին օտար աղայի հետ, կարծիմ կայծակնահար եղան իու շոր ու խոժոռ հայեացքներ ձգելով ջահիլների վրայ հարեանուհիները առաջնց ձայն ու ծպտունի սնկերչու դանիցը հեռացան Լոնն ու Եսթերը Մարիսաթունին քաշաքաշ տուն տարան և աշխատում էին ուշքի բերելու Եսթերը մօր երեմ ի վեր ջուր էր սրբու կում, իսկ Լոնը խանձած վետուրը ուշագնացի քնթին զէմ տալիս։ Մարիսաթունը սթափեցաւ, ուշքի եկաւ կաւ Ոնթառեանը աշխատում էր մի ամտացնել նրան, հարեանուհուց լած խօսքը սուռ հանել Մարիսաթունը լաւ լազին աչքերով աղաչում, աղաղատում էր իրան փեսից զնալ և խաչօյինամակը շուռք ու տրպէսզի Մարիսաթունը իրան աչքերով տեսնի, Եսթերին կարգացնել տայ և նամակի բու վանդակութիւնը իրան ականջնեռվը լսէ, Լոնը խօսք տուեց և մեկնեցաւ

— Զը մուաննն, անպատճառ բերեմ ի հրան հերթում Եսթերը Աս խընդու րեց Լոնից մաւանիմ չե մի Անպատճառ, անպատճառ Եսթերը ջան բոզաց ու մայնուրում մօչան — Ե՞րբ, ո՞ր ժամանակ դժմոն մայն — Երեկոյեան, երբ վաճառասենեալ կը կը կողինք ապաց ու մայնուրում մայն Մօս մի ամիս կար, որ սոկերչուրը ընտանիքը Գիշան և նօլի փողոցումը կերպ նում էր Մարիսաթունին ու Եսթերը այդքան մի ջոցում իրան նորահարեա նուհիներից շատերին հետարդէն ծառ նօթացած ու բարեկամացած էին, Ոյդ հարեանուհիները դիտէրն, համովուած էին, որ սոկերչուր կինը մի համեստ բարերարոյ կին է, որ նա իրան աղջ կան լաւ կրթել ու գաստիարակել է ու Ոչոք հարեանուհիներից մինչ օրս գեռ տեսած չեր Եսթերին դռան շէմքից եռ գլուխը տան զանից զուրս բերելիս

Մարիսաթունը դեռոչ մի բանով ցոյց  
տուած չէր իրան նոր հարեանուհին է,  
թէ Անթառեան Գրիգոր աղային  
նման մարդուն ընկեր է իրան մարդ  
խաչօն, Գոռողութիւն ու քօքօղու-  
թիւն չ'ունէր ամեննեին Մարիսաթունը:  
Նրա թէ կենցաղավարութիւնը և թէ  
խօսակցութիւնն ու վարմունքը հասա-  
րակ արհեստաւորի կնկայ վարմունք էր  
գարձեալ, Մայր ու աղջիկ սուսիկ  
փուսիկ ապրում են իրանց համար,  
ուրիշի ծալին, ճամին, հաւ ու վառեկին  
քշո անգամ չեն ասում, Զը նայելով  
իրանց համեմատաքանիք բաղդաւոր վի-  
ճակին մայր ու աղջիկ աշխատանքից  
ձեռք չեն քաշում, Երկու երեք օրէնը  
մի անգամ, նրանց երթից հաղիս հաղ  
մի բարակ ծուխ է գուրս գալիս, մսի  
ու իւղեղէնի ճենձահոտ տալիս, բայց  
թէ միւս օրերում նրանք ինչ են ու-  
տում, ինչ խմում, կռւշտ են մնում  
թէ քաղցած, ոչ ոքին ոչինչ չեն ա-

սում, ոչոքից չեն գանդատկում: Ու-  
րիշների նման զուկցի զուռ ու երթիկ  
ծեծելը չը զիաեն, բօշայութիւն անել  
չեն սիրում, բամբասանքից բոլորովին  
խորչում են:

Մարիսաթունին ու նրա աղջկան այս-  
պէս ճանաչած և ընդունած էին նրանց  
հարեանուհիները մինչ այն դժբաղդ  
օրը, երբ առաջին անգամ տեսան առ-  
գապ աղջիկ Յսթերին օտար և ռազապ  
տղալին կշտին, Ակած այդ բոպէից  
Մարիսաթունի հարեանուհիները միան-  
գամայն դայթաղեցան, Լրգուրումի  
հայ կանանց խիստ առաքինութիւնը  
վիրաւորեցաւ այն անշարոյական տե-  
սարանով, որը մի քիչ առաջ ցոյց  
տուին նրանց անգոյշ ջակիները:

— Բայց, հայրիկ, Լեռնի և Յսթերի  
վարմունքում, ոչինչ անբարոյական  
բան չը կար ախր էն, ասացի ես իմ  
ծերունուս, Ծերուկմ ժպտաց:  
— Բարոյականութիւնը մի շատ

պայմանական բան է, նա ինձ ասաց  
Ամեն մարդ և ամեն հասարակութիւն  
իրան ուղածին և զիտցածին պէս է  
մեկում բարոյականութիւնը, ինչ  
զարմացք, եթէ Մարխաթունի հարեա-  
նուհիներն էլ իրանց ուղածին պէս մեկ-  
նէին, Յո ոչ մի հիմք չեմ գանում այդ  
մասին նրանց զատապարտելու, ինչ և  
իցէ:

Զմբուտ-շէքերը, Սրբուն-տուառն,  
Մարօ-արլան, Հեղնար-բաջին և միւս-  
ները, կառես մէկոմէկու ձայն տալով,  
պառաւ Օդիդայի տան բակումը հաւա-  
քուեցան իսկոյն և սկսեցին իրանց դա-  
տովաւթիւնները ոսկերչու ընտանիքի  
մասին, Կնանիքներից մի քանիսը ձա-  
նաչեցին Լեռն Անթառեանին, իմացան  
որ այդ տղան մի ախալցիսացի աղայի  
աղջկայ վրայ նշանած է, բայց կնանիք  
չը զիտէին և չ'իմացան թէ Լեռնը ոս-  
կերչու վաղուցվայ աշակերտն ու բն-  
կերն է, թէ նա շատ անդամ ոսկերչու

առանը եկել, զնացել և Մարխաթունի  
ու նրա աղջկայ հետ շատ անդամնիստ  
ու կաց է ունեցել, երբ սրանք կե-  
նում էին իրանց ուղիւական անում  
— Քամ, մեղմաց, մեղմաց, օտար, և էլ  
նշանած, աղային օրով-ցերեկով տան  
ներս առնել ու դուռը յետ անել, կող-  
րել, թիւ, անամօթ Մարխաթուն, ա  
սում էր Զմբուտ-շէքերը:

— Օտար աղային իրան նշանածիցը  
յետ անել և նրան իրան աղջիկը տալ  
հօ չէ ուղում այդ լկով կինը, վրայ  
էր տալիս Սրբուն-տուառն:

— Սրբուն-տուառն, չը տեսար արդ-  
եօք թէ այդ կախղլում Մարխաթունը  
Երբ և Բնչպէս ներս առաւ օտար աղ-  
ջային, Մարօ-արլան հարց առաջար-  
կեց,

— Գետինը մոմող Յսթերի գոյնը  
կատարեալ ճակնդեղի գոյն դարձած  
էր: արամարանեց Հեղնար-բաջին:  
— Կնչի աղապ աղջկայ մեղքը տո-

նում էք, աղջկերք, կարելի է թէ...  
ինքը Մարիսաթունը... այ նա գետինն  
անցնի... իրան հասակիցն ու աղապ  
աղջկայ ներկայութիւնիցը դոնեա չէ  
տմաշում... մնամօթը... պառաւ-0զի-  
դան աղապ աղջկան պաշտպանել կա-  
մենալով, բոլոր յանցանքը նրա մօր  
շնքից կախեց, Պառաւի խօսքերիցը,  
ասաց ծերուկս, դու անշուշ մակա-  
բերեցիր, որ իրը թէ Մարիսաթունը...  
— Զազիր պառաւ, ընդհատեցի ես  
ծերունու խօսքը,

— Քեզ հետ համաձայն եմ և համա-  
ձայն չեմ, ասաց ծերուկը, Բայց մենք  
մեր պատմութիւնը շարունակենք:

ԺԱ.

Երեկոյեան ժամերգութեան ժամանա-  
կըն էր, Երգուրումի ժամասէր գեղեցիկ  
սեռը ձիւնի նման սպիտակ էլքամնե-  
րում պլլուած, ամեն մի փողոցից, ա-  
մեն մի տանից շարունակ դուրս գալով  
գնում էր դէպի եկեղեցիները, Այս և

այն փողոցում, այս և այն հրապարա-  
կում բարեկամ ու աղգական մէկզմէ-  
կու հանդիպելիս՝ խսկոյն ընկերանում  
էին և ոմանք փափալով, ոմանք խօ-  
սակցելով, այլք կչկչալով ու բամբա-  
ռելով, աշխատում էին ճանապարհների  
երկարութիւնը անզգալի անել, Մի-  
բարձրագիր տեղից եթէ մինը այդ ժա-  
մանակ հեռուկից էրդուրումի վրայ մը-  
տիկ տար, սրա հրապարակների վրայ  
լողացող ու շրորւող կարապների  
խմբեր չառ էին հանդիպում նրա աչ-  
քին:

Եսթնիին իրան հետ վերցրած Մար-  
իսաթունն էլ տանից գուրս եկաւ եկե-  
զեցի գնալսւ, Նրա վշտահար և ամօ-  
թահար կերպարանքը, Նրա հոգեկան  
զրութեան ձչզրիտ պատկերը արտա-  
յայտում էր, Ուկերչու կնիկը շտա-  
պում էր դէպի Աստուծոյ տունը որ-  
պէս զի այնտեղ Մարիկմայր-Աստու-  
ածածնի փէշն ընկած, Երեսն ու աչ-

— Աքերը և երածահամապուրի Սարգսիթ պատա-  
կերին դէմ առւած, իրանի մարդու հա-  
մարանի մարդանեան վաճառագույն հայցէ,  
ոսկ Հէնց որ Մարիսաթունը առաջ առան  
շմից զուրս գրեց, ամեն իսղմից ալը-  
դոսուած փախոցն ու քչքչոցը համուած  
Վէին նրա ականջին ու իրվոն եօլիի հայ  
ատիկնայք հիմոյ իրանց ամանաշմբերի  
պայտան առանձին Արգոյք զոյդ կանցնած  
Ալբացնում էին Մարիսաթունի վրայ ա-  
րած աղապողութիւնների պակասը,  
— Ալայ հողեմ են քո զլուխը ան.  
երես հիրկ, առում էր մի կիս, իրան  
մտիկ զրան, հիմու էւ իրը թէ վեր է  
կացել ու հեկեղի զնում մուսաւ  
ունա — Սուրբակեղեցին խռով միայ զըլ.  
մխիդ ու արեիդ, լկտի, անսամօթ, ա-  
սոսոմ էր մին ուրիշը այս մասնույթ  
— Հասարակութիւնը օրուեմ, առաջապ  
աղջկան վեր առնել և եկեղեցի տանել,  
մեղմայ մեղմայ մեղմայ սա էլ նոր կարգ,  
հոր կանոն, վուշարե Մարիսաթուն.

— Գարման բաջի, Գարման բաջի, ոռու  
մէկ դրա աներես աղջկանը քալուած.  
քին ու կոարբուածքին թամաշա արա,  
դրա հագուստ ու կապուստին մտիկ  
արա, և հարկէ Անթառենց Գրիգոր-ա-  
ղայի նման վաճառականի տղային ծա-  
նօթն ու մտերիմն է... հը, բօյ ու  
բուադ չը վերգայ, կոկորդիլօս:

— Թոն, քնյուս, թող զրանց, Դրանց  
վրայ մտիկ առան անգամ մահացու  
մեղք է, Տեսնում չես միթէ թէ այդ  
օձի ձադ աղջիկը ոնց էյրամը դիսմամբ  
կարձ է բանել, որպէսզի զողնոցի ու  
խրսի ծայրերը աղամարդիկ լաւ տես-  
նեն... վնյոյ, վնյոյ, վնյոյ մեր օրին ու  
արեին...

— Կախ վլուխ, կախ վլուխ Մար-  
իսաթուն, տեսէք թէ ոնց ինքնիրան  
սուտ խլութեան առւած, ուշք անգամ  
չէ ուզում զարձնել լսածներին. Հը,  
մենողը մանես, աներես, Քրիստոսին  
գամ զարնող...

— Առաջին քամ, աղջին են այդ աղջին առաջին անդամննեմ տեսնում էնչպէս էլ սիրուն է եղել, անպիտանը, միտունանը, անպահանը և առաջին աղջին էլ սիրուն սիրան սիրուն էլ սատկեն, արևամեռը, Արմօք-զարմօք բնաջինը մինիւն զայն անձամ

— Քամ, նրան համար իմ մարդը առումէ թէ ուկերիչը մի քանի տարումը այսքան ու աշնքան առաջնացաւ, և հարկէ... Բնաչ ասել կուզէ... Մարիֆաթը ուկերչուն իրանը չէ այլ նրա խաթուն կնկան ու չնորհալի աղջկան, վերնագ, երկուող էլ և եթ միասին վերնագ այս աշխարհից, մնամօթ լկաիներ:

— Երբ ուկերիչը սազ սալամաթ գարձաւ, ասելու է նրան, որ այսուհետեւ իրան գգակը բարձր, մի քիչ էլ բարձր ծածկէ, Այդ տեսակ տան տղամարդը ընտանիքն երեսը պահուելու առմանիկ չը լինի:

Այս և այսքան բարոյական ծանր հարուածների, այդքան լիրաւորական նախատինքների դէմ իրանց աչք ու ականջը խցած Մարիսաթուն ու Յաթերը՝ ինչպէս ասում են — բալորպին խելքարժուժ եղած, վերջապէս եկեղեցի հասան: Մայր ու աղջիկ հինց որ աշխատում էին բազմութեան միջից անցկենալ գնալ իրանց տեղը, մէկ էլ տեսնես մի պառաւ կին փռաւով ու ֆշալով թողեց, վակոյն եկեղեցին և գործ զնաց: Իտ մեր ծանօթ Օդիդաանան էր, չինաւուրց պառաւը չէր կարող ոչ տեսակ, իրան կարծիքով, նոր Մազթազենացիների հետ, Աստծուտան մէջ միասին մնալ և աղօթել: Ճանապարհին պատահով ծանօթ կնանիքներին, Օդիդան միառամի պառաւում, էր իրան Շատամ կիսատ թողնելուն պատրաստը: Այսպէս ահա, մի քանի ժամում, մի քանի օրում, ողջ կրզաւում մէջ

խաղք ու խայտառակ նղաւ ոսկերչու  
սլարկերշտ ընտանիքի անունը, Փողոց-  
ների մարդկանց, մանուկների, սրճա-  
րան, բաղնիս և եկեղեցի այցելողների  
խօսակցութեան զվաւոր նիւթը, նը-  
րանց բերանի ծամելու մաղտաքը, խեղճ  
խաչօն և նրա կինն ու աղջիկն էին մի  
ժամանակ:

Ժ.Վ.

Երկու ամիս չարչարուելուց յետոյ  
Լեռն Անթառեանը զանազան ստեր հը-  
նարելով հազիւ հաղ առիթ ունեցաւ  
Եսթերի և նրա մօր առաջ արդար դու-  
րըս գալ, և ահա հանգամանքները դար-  
ձեալ չուռ. եկան, իրան անզգոյշ վար-  
մունքով պատանի սիրահարը փոխանակ  
յօնքը դրատելու, ինչպէս ասում են,  
աչքն էլ հետը հանեց: Դիմանեօլի հայ  
տիկնանց կողմից իրան վրայ տեղացող  
հայհոյանքներն ու նախատական խօս-  
քերը—երբ նա դուրս գնաց ոսկերչու  
տանից—պատանուն այնքան չէին տան-

ջում, որքան այն միտքը թէ ինքը Բնչ-  
պէս պիտի կարողանայ խաչօյի նամա-  
կը հօրիցը ստամալ և տանել ցուց տալ  
Մարխաթունին ու Եսթերին, Այդ նա-  
մակի գոյութիւնն էլ գեռ նա հարց էր,  
եթէ բանից դուրս եկաւ որ այդպիսի  
նամակ չը կայ, եթէ—որ շատ հաւա-  
նական էր—Գրիգոր աղան չը կամնցաւ  
այդ նամակը Լեռնին յանձնել, այն ժա-  
մանակ հօ Լեռնը կատարեալ խաբերայի  
մինը դուրս կուդար ստերչու ընտանի-  
քի աչքում: Զանազան մոքեր էլի  
խուզիւլ սկսան Լեռնի հոգին: Նա տուն  
հասաւ: Դեռ ևս հայրը եկած չէր:

— Ի՞նչ կայ, Լեռնջան, հարցուց Ա-  
րէգնազանը զայրացած որդուցը, ինչի  
նեղացած ևս այդքան, որտեղից ևս զա-  
լիս:

— Եսթերի կշաից, կոշտ ձայնով  
պատասխանեց Լեռնը:

— Եսթերի... Եսթերն ով է... հա,  
ընկեր վարպետիդ աղջկայ համար ևս  
ասում:

— Այս, նրա, Եսթերի, համար եմ  
ասում, Արէզնաղան խանումը մի տե-  
սակ եղաւ, բայց ինչպէս ասում են —  
իրան-իրան սուս է ձեացրեց: Ես ա-  
սու:

— Անքաղաքավար, այդքան թանն  
էլ գեռ ես չը դիտես, որ ամեն մար-  
դու տոսնը այդ տան աղամարդու, շատ  
շատ տիեզնոց, անունով միշպում է,  
Մարիսաթունենց ինչի գնացիր:

— Հայրս ուղարկել էր:

— Ինչի:  
— Բան ասելու:  
— Ի՞նչ բան:  
— Վարպետիս մասին միամտութիւն  
առաջու:

— Ո՞ւմ:

— Պատերուն:

— Այ տղայ գժուել ես, ինչ խաբար:

— Ինչի դժուել եմ, բաս դու չը  
դիտես թէ միամտութիւնը ունի են  
տալիս, ի հարկէ ոչ պատերուն, այլ  
ճանապարհորդի ընտանիքին:

— Լաւ, լաւ, թող քո խօսքը Անի:  
Արէզնաղանի շրթունքների վրայ կեղծ,  
և միենոյն ժամանակ դառը, ժամանա-  
քեաց. նա շարունակեց իրան հարց ու  
փորձը:

— Ցնա՞յթ: միամտացրի՞ց չ պարա:

— Ո՞չ զայդ զմայամբ չեմ: բայս այ

— Պատճառ: ուզուն զուար: ուզուր:

— Զեղաւ: միզուցու չ միզու այս:

— Ինչիւուան նայու ոչ մարդունար:

— Ո՞ւփ, մայրիկ, զլուխ չունիմ ես

քեզ, Եւ Անոնը թողեց մօրը և սեն-  
եակ մտաւ: Արէզնաղանը զարմացած  
ու զալլացած հետեւց նրան:

— Կարաւանի կողոպտած լինելուն  
լուրը Մարիսաթունը լսած է:

— Այս:

— Ի՞նչ է ասում:

— Ի՞նչ պէտք է ասէ: Մորմոքելով  
լաց է լինում թէ ինքը և թէ իրան  
իսեղծ աղջիկը, Եսթերը, Եսթեր բառի  
պրայ Արէզնաղանը այս անգամ աչքը

որդուն վրայ ոլորեց ։ Նա չարացաւ։

— Այսօր գու զժուել ես, այս տղայ։ Ասթերն ում շունկ էր, որ անդադար առ և նունը կրինում եաւ խամուզաց ամ քաջ։

— Ներիր, նա շուն չէ, այլ մարդ։ Կարելի է ձեղանից էլ ու ինձանից էլ լու մարդ։ Արէգնազանը երեսը խաչա- կնքեց։ Դառը մտքեր խռովում էին նրա հոգին։ Ոչ աչքերին, ոչ էլ ա- կանջներին չեր ուզում հաւատալ Արէգ- նազան խանումը։

— Հայրդ որտեղ է, ինչի մինչեւ հիմ- մայ ուշացաւ։ Այսամբ իւ առան քայ

— Զը զիտեմ, պէտք է նորանվալիի մօտ զնացած լինի։ Դոնեա հս այդպէս լսեցի։

— Դու քաղցած չես, ճաշել չես ու- զում։

— Զեմ ուզում, կուշտ եմ։

— Ո՞րտեղ ճաշել ես։

— Ոչ մի տեղ։

— Ուրեմն... ուս ցմարամբ իւ չայլ

— Ախորժակ չ'ունիմ։ Հայրս առաւ, ո- որ ճաշին իրան սպասենք։ Ձեւ որ ա- ռաւում ես քեզ այդ ասացի։ Խոշանի

— Յիշում եմ, բայց կարելի է հայ- րը շատ ուշանայ, Դու Եթէ ուզում ես...

— Ասացի որ ախորժակ չ'ունիմ։ Մայրիկ, քեզանից մի ինդիր ունիմ, Լեռնի կոսիտ ծայնն ու չարժմոննքը յանկարծ փաղաքշականի փոխուեցաւ։

— Խնդիրքդ ինչ է։

— Երբ հայրս տուն գայ, սինդրիր նրանից որ մարտիկացս ասացած նաև մակը տայ ինձ... տանիմ։

— Ո՞ր համակը, ո՞ր անհետ, ինչ եմ ասում, Լեռն։

— Վարդետիս վերջին նամակը, մայ- րիկջան, մայրիկ։ Մարխաթուն արլան շատ ինդիրեց, աղաչնց, որ տանեմ իրան ցոյց տամ։ Յաղ ինեղ կնիկարմատը մի- ամտի իրան մարդու մատին։

— Ե՞ս, Լեռն, ես ահմանում ևս որ

դու, այսօր մի տեսակ ես եղել։ Յիմար  
յիմար խօսում ես, Մարիսաթունին  
խղճացող հիմի գու չը մնացիր, — ախ-  
մախաւ ինչ նամակի մասին որ խօսում  
ես, ես թէպէտ աեզիկովին Շունիմ,  
միայն ես բոլորովին աւելորդ եմ հա-  
մարում քեզ միւս անգամ ոսկերչուն  
տուն երթաւ։ Հայրդ քեզ պատսւիրել  
է, մի անգամ անձամբ զնացել ե միա-  
մասցըրել ես, և թէ Մարիսաթունը հաս-  
կացող կին է, այդքան էլ նրան հերիք  
է, ոչարկս հարկաւորաց պատիւս ար-  
ժանաւորաց, այ որդիւն ու առաջնան  
վրայ մի գնալ, հիմի գու ապլ ես ոս-  
կերչու աշակերար չեմ, Դրացիք էլ  
աւսնեն, ով զիտէ ինչը պէտք է ա-  
ռեն, մանաւանդ որ վիզագը անծանօթ  
եռոչոք քեզ չէ ճանաչում, նշանած  
տղան մի քիչ իրան իրան ծանր պէտք  
է պահէ, որդիւն Այ ինչպէտ վերջին եր-  
կու ամսումը ինչը, նշնուել ես Ա-  
ռաջուան նման ոսկերչուն տունը էլ

գնում զալիս չէիր Այդ մասին թէ  
հայրդ ե թէ ես անչափ գովում էինք  
քեզ մեզ ու մեզ այսունայի Վայ-  
— Բայց ես խօստացայ, մայրիկ,  
նամակը անպատճառ տանել Մայրն  
էլ, աղջիկն էլ ինձնից հաստատ խօսք  
առան այդ մասին։ Ես այսունայի առա-  
— Քա, ո՞ս զու նրանց քաշալ աչք  
կերտը չես, որդի, որ մի օրումը երկու  
անգամ նրանց մօտ զնաս ու զամ։  
— Կը գնամ, մայրիկ, վեաս չումի,  
կը գնամ...  
— Թէ, կեն, խելքդ զվարումդ հա-  
ւաքիր Ենած տղայ ես Եռուզամ ես  
զարձեալ երեխի բաներ անել, Ոսկել-  
չու տունը միւս անգամ քեզ թողնող  
չը կայ, Զը յիմարանաս ու հօրդ էլ  
այդպէս բան չ'ասես, կամ նամակի-  
մասակի առարկայ տմհնեին չ'անես,  
եթէ ոչ նրա բնութիւնը դու հօ-  
լաւ ես իմանում Հօրդ էլ ինձ նման  
բարեափառ մի կարծել Դու զիտես որ

նա այդպիսի երեխի բաներ չէ սիրում  
և որ մէկ նեղացաւ, այնուհետեւ...  
— Եթէ վարպետիս նամակը ինձ չը-  
տաք ես էլ հրաժարվում եմ ձեզ հետ  
Ախալցիսայ գալուց: առաջարկում դաշտում  
— Օրհնեալ ես Աստուած: Խենթ,  
բաս նշանածդ Ախալցիսայ թողած, ու-  
զում ես էրզուրումում մնալ:  
— Կը մնամ, աւելի լաւ:  
— Կը մնաս, բայց ում մօտ, խեն-  
թուկ, ափսր մենք դնում ենք:  
— Դնում էք դնացէք, իսկ ես կը  
մնամ:  
— Տէր ողորմած Աստուած: Տէր Գու-  
ամենաբարի արարած, ԱՇ տղայ դու-  
այստեղ ում մօտ սւզում ես մնալ, և  
ինչի համար:  
— Վարպետիս մօտ կը մնամ, նրանց  
տանը:  
— Յետնի:  
— Յետոյ, կը մնամ էլի:  
— Բաս քո նշանածը:

— Ես իմ նշանածին չեմ ուզում:  
Ես Եսթերին եմ ուզում: Համառօտ և  
ազդու: Արէգնազանի համար այժմ ա-  
մեն բան պարզուեցաւ, եթէ որ մինչեւ  
հիմայ պարզ չէր: Արէգնազանը բար-  
կութիւնիցը իրան-իրան ուտում էր:  
Խեղձի լեզուն բերնի միջին դառնում  
չէր: Կարմրտելով, դեղնուաելով, ճաղա-  
լով ու վնմինթալով մինչեւս մայրը  
պատրամտվումէր մի որ եւ բան ասել  
որդուն, ցանկարծ երեւցաւ Գրիգոր-ա-  
ղան: Արէգնազանը սրլեցաւ: Լեսնն էլ  
իրանը կծկեց: Փ.Պ.

Գեռքի երկայն ծխափայտը Փափսաց-  
նելով, բերանիցը անդադար ծուխի շեր-  
դեր արձակելով՝ Գրիգոր-աղան ներս  
մտաւ: Նա մի անսովոր, խոժոս հայ-  
եացք ձգեց Լեսնի վրայ, յետոյ մտնե-  
լով իրան սենեակը բազմոցի վրայ բազ-  
մեցաւ: Գրիգոր-աղայի այդ վարմունքը  
կնոջը և որդուն համար բաւական էր

իսկոյն և եթ համկանալու, որ տանուա-  
տիրոջ ամպերը նորից վաթօրկել են.  
Այդ տեսակ ամպերին թէն հազիւ-  
բայց ելի ժամանակ առժամանակ Ա-  
րեղնականն ու Ենոնը, իրանց գոլիսի  
մեծիւ կոզմից հանգիպում էին, Տի-  
կին Ոնթառեսնը գողի նման թա-  
թերի վրայ քայլելով մարդուն մօ-  
տը զնոց և նրա հանգէպ, գոր-  
գի վերայ չոքեցաւ, Ենոնի գարտը  
կրկնապատկեցաւ. Կանգնած տեղում  
պատճին անշարժ մնաց, Գրիգոր ա-  
ղան զօռ էր տալիս ծիսկուն, նրա հա-  
կատի վրայ մի քանի կնճիռներ երեսւմ  
էին. Դա նշան էր որ Գրիգոր աղան  
վերին ստահճանի նեղացած էր. Սենեկի  
մէջ գիրեղմանական խոր լուսթիւն  
տիրեց, Վերջապէս Արեգնազանը սիրու-  
արաւ ընդհատել լոռութիւնը, Կամա-  
ցուկ և երկիւղած ձայնով հարցրեց մար-  
դուցը:  
— Հաշը վազոց պատրաստ է, չէիր

կոմնում ձաշել, Պատամիսան չը կայ,  
— Վերկենամ սեղանը պատրաստեմ  
— Ախորժակ չ'ունիմ, Հազիւ լսելի  
ձայնով փնթփնթոց Ոնթառեանը:  
— Ես կարծում Եի թէ ճաշին վալին  
քիզ իրան մօռապահեց, Եշանուկում է  
գու գեռ ռաշորած չեռի պարագաներ  
— Ո՛չ, պարագաներ անձայի ենուն  
— Վալիի կշտից հիմի և վերտուղառ-  
նում, Լրկին չը կայ պատամիսան,  
մայ և ալիի մօտ ինչի էիր գնացել.  
— Երա ճաշերին համար փող ատրայ  
տուի, վայրացկոտ ու ժամկոստ ձայ-  
նով պատամիսնեց Գրիգոր աղան.  
— Գանեա մի կարգագրութիւն ա-  
րաւ գողերին բանել տալու.  
Գրիգոր աղանի կողմից ոչ մի պա-  
տամիսան:  
— Հարեանները խօսում էին թէ քո  
ինդրանօք վալին զօրք ուղարկել է գո-  
ղերի ետքեցը  
— Բֆաւ, բֆաւ, բֆաւ իբրհ պա-

առաջինան կնոջ հարցմունքին Գրիգոր-  
աղան ծուխի շերտերին սկսեց զու տալ.  
Արէգնազանը լուեց, կարկամեցաւ. խեղ-  
ճի սիրաց եփ էր գալիս որդուցը լսած  
խօսքերի մասին, ուստի և աշխատում  
էր որեէ կերպար խօսքը Անոնին ոսկեր-  
չու տունը գնալու վրայ շուռ տալ. էլի  
փորձ փորձեց Արէգնազանը.

— Ասկերչին էլ կողոպարողների  
միջին է:

Անթառեանը շարունակում էր իրան  
լուսթիւնը. Արէգնազանը կողմանկի  
նշաններով Լնոնին հրասիրում էր ներս  
զալ. Պատանին չէր ուզում անդիցը  
ժամ զալ:

— Լնոնս ասում է, կրկին դէպի  
մարդը դարձաւ Արէգնազան խանումը,  
թէ զու ինչոր մի նամակ ունես խա-  
չօյից...

— Բֆոն, բֆոն, բֆոն, դարձեալ  
ծուխի շերտերն եղան Արէգնազանին  
պատասխանը:

Տիկին Անթառեանը նեղացաւ, չա-  
ղարումի զզացումներով խեղճի սիրաը  
յուղվում էր. Վերջապէս պէտք է որ  
մայրը իմանար թէ Բնչ և ինչ բաներ են  
անցկացել այդ օրը իրան որդուն փրա-  
յով, սրա խելքովն ու. մաքով. Վ-  
ուաջին նուազում արկինը միտք արաւ,  
մի կողմ զնելով իրան կանացի համեա-  
տութիւնը, ճակատ առ ճակատ խօսել  
մարդուն հետ ամեն բան, բայց յետոյ  
. . . յետոյ էլի՞ փոշմանեց. Ոէծացած  
կրակի վրայ Արէգնազան իտնումը չը  
կամնցաւ եփ և կած իւր ածել. Եւա էլի  
խոհեմաքար մարդուցը հարցրեց:

— Վաճառականներին բոլորին էլ  
կողոպատած են:

— Բաս զու կարծում ես իմ և քո  
խաթրու համար ուկերչուն ձեռը չեն  
տուած,

— Որ այդպէս էլ լինի, միթամ Բնչ  
ամօթ: Վալիին և միւս պաշտօնատար

անձանց հետ ունեցած այսպահ առարկաք մտերիմ բարեկամութիւնդ էլ ինչնիվ պիտի իմացուի...  
 — Այդ վալիներին համար իմ ձեռքով ուրիշներին արիւնը չարունակ ծըմելով... քառ բիթ, բիթ, բիթ...  
 — Խօսքերիցդ ես ոչինչ չեմ հասկանում:  
 — Պիտք էլ չե՞սր հասկանած:  
 — Կարելի է կատակ ես անում, հը տէր Աստուած:  
 — Գեղ հետ կատակներ անելու ժամանակս վազուց անց է կացել, իինդու, գրիգոր աղան սրախօսեց և ուրի կանգնելով սկսաւ սենեկի մէջ մանդաւ, և ինը նոյնպէս սափի կանգնեցաւ: Անթառեանը մօտեցաւ որդուն և, օքեղ տեղ էի սւզարկել, ասաց նա նըրան, ներս չը դաս, չը յայտնես, թէ գնացիր, ինչ արիր, ինչ չ'արիր, հետք ինչ չար ու բարի խաբար տուն բերիր: Աթունը մի բուլէ տագնապեցաւ: Արէզ-

նաղանը նոյնպէս Սակամեցաւ որդուն տեղակ պատասխանել, բայց վահեցաւ մի գուցէ մկապիրտը ջուրը տայր:

— Ո՞նացի և ասացի երկիրտմծ ձայնով պատասխանեց որդին հօրը ինչ որ դու ինձ հրամայած էիր, նրանք չը հաւատացին, չը միտմուեցին և ինձանից ինպրեցին որ վարպետիր նամակը տաս տանիմ իրանց մօտ, որ նըրանք...

— Ենրանք, մնրանքն եղարձեալ ոնրանքն այս բառերը Որիկոր, աղան շեշտում էր, որոնք, ովքեր են այդ մնրանքները, այդ իմ եւ եթէ խելք ունիմ նատ և քո նոքարները:

Իսկոյն Արէզնաղանը խօսքի մէջ նետուեցաւ, Մայրը նկատեց, որ որդին իրանից աւելի անշնորհք գուրս եկաւ:

— Իրաւ ինչ լաւ որ առարկան դու ինքդ բաց արիր, շողօքորթ ձայնով ասց կինը մարդուն էլ ուրիշ մարդ չը

գտար, որ Լեռնիս իրան ուղարկեցիր  
ոսկերչու առևնը։  
— Լեռնի ոսկերչու առն ճանապար-  
հը չը զիտէր, թէ այնտեղ դնալ ու գա-  
լը առաջին անգամն էր։  
— Շատ բան, առաջ նա փոքր էր,  
ոսկերչու խանթի աշակերտն էր...  
— Ես դեռ ոսկերչու ընկերութիւ-  
նից հեռացած չեմ. Որդիդ ոսկեր-  
չու թէ ընկերն է և թէ աշակերտը  
դարձեալ.  
— Այս, տսենք այդ այդպէս է, սա-  
կայն Լեռնա հիմի էլ ոսկերչու քաջալ  
աշակերտը հօ չէ... նա հիմի իրան հա-  
մար այրեատարեալ է... Լեռնս հիմի  
... նշուած տղայ է... Վերջապէս...  
մարդ, հիմի ինչ հարկաւոր է ամազից  
մասնանեիս ջոկել, դու երբէք չը պէտք  
է Լեռնիս... վերջապէս... այսուհետեւ  
քո ընկերի տունը Լեռնիս չը պէտք է  
ուղարկել դատարկ բաների համար...  
դու ինքդ միթէ չես հասկանում այդ-

քան բանը... ամուր... Այսէ գնազան խա-  
նումը խօսքը բերնի միջին ծամծմում  
էր անդադար։  
— Բժնւ, բժնւ, բժնւ, Գրիգոր աղան-  
շարունակ ծխում էր, Նա էլի Լեռնի  
կողիք դարձաւ և հարցրեց։  
— Երանք որ ասում ես—ես քեզ  
հարցրի—ովքեր են այդ նրանքները։  
— Վարպետիս կինը, Մարխաթուն-  
արլան ե... Լիոնը չը վերջացրեց խօս-  
քը, Պատանին զզաց որ իրան հետ խօ-  
սզը այս անգամը մայրը չէր։  
— Վարպետիդ տանը երկար մնա-  
ցիր։  
— Անտէր մնայ աները դժմներին—  
էլի խօսքի մէջ ընկաւ Լեռնի մայրը—  
քաղաքի ծայրումն է, մինչև մարդ զը-  
նայ ու գալ, ամբողջ ժամեր անց են  
կենում։  
— Ողջ օրը տանդ չորս պատերին  
տակ նստած, Վրիգօր աղան զայրաց-  
կու և քամոհրական ճանափ երեսը

շուռ առուեց պէտի. կինը — ականջներդ  
բարձու բազմոցի տակ զրած, սեղա-  
նը սարքած, կերակուրդ վրան, պատ-  
րաստի զրած, էլ բնչ ես իմանում, թէ  
մարդիկ փողոցում ինչեր են խօսում,  
երկնքից յանկարծ մեղ գետին ձգում,  
բֆնւ, բֆնւ, բֆնւ...

— Ամեն զամի ու խօսածի չը պէտք  
է հաւատալ — տիկին Անթառեանը շա-  
րունակում էր իրան պաշտպանողական  
գիրքը: — Մեր բազմաքի ատաթը պէտք  
է որ ինքու ինձանից լաւ իմանաս.  
— ԱՄուկը ճզզաց, ասում են, ամպ  
գուացյ:

— Բայց, կին դու, մուկի ճզզոցն էլ  
զարձեալ ձայն է թէ ոչ...

— Երզուրումցիք ի հարկէ, հիմի  
աեմնելով որ դու այստեղից պէտք  
հեռանաս, քո լաւութիւնը այլ ես չը  
պիտի կարողանաս նրանց համար անել,  
նախանձից և սրտերի կոկծիցը հիմի ի-  
րանց բերանները շուռ են տալիս և

սկսում, քո դէմ չը համարձակելով՝  
որդուց դէմ բաներ սարքել, զբար-  
տութիւններ անել...

— Փառք Աստուծոյ, Էլի փառք Աս-  
տուծոյ, որ ես էլ արհեստաւոր չեմ,  
ընկերաշակերտ չ'ունիմ, ապա թէ ոչ  
մոգիտէ, — Ակամին խափողն էլ ախր մի  
նւայ էր, — ոչիտէ, մի Մարինաթուն  
էլ իմ տան միջում կը լինէր գուցէ,  
բֆնւ, բֆնւ, բֆնւ...

Մարդու վերջին և կեզառոս սրախօ-  
սութիւնը վերին աստիճանի վիրաւո-  
րեց կնոջ սիրաց: Գրիգոր-աղան ախր  
քարը բամբակի մէջ զրած, կնոջն այն-  
պէս էր իսփած: Արէնազան խանումը  
այլ ես չը կարողացաւ զիմանմլ: Տի-  
կինը մոռացաւ իրան կանացի պարկէշ-  
տութիւնը, արհամարկեց որդուն ներ-  
կայութիւնը և ձայնը բարձրացնելով  
ոկտեց կատարեալ կոփւ անել մարդուն  
հետ և — ինչպէս ասում են այսպիսի  
գէպքում — ատիկ դնել, պանիր քամելու:

Տիկին Արէ զնազանը զատալպարասւմ էր  
մարդուն անհեռատեսութիւնը, որով  
Գրիգոր-աղան, առանց ազգականների  
առածներին ուշք զարձնելու, վերառաւ  
և որդուն մի որեէ սոկերչու յանձնեց,  
«Էւթ իշխն քավ կապես, ի հարկէ, կամ  
առոց կը համի, կամ փառոց»: «Արի  
ձեռքովդ, քաշիր հոգովզք. բորբոքուած  
կինը շարունակ առածներին զօռ էր  
տալիս:

— Երակը, Գրիգոր-աղան յանկարծ  
մի ապատակ հասցըց կնոջ երեսին, և  
արմակը, ծխափայտի մի կողթ նրա քա-  
մակին:

— Ցախը, տնիկը, փաթ, քիւթ,  
տան զնները յետ արաւ ։ Ենոնը և հայ-  
դա; տանից զուրս թռաւ:

Փե.

Մարխաթունն ու Եսթերը երկար ։  
շատ երկար սպասեցին ։ Ենոնին, բայց  
սա ոչ ինքն եկաւ, ոչ էլ զոնեա խոս-  
տացած նամակը ուղարկեց:

Մթնչողի ժամանակ, ընդհակառակը,  
Անթառեանի տան ծառան եկաւ և ու-  
կերչու տանը պտռեց իրան փոքրիկ առ-  
գա և եսնին ։ Պատանին այնտեղ չէր,  
Յետ դասնալիս ծառան իրան տչքերը  
անդադար տան քունջու ըրուջախնե-  
րում ման էր ածում. կարծես ։ Եսնը  
այնտեղ պահուած լինէր, Սյդ հանգա-  
մանքը խեղճ ընասնիքի ցաւի վրայ մի  
նոր ցաւ ևս աւելացրեց. Փոքրիկ կա-  
րօն էլ չեկաւ ։ Մենք դիմենք որ այդ  
որը առաւատեանից Գրիգոր-աղան ման-  
կանը իրանց տուն ճամբան էր։ Մեծ  
աղան մոռացաւ պատուիրելու փոքրի-  
կին, որ երեկոյեան, սովորականին հա-  
մամատ, ոոկերչու տունը զնայ, կարօ-  
յին էլ օջանին միննաթ։ Կարօն կար-  
ծեց թէ մեծ վարպետը եկել է, կամ  
այդ որը գալու է, ուրեմն սոկերչուն  
տուն զնալը այլ ևս աւելորդ էր։ Սամձ  
է Յայրին Բնչ հօգմն է թէ մոմը թանդ

Ակտ գիշերը անցած գնացած էր, քը-  
նանալու սպակական ժամանակը վա-  
ղաց անց էր կացած, բայց Մարիա-  
թանի ու Յսթերի աչքերը լալուց դեռ  
ևս չէին կշտացած։ Մայր ու աղջկի մէկ  
լալիս էին մէկ կանգ առնում։ Երբեմն  
էլ մայրը լալիս էր, աղջիկն էր նրան  
միտթարում, իսկ երբեմն աղջիկը լա-  
լիս, մայրն նրան ողջագուրում։ Այդ  
գիշեր զուռ ու զակից էլ կարծես չը-  
քացել էրն։ Եւ ցերեկվայ խայտառակ  
անցքերից յետոյ, Մարիաթունը սինչ  
երեսի շրափ կարող էր զրացիներին զի-  
մել և իրան համար մի հողու ընկեր  
խնդրել։

Գիշերը պարզնկայ էր, Փողոցում  
ձիերի ոտնաձայն լսուեցաւ։ Նախն.  
թաց օրվայ առաւտուն գողերի հար-  
քեից զնացող զօրքը վերադառնում էր,  
Երկիւզն ու ամօթը մի կողմ զրած,  
Մարիաթունը, պինչը քամի մոած հոր-  
թի նման, առնից զուրս թռչելով, զօ-  
րապետի ձիու առաջ չռփեցաւ։

Փաշան ջան, աղաջան, ստքերիդ  
մատնդ, կտրած ճանապարհիդ մատնդ,  
մի լուր, ոսկերիչ խաչօյից ինձ մի բա-  
րի լուր, թշուառ կինը զօրապետից  
աղերսում էր։

— Բաջի<sup>1)</sup> ոսկերչու կինը զա ես,  
կարեկցարար հարցրեց զօրապետը, որ  
Հասան-ազա էր կոչուում։

— Հա, զնւրբան, ես նրա կինն եմ,  
հա, ձիուդ պետներին մատադ։

— Վէր կաց, րաջի, վերկաց, Միա-  
միտ եղիր, քո մարդը բոլորովին ողջ  
առողջ է։ Եթէ ոչ էզուց, միւս օր ան-  
պատճառ նա ինքն էլ այստեղ կը լինի։  
Եւ ահա քեզ մարդուդ ինձ յանձնած  
փուսուան<sup>2)</sup> և համրիչը կարգա, աես  
և միտթառուիր, «Ուշազլար, զիզէլիմա»<sup>3)</sup>,  
Զօրքը առաջ խաղաց։

Մարդու համակը և համրիչը սնդա-  
դար պաշտչելով, աչքերիցը ուրախու-

<sup>1)</sup> Բոյր։

<sup>2)</sup> Տոմսակ, մատնաչափ նամակ։

<sup>3)</sup> Տղաւք, զնանք։

թեան արտասուրթ թափելով, Մարիսա-  
թունը նոյն արտգութեամբ, որով դու-  
րը էր եկել, տուն դարձաւ,  
— Կարդա, Եսթերջան, չուտ արա-  
կարդա, տեսնաւմես, այ համրիչն էլ  
խոկ և իսկ իրանն է, ասումէր սպիրչու-  
կնիկը և զողզոջուն ձեռքերով մէկ հ-  
րեօր խոչակնքում, Աստծուն շնորհա-  
կալ լինում, մէկ ճրազը աղջկան մօ-  
տեցնում:

Նամակի ընթերցումից երեցաւ որ  
նախքան Երգութումի զօրքի վրայ հաս-  
նիլը, Խիջայի մութասրիֆը ապրանք-  
ներին և զողերին արդէն բռնած էր,  
Վաճառականների կեանքին ոչ մի վր-  
տանդ պատահած չէր: Նրանք բոլորն էլ  
օբողի պէս ողջ առողջ էին: Միայն  
մի երկու օր իլիջայում պէտք է մնա-  
յին, որպէսզի զողերից յետ առած ասպ-  
րանքները կարգի բերեն, դարսունեն,  
կապուսեն և ապա զէպի Երգութում  
ճամփայ ելնեն:

Մարիսաթունի և Յսթերի տրտու-  
թիւնը, ինչ ասել կ'ուղէ, ուրախու-  
թեան փոխուեցաւ, Հիմայ մայր ու աղ-  
ջիկ մտածեցին որ առաջի իրիկուանէ, ո-  
ւերաններումը մի պատառ հաց դրած  
չին, Եսթերը թանրից լորէսպասը հա-  
նեց, իսկ բզուզից բազկէ թթուն: Մայր  
ու աղջիկ տեփուրի<sup>4)</sup> հանդիպակաց  
ծայրերում նստեցան և սկսան խիըշ-  
ացնել իրանց համեստ ընթրիքը, Այդ  
ժամանակ կարծես նրանց լեզուները  
ես բաց եղան:

— Մայրիկ, արգեօք Լեռնին գտնն,  
թէ մինչև հիմայ պատում են, առաջ  
Եսթերը սկսեց:

— Ի հարկէ գտան, Լեռնա հօ մինչև  
հիմայ զրսում չէր մնալ, մայրը միա-  
մտացրեց աղջկան:

— Մարդ մէկ իմանայ թէ մինչև  
մթնշողը նա որտեղներումն է եղել ման-  
գալիս.

<sup>4)</sup> Փայտեայ սեղան առանց ոտքերի:

— Յերեկվայ լուրերով հետաքրքրութան կերպում ամշուշտ կակսէր փողոցներուամ շրջել արանից ու նրանից նորնոր

բաներ լսելու համար: Եւ ահա այդ սկառառով էլ գուցէ չէր կարողացել սովորական ժամին իրանց տանը լինել:

— Երբ ծառան եկաւ, արդէն բաւական ուշ էր, զիտես, մայրիկ:

— Ո՞րքան ուշ, ճրադր դեռ նոր վառած էինք, կենսու տղամարդ է, եթէ մի քիչ ուշ էլ տուն գնայ, ով կարող է թելիցը բանել:

— Քա, մայրիկ, այդ ճնշ է պատահել որ կենսի նշանածը մեռել է:

— Մարդ է, կը մեանի, մարդիկ բոլորն էլ մահանացու են, որդի: Ի հարկէ շաա ափանս որ ջահիլ աղջիկը ամուրադը դեռ աչքումն մեռած է, բայց երեսի, Աստուծոյ կամքն այդպէս է եղել: օրհնեալ լինի Նրա կամքը: Տէր լուսաւորէ հոգին. մանկութեան մեզքը Աստուծած երեսովը չը տայ: Աստուծոյ

արածին, որդի, մարդուս խելքը երեք կարող չէ հասնել: Մեռնիմ հսկերա տուրբ զօրութեանը: Մեռնողի արեսվութիւն տայ: Մարիսաթանը քաշեց համբուրեց կաթերի երեսը:

— Քա, մայրիկ, չո զիտեմ զու լաւ նկատեցիր թէ ոչ ուրու զնալիս ծառան աչքերը պան քունջութու ջախներից չէր հեռացնում: Ասրուդը կարծում էր թէ մենք կենսին պահած ենք մեր տան մէջ, յիմմար:

— Տգէալ, յիմարը ինչ ուզում է անէ նրա արածն էլ միթէ բանի տեղ պէտք է դրած: Եւ էլ, շատ կարելի է թէ Արէդնազան-խանումը ծառային այդպէս պատուիրած էր: Կեսնիս մայրը կարելի է կարծում թէ... ես ինքն միթէ այդքան բանը չիմ հասկանում: Խնչ ասել կ'ուզէ, որ այսուհեան կեռնը մեղ մօտ էլ չը պէտք է գայ ու զնայ: Մեծ մարդիկ, որդի, ամեն բա-

Աի զերայ էլ պէտք է լաւ միտք անեն։  
Գիտէ, Արէգնաղանն խանումը այդ բա-  
ները չնոտ լաւ զիտէ, ինչքան չը լինի,  
ուա էլի Կրիզոր աղային կինն է, ոգնա  
շնը, որ շինուիս, մի գնալ աւերը, որ  
աւերիս։ Ալստուած նախ լեռան բարձ-  
րութիւնը կր տեսնէ, ասդա ըստ այնմ  
ձիւն կ'ուղարկէ։ Այս ասածներով ոս-  
կերչու կնիկը ուղում էր Յօթերի աշ-  
քումը բարձրացնել սրա ապագայ սկես-  
րոջը։ Նա շարունակեց իրան խրատա-  
բանութիւնները։ Զգուշութիւնը, Ես-  
թերջան, շատ լաւ բան է։ Եթէ դու և  
Լենոս, էրէկ առաւօտ ջահլութիւն չա-  
նէիք, մի փոքր զգոյշ լինէիք, այն խայ-  
տառակութիւնները ամենին չէլին պա-  
տահիլ։ Ինչի այնքան վախեցաք, սար-  
սաղներ, ինձ ինչ զրող կարող էր պա-  
տահիլ։ Ուշքոյ յանկարծ անցաւ։ Մի  
քիչ յետոյ առանց ձեղ էլ ևս կարող  
էի ուշ քի գալ։ Բայց ինչեցէ, տեսնես  
որ մեղքերիս համար Ալստուած մեզ

այդ վորձանըին մէջ ես ձգեց ձակատ-  
ներիս զիրն էր, որզի, պէտք է կատա-  
րուէր։ Բարեբաղդաբար հայրդ շնւտով  
կուզայ և ամեն բան կը վերջանայ։  
Յող այդ բանը ձեղ համար լաւ փը-  
րատ լինի ապագայումը։ Մի ամենա-  
փոքրիկ չնչին անզգուշութիւնը մար-  
դուս զմիին կարող է մեծ մեծ փոր-  
ձանքներ բերել։ Մեծ հրդեհները փոք-  
րիկ կայծերից առաջնում են առհա-  
սարակ։  
— Քա, ինձ այնպէս է թւում թէ  
իսոնը մինչե հիմայ էլ առւն զարձած  
է։

— Ալրսազ, խելքիդ ու օվելերակայու-  
թեանդ<sup>1)</sup> զօռ ես տալիս։ Այս ժա-  
մանակն էլ մարդ բնաւ զրառում կը մնար։

— Ո՛վ է իմանում նրա բանը։ Եսր  
չէ որ ես ճանաչում եմ լնոնին։ Մի ան-  
պիտան, հին սովորութիւն ունենա։ Երբ  
մի տեղ դնաց, սիրում է ամբողջ ժա-

<sup>1)</sup> Երեակայութիւն.

մերով նստել, երկայն բարակ խօսելը  
դատարկանել, ու դրան ով մղիք ավագան  
— Անիծած, գուշ որտեղից զիտևսթէն  
նա այդպիսի բնութիւն ունի: Ուրեմն  
... այժմեան ջահիլներիցդու, ոճիք,  
կատարեալ օճիք թափ տալու է հիմի-  
կուայ ջահիլներից, անպիտաններ: Սա-  
կայն ինչ էլ որ լինի, գուշ երբէք չը  
պէտք է քեզ իրաւունք տաս որեւէ նը.  
կատողութիւն անել այսուհետեւ Ան-  
նիս, Լեռնս դատարկաբան է թէ չէ,  
յիմար սոսիրութիւն ունի թէ չէ, մի-  
անգամայն այդ քո զործը չէ: Ամեն  
մարդ, նամանաւանդ կնիկ-արմատը,  
Եսթերջան, միշտ և ամեն ժամանակ ի-  
րան չափն ու ասլիճանը՝<sup>1)</sup> լաւ պէտք  
է ճանաչէ, իսկ դու, տեսնումեմ, ճի-  
մրկուանից գեռ վառեկ չ'նղած, ու զում  
ես ձեռաց հաւ դառնալ.

— Մայրիկ, ես մինակ քեզ մօտ  
այսպէս խօսեցայ:

<sup>2)</sup> Աստիճան:

— Այսօր ինձ մօտ խօսեցար, վագն  
էր կարող ես նրա մօտ խօսել, մայն  
ժամանակ, ու զիտէ, որդիւ Ոչխարհ,  
քում ինչեր չեն կարող պատահել: Ա-  
ռանց այն էլ, լաւ անմուծ ես, բաղ-  
դը զարմանալի խաղեր խաղում է մեղ  
հետ: Վանակ զանութիւնը արագանակ պարագանակ է:

— Լաւ ես հրամայում, մայր, բայց  
այ անս, խոստացաւ իրդ հօրդ նամա-  
կը բերելու:

— Սա էլի հաջում է: Խոստացաւ  
բայց աշկարայ երեսում է, որ ժամանակ  
կամ միջոց չ'ունեցաւ: Եւ կամ շատ  
կարելի է որ զրիգոր աղան չը կամն  
ցաւ հօրդ նամակը մեղ ուղարկել: Ա-  
ռանդական նամակ, ով է իմանում թէ  
միջն ուրիշ ինչ բաներ զրած կը լինէր  
հայրդ, որոնք մեղ իմանալը, ինչ ասել  
կուզէ, որ հարկաւոր չէր: Աւտաս Ա-  
րեգնազան-խանումին էլ Գրիգոր աղան  
ցոյց չի տալ իրան կամ հօրդ նամակ  
ները: Եւ ինչ կնիկ-արմատի վերաբեր-

եալ գործ է դաւ Ամենաբարի Աստուած-  
ծը աշխարհիս բաները այնպէս է սահմանել,  
որդի, որ ամեն ոք իրան վերաբերեալ  
դործին պիտի խառնուի:  
Մեր գործը, Եսթերջան,... մեղ մնում  
է միմիայն Աստծուն փառք տալ նրա  
բարի կամեցողութեանը համար: Ճիմի:  
Կուան ժամանակը, ճիմիկուան ջահլու-  
թիւնը, կատարեալ երջանկութիւն է,  
որդի, իսկ մեր ժամանակում . . . չը  
դառնան, էլ յետ չը դառնան այն ժա-  
մանակները... Ո՞վ մեղանից կը համար-  
ձակուէր նշանածին երեսը անդամ տես-  
նել, ուր մնաց թէ հետք նստել ու խօ-  
սել: Հաւատում ես, Եսթերջան, մինչև  
«պսակիս վերջին զիշերը» ես հօրդ որը  
որոց լինելը չը դիտէի: Մի անգամ—  
մինակ մի անգամ—նշանած տեղումն,  
հայրդ մի զիշեր ծնողքիցը ծածուկ ե-  
կած էր ինձ տեսնելու: Իմ հայրը այդ  
զիշերը տանը չէր, նա հիւր էր գնացել:  
Մայրս չէր ուղում դուռը բացանել

քո հօր առաջ, հասկանումես, քո հօր:  
Այն ժամանակ դու զեռ ես չը կայիր:  
Քո հօր հետ մենք զեռ պսակված  
չէնք այն ժամանակ: Քո հայրը այն  
ժամանակ տակպւին իմ նշանածն էր,  
այ ինչպէս հիմի դու...հա, Եսթերջան,  
այն էի ասում: Ազաշանք, պազատանք,  
անկարելի եղաւ, մայրս չը յօժարեցաւ  
դուռը բացանել քո հօր առաջ: Զահիլ  
ժամանակումը քո հայրն էլ հիմիկվան  
պէս չէր. նա շատ չար էր: Մէկ էլ  
տեսնեմ, Եսթերջան, քո այս խելացի  
հայրը մարաքի մեծ երգիցը տրամիք  
յարդի վրայ ընկաւ: Ես իսկոյն փախայ  
տան «քիլէր»<sup>3)</sup> մտայ: Մայրս եկաւ  
դուռը վրայից կողքեց: մայրս ասում  
էր հօրդ պղուրս գնա», հայրդ չէր զնում,  
ուղում էր ինձ տեսնել, հետս խօսել:  
Ե՛ւ, միթէ այդ կարելի բան է: Ժամա-  
նակն էլ ձմեռ էր: Նկուղում ցուրտ,  
խոնաց: ես վրաս հաստ շոր չ'ունիմ  
հազիթ: իսկ հայրդ տեսնելով որ մայրս  

---

<sup>3)</sup> Նկուղ:

չեռողում ինձ նրան ցոյց տալ, վեր-  
կացած ու նեղացած մեր տաճից դուրս  
գնաց, Մայրս հէնց այդ էր ուզում:  
ետքելիքը գնաց ու չըափնք դուռը պինդ  
կողբեց, Այդ բանը կարծես աստուա-  
ծակոյս կողմանէ, էրո, Հայրդ հեռանա-  
լիցը մի փոքր ժամանակ ցետոյ մէկ էլ  
տեսնեմ հայրս առւն եկաւ: Նկուղից  
դուրտ եկած, դոզը ջիգարում ընկած  
հո էլ այդ ժամանակ զընզրդ զընզրդ դո-  
դում էր:

— Աղջի, Մարիսաթուն, ինչ է պա-  
տահել, ինչի դոզում ես, որդիս միա-  
մտաբար հարցնում էր հայրս ինձանից,  
— Ոինչ բան չը կայ, ասում եմ, հայրիկ,  
Խեղմ մօրս ձեռքն ու ոտքը երկիւզից  
դոզ եւաւ այդ միջոցին, — «Հօ մէկ  
բանից չը վախեցար, Մարիսաթուն,  
— Զէ, հայրիկ, — Աղջի հապա ինչից  
հիւանդացար, — Զը գիտեմ, հայրիկ,  
Բայց քրտինքս ելեր ու ինձ ծածկել  
էր: Ինչ երկարացնեմ, Ասթերչան,

չե որ ես ու մայրս մի կերպով հօրս  
միամտացրինք, ինչպէս ասում են, մե-  
րըն էլ մեզ հասաւ, Հապա, որդի, մնաք  
այսպիսի օրեր ինք տեսել ու ուզում է  
— Մայրիկ, թող դուքս հօրը ասէիր,  
որ իմ հայրը ծածուկ ձեր առնն է Կ-  
կել և դու նկուղում մրսել ես և այդ  
պատճառով դոզում ես, ասաւ Եսթերը  
մօրը, Մարիսաթունը ժպաց աղջկան  
միամտութեան վրայ և պատասխանեց,  
— Դու ուզում էիր որ թէ մայրս և  
թէ ես նոյն դիշերը և եթ շահուատնկ  
լինէինք, Մանաւանդ իմ հայրս, այդ-  
պէս բան ամենին, նա ամենին չէր  
սիրում, իմ հայրը, Եսթերիցան, վատ  
ըան սիրող մարդկերանցից չէր: Հայրս  
այնքան խիստ բնաւորութեան տէր  
մարդ էր, որ երբ եղբայրս (ինձնից մեծ  
ես մի եղբայր ունէի) մեռաւ, հարս  
իրան երկու տղային առաւ և եղորս  
թաղումից մի ամիս յետոյ անմիջապէս  
հօրանց տունը գնաց:

— Խնչի համար, մայրիկ։  
— Նրա համար, որ հայրս պահանձում էր որ հարսս առաջուան նման էլի միշտ հօրս ծառայութեանը կանդնի։ իսկ հարսս երկրորդ ծննդականութիւնիցը յևաոյ մի տեսակ տկարութիւն ունեցաւ, որով զիշերները չէր կարող երկար ժամանակ ոտքի վրայ կանգնած մնալ, իսկ հայրս, և մինչև անդամմայրս, այդ բանը խստիւ պահանջում էին։ այն ժամանակ կարգն այդպէս էր, որ դի Քանի որ եղբայրս դեռ կենդանի էր, հարսս վայնաչար իրան ծառայութիւնները հօրս առաջ էլի կանէր, բայց երբ եղբայրս մեռաւ, հարսիս ծնողքը վերառան նրան իրանց մօտ տարան։

— Մայրիկ, եթէ որ հարսդ հիւանդ էր, թող զիշերները վերանկնէր իրան անկողնումը հանգիստ քնանար. նրան ով էր ասում որ երկար ժամանակ ոտքի վրայ կանգնած մնայ։  
— Խուլ չէր, ինչի ասածներս չի-

ժացար։ Ասում եմ ախր այդ պահանձում էր հայրս։ Այդ ընդհանուր աղաթի էր, ասում եմ, այն ժամանակի Ախր տան հարսը պարտական էր սկեսայրի անկողնը պատրաստել, նրա ձեռքին լուացուելու ջուր տալ, հանուեցնել, հագուեցնել, Եւ այդ ամենը նա պէտք է աներ առանց խօսելու։ Նա չը խօսքան էր։ Մինչև մեր տանից հեռանալը՝ հարսս առաջութեան անդամ հօրս հետ խօսած չէր։ Բացի դրանից ամենայն երեկոյ հօրս պառկեցնելոց յետոյ, հարսս պարտական էր նրա զլիին բարե բըռնած կանգնել, մինչե՛ որ հօրս քունը կը տանիր։ Իսկ հօրս քունը, Եսթերջան, շատ ուշ կը տանէր։ Առաւոսներըն էլ հայրս շատ շուտ զարթել զիտէր։ Նա որ զարթէր, պէտք է որ հարսս դարձեալ նրա կողքին լինէր, որպէս զի։ Մարիսաթունի խօսքը բերնումը մնաց։

ՓԶ.  
 — Չըք, թՇք, չՇք, թՇք դրսի դռնը  
թակում են յանկարծ;  
 — Մայրիկջան... երկիւղից Եսթերը  
ճաց,  
 — Չնչէ, ախմախ, ինչ եղաւ, ինչից  
վախեցար. մայրը կշտամբեց աղջկան:  
 — Մայրիկ, աւտաս գող է եկել...  
 — Չըք, թՇք, չՇք, թՇք, դռան  
հարուածները կրկնուեցան,  
 — Քա, Աստուած է վկայ, գող է  
եկած,  
 — Աղջի յիմար, ինչ գժութիւններ  
ևս անում, ձրազը ինձ առն. շնւա.  
 — Մայրիկ, զուռը մի բացանել,  
 — Հեռացիր կշտիցս, անպիտան, քիչ  
է մնում, որ ինձ էլ վախացնես. Աղջ-  
կայ զլսին մի բռունցքն իջեցնելով,  
Մարիսթունը յետ մղեց նրան, իսկ  
ինքը ձրազը ձեռին դէպի զուրս գնաց:  
Ուկերչու կնիկը երկար իւաչափնքում էր  
անդադար,  
 — Չըք, թՇք, չՇք, թՇք...

— Ո՞վ ես, բակի միջից հարցնում է  
Մարիսթունը:  
 — Բաց, ես եմ.  
 — Գու ով ես?  
 — Քա, կարծեմ հայրիկիս ձայնն է,  
բաց արմա շնւատ: Եսթերը ուրախացած  
եկաւ մօրը մօտ:  
 — Հայրիկդ չէ, ես եմ, բաց արէք.  
 — Գու ով ես?  
 — Աբւաջան, բաց, ես եմ, ես, Լիո-  
նը, Լոննը...  
 — Լիոնը, օրհնեալ ես Աստուած.  
ձայնը ինչպէս էլ փոխուած է:  
 — Երեխ, մայրիկ, մրսել է, բաց...  
 — Լիոնջան այս միջոցում փողոց-  
ներումը դու ինչ ես շինում: Աղջի Ես:  
թեր, մի քիչ առաջ քեզ Հոգին սուրբ  
խօսացրեց:  
 — Աբւաջան մէկ առաջ բաց արմա,  
պատճառը յետոյ կիմանաս:  
 — Մինակ ես, թէ հետղ ուրիշ մարդ  
էլ կայ:

— Մինակ եմ մինակ, շնւա, բաց  
արէք, ցրտից կոնկոռնում եմ:

— Մայրիկ, մի քիչ առաջ դու ին-  
քը չէիր գովում քո մօր վարմունքը  
դէպի իմ հայրը. հիմի դու ինքդ նոյն  
բանն ես անում, ասաւ Յսթերը: Մար-  
խաթունը պատասխանեց.

— Այդ քո գործը չէ, սարսախ, ինձ  
խելք սովորացնող հիմի դու չը մնացիր:  
Դուան կշալից հեռացիր, թէ չէ հիմի  
փայ կուգայ զլիսիդ:

— Յսթերջան, Յսթեր, գոնեա - դու  
ինքդ բաց արա, դրսից Լեռնը ձայնում  
էր:

— Հը, մնց չէ, հապա թող Յսթերը  
մէկ փորձէ քո առաջին դուռ բացա-  
նել, և կը տեսնի թէ ինչ օրի կը հաս,  
նի:-Լեռնջան, ձեր տանիցն ես գալի,  
թէ սւրիշ տեղից:

— Հայ, հայ, մեր տանիցը, շնւա  
բացարէք:

— Երբ որ ձեր ծառան այստեղից

վելադարձաւ, դու արդէն տանն էիր:

— Հայ, հայ, բացարմա, վարպետիս  
նամակը բերել եմ որ ձեզ մօտ կար-  
դամ:

— Բայ, զէ՞ն բաց, չես տեսնում դո-  
զը խեղճի ջիգարն է ընկել. հիմի հօնա  
բոլորովին օտար չէ... Յսթերը էլի մի  
ջամտեցաւ:

— Դէն, շուտ բացարէք նամակը ձեզ  
տամ, իսկ ինքս ուրիշ տեղ եմ զնալու  
հարկաւոր գործով:

— Այսուհետեւ մեղ նամակ հարկա-  
ւոր չէ. ամինչե աղն եկաւ, մատաղը  
պարպաւ. Նամակը դու քեզ համար  
պահիր, ես քեզանից առաջ վարպե-  
տիցդ արդէն նամակ ստացայ, Լեռն-  
ջան:

— Բայց ես ուրիշ բան էլ ունիմձեզ  
ասելու: Բացարէք շնւա:

— Կարող ես առաւօտուն դալ և ա-  
սելիքդ ասել:

— Զալիք, թախիք, չախիք, թախիք,  
դռան հարուածները սաստկացան դըր-  
մից.

— Ահոնջան զժութիւններ մի անել.  
Դուռ ու դուկից նոր մեկանց մեր գըլ-  
խին մի հոււաքել.

— Արլաջան քեզ ասում եմ բաց  
արա, թէ չէ հիմի և եթ ողջ փողոցը  
մէկ գլուխ ուտի կը կանգնացնեմ,  
Զախը, թրախը...

— Կաց, կաց, այ տղայ, ի մը Աս-  
տուծոյ. Եսթեր զու ներս գնա, Վեհո-  
ջան, դեռ շատ գիշեր կայ,

— Զէ, չէ, արշալոյսը, բացուելու  
մօտ է,

— Դեռ արշալոյս ուր է, ինչ ես ա-  
սում, այ տղայ, դեռ Աղամայ մութը  
նոր է կոխել<sup>4)</sup>, ասաց Մարիսաթունը  
և կտուրի լուսամտից զէպի երկինք  
նայեցաւ,

— Աքաղաղները վաղուց կանչել են,  
հացաթուխներնու երկաթագործները

<sup>4)</sup> Լուսադէմից առաջ եղած մութիւն  
ուամիկների կարծիքով, Աղամը  
դրախտիցը արտաքսուեցաւ.

վաղուց վեր կացած աշխատումնն. Դէնէ  
բաց, արլաջան և անթագործութեան մասին  
— Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
որբոյ. Եսթերի մայրը երեսը խաչա-  
կնքեց և բռառը բացաբաւ. Նա նախ  
դլուխը դուրս հանեց, աղջամզին մէջ  
այս և այն կողմը նայեցաւ և ապա Ան  
թառեանին ներս առնելով գուռը կող-  
բեց:

ԺԶ.

Երեքով միտսին ելան տան սէքիւն  
նստեցան. Եսթերը, և Անդիցը բաւական  
հեռու, մօր կշտին նստեցաւ. Մար-  
իսաթունը կեսային շտապեցնում էր,  
որ սա չուտով իրան ասելիքը ամէ ու  
գնա, ֆեսան նազուտուզ էր անում.  
Մի այդպիսի ժամանակ հայրական տա-  
նից դուրս գալը Լիոնը այսպէս մեկնեց:  
Հօրս հրամանաւ, ասաց նա, ծառալին  
հետ գնացինք խանը՝ բարվանսարէն—  
և մի ձի գարձեցինք որպէսզի առաւօ-  
տեան վաղ ես գնամ Խլջա վարպետիս

հետ միասին ապրանքները բերելու և  
վակի յանձնարարական նամակը մու-  
թասարիփին տալու։ Ծառան զնաց  
տուն, իսկ ես, դարձեալ հօրս հրամա-  
նաւ, եկայ այստեղ ձեզ միամտացնե-  
լու։

Այդ խօսքի վրայ Մարիսաթունն ու  
Եսթերը Անթառեանին յայանեցին Հա-  
սան-աղայի վերադարձը և ոսկերչու  
նամակն ու համրիչը Լեռնին ցոյց  
տուին։ Լեռնը շատ ուրախացաւ և ի-  
րան հերթում ծոցիցը մի ինչոր նամակ  
հանելով կարգաց նոյնպէս։ Նամակը  
իբր խոստացուած նամակն էր, որը Ես-  
թերին չը տուեց կարգայոււ, պատճա-  
ռաբանելով թէ նրանում կային այն-  
պիսի կետէր, որոց մասին Գրիգոր-ա-  
ղան իրը հրամայած էր կնիկ-արժատ-  
ներից ծածուկ պահել, Մարիսաթունի  
մարգարէութիւնը իսկ և իսկ կատա-  
րուած էր, Այնուենամ, մինչև արշալոյ-  
սը բացուիլը, մինչեւ ձիաւորի գալը,  
Անթառեանը խնդրեց որ իրան թոյլ

տան այնտեղ մնալու։ Դրացիներից այլ  
ես երկիւղ կրելու վտանգ չը կար, ո-  
րովհետեւ, ասումէր Լեռն Անթառեանը,  
հայրս վաղը և եթ դրանց բոլորին էլ  
պէտք է բանդարգել տայ, եթէ համար  
ձակուին միւսանգամ ձեղ կամ իմ վրայ  
խէթ աչքով նայել, կամ մեզ անպա-  
տաւել. Վերջին բացատրութիւնը շատ  
լաւ ապաւորութիւն գործեց թէ Մար-  
իսաթունի և թէ մահաւանդ Եսթերի  
վրայ, Սրանք թոյլատրեցին Լեռնին  
մինչև արշալոյսի բացուիլը մնալ իրանց  
մօտ։ Դշխուհինի հիւանդութեան և մա-  
հուան առթիւ դարձեալ առարկայ ե-  
ղաւ, ի վերջոյ Անթառեանը դրակա-  
նապէս յայտնեց որ իրան Եսթերին  
հետ նշն ուած լինելը ծնողացը մէջ ար-  
դէն վերջացած բան է, միայն ի պա-  
տիւ ախալցիսացի Մարկոս-աղային, այդ  
Այնը առայժմ չը պէտք է դուրս հա-  
նել մինչև 15 20—օր.

Պատանին դրսում բաւականին մըր-  
սած էր, Նրա խնդրանօք և Մարիա-  
թունի թոյլտուութեամբ Եսթերը նշա-  
նածի քամակին մի շալ ձղեց, կռան-  
տակին մի բմբուլ բարձ դրեց: Մար-  
իաթունը անդադար նայում էր երկն-  
քին: Աղամայ մութը զեռ ևս անցած-  
չէր, Զոքանչը մի պզտիկ ամանով չոր-  
միրդ բերեց և վեհայի առաջը դրեց, որ  
ոս էկէմիշ լինիք ժամանակ անցկաց-  
նէ: Խնքն էլ թեշիկը առնելով սկսաւ  
մանել: Լեռնի թափանձանօք Եսթերը  
իրան բան ու գործից ազատ մնաց: Ա-  
զատամիտ Մարիաթունը թոյլ տուեց  
աղջկան իրան նշանածին հետ խօսակ-  
ցելու: Խնքը, Մարիաթունը, նստած էր  
երկու ջահիլների մէջ տեղում:

— Խաղ, տաղ, բնաւ չը զիտես, Ես-  
թեր ջան, հարցրեց վեսան նշանածից:  
Աղջկայ տեղակ մայրը պատասխանեց  
վեսային,

— Հօ Եսթերս <sup>աշխարհ</sup> չէ, ոչ էլ ձայ-  
նաւոր տիրացու:

— Ավսոմ որ բուլկարիս <sup>1)</sup> մօտս չէ,  
արլաջան, եթէ ոչ ես թէ կածէի և թէ  
կ'երգէի: (Լեռնը լաւ բուլկարի ածել  
իմանում էր):

— Դէ՛ն, ծանր չնորհքնվ կացիր,  
Լեռնջան, Հիմի բնչ բուլկարի ածել՝  
կամ երգելու ժամանակ է: Համբերիր,  
որդի, մի քիչ էլ սպասիր... օրը դայ  
քարին հետը: Գունդ փախցնելու հա-  
մար, եթէ ուզում ես դու հանքեր <sup>2)</sup>  
ասա, Եսթերս թող լուծէ:

— Ես հանք չը զիտեմ, թող Եսթե-  
րը առաջարկէ, ես ինքս կը լուծեմ:  
Եսթերջան, Եսթեր, իրաւ մի քանի  
հանք ասա:

— Առաջ դու ասա, յետոյ ես:

— Ոչ, առաջ դու, յետոյ ես:

— Եսթերս ուզիդ է նկատում, ալ-  
զամարդը դու ես, առաջ դու սկսիր:

— Ես իմ զիտեցած հանքերս մոռա-

<sup>1)</sup> Փոքրիկ սաղ.

<sup>2)</sup> Հանելուկ.

ցած եմ. թող Եսթերը առաջ սկսէ,  
արլա, մինչև ես կը մտարերեմ:

Հա, չէ, չէ, հա, կը լինի, չի լինի,  
յարմար է, յարմար չէ—վերջապէս ո-  
րոշուեցաւ որ նախ օրիորդը սկսէ. Ես-  
թերը սկսեց.

— « Հանք հանք հրամանք, եօթը վը-  
ռան դէմ առանք»—այս բնչն է,

— Եսթերջան, այդ մեծ պասն է:  
Եւ շատ յարմար է դալիս մեր...

— Դէն հիմի դու ասմ:

— Դու դեռ մէկն էլ ասմ, յետոյ  
ես կ'ասեմ.

— Զեմ, չեմ, դու ուզում ես ինձ  
խարել,

— Զէ, Աստուած է վկայ, Եսթեր-  
ջան, ես քեզ չեմ խարում: Դու դեռ  
մէկն էլ ասմ մինչեւ ես կը մտածեմ:

— Դէն, ասմ, Եսթերջան, վկաս  
չ'ունի, դու մի հանք էլ ասմ. Մայրը  
աղջկան նորից իրաւունք տուեց. Ես-  
թերը էլի սկսեց:

— « Այստեղ կուկօւղ <sup>3)</sup>, այնտեղ  
բուբուղ <sup>4)</sup>, ամեն մարդ էլ կանգնի  
գլխուս»—այս բնչն է:

Լեռնը մտածմանց ընկաւ: Մայր ու  
աղջիկ սկսան ծիծաղել Լեռնի վրայ, որ  
այդ հասարակ, սովորական հանքը չը  
կարողացաւ իսկոյն լուծել, այլ մտա-  
ծում էր: Բայց Լեռնը ուրիշ բանի վր-  
այ մտածում էր: Այդ հանելուկի բա-  
ռերը, իմաստը, պատանին շատ յար-  
մար զտաւ իրան վիճակին: Զը գիտեմ,  
Եսթերջան, ասաց Լեռնը: Բայց այդ  
հանքը հօ դու իմ մասին չ'ասացիր, հո-  
գիս, այդ հօ ես ինքս չեմ, Եսթերջան:

— Քան, քան, քան, քան, մայր ու  
աղջիկ նորից ծիծաղեցան:

— Աւելն է, Լեռնջան, աւելը, Մար-  
խաթունը ինքը լուծեց հանելուկը: Ա-  
ւելն է, որ ամեն տեղ և ամեն մարդու  
ուսքի տակ վայր է ընկած: Ոնթառ-

<sup>3)</sup> Կկղալ, վայր ընկնիլ.

<sup>4)</sup> Բբղիլ, գլուրուկի վայր ընկնիլ.

եանը էլի մտածմունքի մէջ ընկաւ,  
— Այժմ հերթը քոնն է, ասաց Ես-  
թերը:

— Երեքը երրորդութեան նշան է,  
Եսթերջան, գու մէկն էլ ասա, այնու-  
հետեւ հերթը ինձ է զալի և ես անպատ-  
ճառ կ'ասեմ:

— Երկայն աղիք, ծայրը ծաղիկն —  
այս բնչն է:

— Այդ մօմն է և նրա ծայրի լոյսը,  
Եսթերջան:

— Դէս հիմի գու ասա,  
— Կարճիկ աղիք, ծայրը ծաղիկն —  
այս բնչն է, Եսթերջան.

— Գարձեալ մոմն ու ճրագն է, կար-  
մրելով Եսթերը պատասխանեց և վեր-  
կացաւ աշտանակի մէջ մի նոր մոմ  
անցկացրեց, Առաջուայ մօմը արդէն  
հանգչելու մօտ էր:

Շատ նոր նոր հանելուկներ առա-  
ջարկուեցան երկու կողմից, այնպէս  
որ վերջ ի վերջոյ Անթառեանի քունը

տարաւ: Գիթոտ զոքանչը նրա զվահի տա-  
կի բարձը կամացուկ ուղղեց, վրան մի  
թեթև վերմակ ձգեց և ճրագը փեսայի  
աչքիցը հեռացրեց: Մի քիչ յետոյ  
նշանածի օրինակին հետեւցաւ և Ես-  
թերը: Գորովագութ մայրը սրան վրան  
էլ ծածկուածեց: Իրան քունը փախցնե-  
լու համար էլ՝ Մարիսաթունը բղուղից  
մի քանի կտոր թթու հանեց կրկին և  
թէ ուտում էր, թէ թէշիկ մանում:  
Մըթուն կնիկ-արմատը իրան աչքերը  
կտուրի լուսամուտիցը չէր հեռացնում:  
Աղամայ մութն էլ, գժբաղդաբար, չէր  
անցնում: Գրեթէ ամբողջ 24 ժամկայ  
յոգնածութիւնը Մարիսաթունիցը ևս  
քուն էր պահանջում: Զահիլների մնոյշ  
մշմշոցը վերջապէս արթուն կնոջ աչ-  
քերն ևս կամաց կամաց գայթագղեց-  
րին և Մարիսաթունը չորս անգամ կըն-  
քուարտում էր, մի անգամ թէշիկ  
պտտացնում: ի զուր չէ ասած թէ  
աքունը քուն է բերում: ի վերջոյ

Մարիսաթունը ևս անզգայաբար զլուխը  
փոքրիկ աթոռին դէմ տուեց, որպէսզի  
մի կունք, մի փոքրիկ կունք միմիայն  
առնէ, մէկ աչքերին օջիջուն կոտրէ»  
և ապա վերկենայ ու փետային ճամրու  
դնէ: Բայց, ասած է, օխորհուրդ մարդ-  
կան, կամք Աստուծոյց:

ԺԵ.

Գիշերը վրայ էր հասել, բայց Լեռն  
Անթառեանը չը վերադարձաւ. Առա-  
ջին անդամն էր, որ պատանին հայրա-  
կան տանից փախ տուեց: Այր և կին  
Անթառեանների համար Լեռնի այդ  
վարժունքը սկզբում մի հանակ թուե-  
ցաւ, բայց հանակը յետոյ եղաւ դադա-  
նակ»: Մարդուցը աւելի Արէդնազանը  
ինքը աւելի տակ ու վրայ էր լինում:  
Անդադար ծառային ուղարկում էր այս  
և այն ազգականի ու բարեկտմի տունը,  
բայց ծառան յետ էր գառնում միշտ  
ունայնաձեռն, Լեռնը ոչ մի տեղում  
չը կար: Մենք դիտենք որ սկզբում

առաջի իրիկուանէն նա ոսկերչու տանը  
ևս չէր:

Մինաս-աղան — Գրիգոր-աղայի փե-  
սան — կնոջը հետ միասին վերկացաւ ա-  
ներձագ-աղայի տունը եկաւ, որը որոց  
լինելը իմանալու և աներձագին ու նրա  
կնոջը յուսադրելու համար: Արէդնա-  
զան-խանումը այդ ժամանակ, կարծես  
մի ձագակորոյս մատակ առիւծ դարձած  
լինէր: Գլխի մազերը պոկելով, ոտքերը  
գետնին խփելով բարկացայտ և սպա-  
ռացայտ նա պահանջում էր մարդուցը  
որ սա ինքը գնայ և իրան ձեռքով  
գտնի որդուն:

— Տղաս զլուխն առաւ կորմաւ արդ-  
եօք... զետն ընկաւ խեղդուեցաւ...  
վէրի մըջ զլուտունցաւ... գայլ ու գա-  
զանի կերակուր եղաւ... ել, ել, անաս-  
տուած, անօրէն, ինչ նստել գու ծխա-  
խոտիդ զօռ ես տալիս, ել զնա և բեր  
Լեռնիս, ձագաւկիս, գառնուկիս, մէկ  
ու ճար զաւակիս... հը, հը, հը... մար-

դու երեսն ի վեր նախ աղաջում և ապա լաց էր լինում Արէգնազան-իանումը, Գրիգոր-աղան—ինչպէս ասում են—սքլեր, մուկ էր կտրել, Նա կնոջը ոչինչ պատասխոն չեր տալիս, գուցէ երկիւղ կրելով որ ցերեկը իրան կողմից կնոջը բաժին ընկած շրամիւքներն ու տրամիւքները, կնոջ կողմից այժմ իրան փոխանցուէին, Գրիգոր-աղան խելօք մարդ էր, Նա զիտէր որ մի գիտ միւսին պատահելիս, իրան գաւաղանը չէ ցոյց տալիս, Արէգնազանի հոգեկան դրութիւնը վատ արամագրութիւնումն էր այդ միջոցին, բայց այդ կինն էլ ախր չէր մտածում թէ իրան առաջարկութիւնը խելքի մօտիկ բան է, Անթառեանը, Գրիգոր-աղան, գիշեր ժամանակ էրգուրումի փողոցները ընկնի և պտուէ, ձւմ—Լեռնին, իրան որդուն, աւելի հեշտ է այդպիսի որդուց զրկուել, քան 40 տարվայ պատիճն ու համարմունքը էրգուրումցիների աչքում ոսնատակ անել,

Գրիգոր-աղան մեռնել չէ ուզում ինչ թէ նրան չորս հոգով չը տանեն գերեզմանատուն, այդ անխելք կինը հիմի կանգնել է ինչեր է ասում—յանուն Հօր և Որդւոյ և Հոգուն Սրբուն,

Գրիգոր-աղային ոչ միայն իրան հաշւոյն չէր գալիս այդ բանը, այլ նա այդ անյարմար համարում էր մինչեւ անգամ Մինաս-աղայի համար, Բայց այդ բարակ բաներից այնքան տեղեկութիւն չ'ունեցող Արէգնազան խանումը իրան ասածի վրայ պնդում էր միշտ, Արէգ-նազանը ախր «Երկայնամազ» կնիկ-արմատ էր, Ճար չը կար, պէտք էր վերջապէս մի կերպով հանդարտեցնել Արէգնազան-խանումին, Վիճակը Մինաս աղային ընկաւ, Վերջինս վերառաւ տան ծառային և ընկաւ Էրզուրումի փողոցները, Ոսկերչու տան երթի կը-տուրից Մինաս-աղան երկու անգամ լրտեսնց և տեսաւրուոր լեռնը, դժբաղ-դաբար, այնտեղ էլ չը կար,

— « Տնաւեր, տնաւեր, ել, զնա որ-  
դուս գտիր, բերա—տիկին Արէգնազա-  
նը Գրիգոր-աղային հետ շարունակ կը-  
ոիւ էր տալիս, երբ Մինաս-աղան էր-  
զուրումի փողոցները չափչփում էր,  
Խեղճը այս կողմն ընկաւ, այն կողմն  
ընկաւ, ոտքերուն կաշին կերաւ և վեր-  
ջապէս—տան զաղանիքը ողջ էրզու-  
րումում չաւ անելից յետոյ—մի չա-  
ցաթուխի մօտ Լեռնին գտաւ: Ոչինչ  
բանով պատանին չը համաձայնեցաւ  
հօր տունը դառնալ: Առածը ասում է:  
«անձարը կերել է չաչ ու բանջարը»:  
Մինաս-աղան հացթուխին պատուիրեց  
— «ի քանի դուռուշ էլ ՞փող ընծայեց  
— որպէսզի Մրտօն (հացաթուխը այդ-  
պէս էր կոչվում) Լեռն-աղային լաւ  
մտիկ տայ, Գրիգոր-աղայի որդուն վը-  
րայ զիշերը լաւ ծածկուտէ, առաւօ-  
տուն էլ, մինչեւ Մինաս-աղայի կրկին  
այնտեղ գալը, պատանուն բաց չը թու-  
նէ Մրտօն: Մինաս-աղան հեռացաւ:

Հանապարհին նա կրկին և կրկին պա-  
տուիրում էր ծառային, որպէսզի Գը-  
րիգոր-աղայի և Արէգնազանի առաջ ի-  
րան ասելիքները—Լեռնի վերաբերու-  
թեամբ—ծառան ինքն ևս իրան կողմից  
հաստատէ, օլէնթթ ու խելառ. բաները  
չը դուրս տայ իրանից:

— Հը, գտար, տեսար, այս եղաւ Ա-  
րէգնազանի առաջին խօսքը, երբ Մի-  
նաս-աղան ներու մտաւ:

— Գտայ, տեսայ, միամիտ եղէք.

— Ուր, որտեղ, ում տանը, ինչի  
հետզ չը բերեցիր:

— Քնած էր, չուզեցի քնաթաթախս  
անել, ասաց Մինաս-աղան և միառմի  
պատմեց թէ ինքը ինչպէս զիւրու-  
թեամբ գտաւ Լեռնին թէողորոս-աղայի  
(որ Գրիգոր-աղայի հօրեղբայրն էր) տա-  
նը: Մինաս-աղան երկու ժամի չափ  
թէողորոս-աղայի տանը իրը նստեցաւ,  
ծերունու հետ երկար խասեցաւ: Նոքա-  
զանվայ իսմեցին: Կողոպտուած կարա-

ւանի մասին առարկայ բացարին, թէ-  
ոդորոս-աղան թէ շատ ուրախ էր  
որ իրան եղքօր որդի Գրիգոր-աղան էր,  
զուրումից մեկնելից առաջ մի անդամ  
ևս առիթ ունեցաւ հայրենակիցներին  
օգնութեան համանել և աւաղակների ետ-  
քեփը իսկոյն մի գունդ զօրք ուղար-  
կել առաջ.

— Բայց որպէս հին մարդ—յարակ-  
ցեց Մինաս-աղան—թէողորոս-աղան է-  
լի այն կարծիքիցն է, աներձադ-աղա,  
որ ձեր այսաեղից հեռանալը մեծ սխալ  
քայլ է, թէ դուք ի՞նը թէ Ախալցխայ-  
ումը ևս այն լինելու չէք, ինչ որ այս-  
տեղ էք, թէ մեծ վաստակի ետքեկից  
ձգտողը քչիցն էլ կը զրկուի, թէ...  
մանաւանդ որ Երկիրը, Ախալցխան օ-  
տար է և անծանօթ...

Ծերունի հօրեղքօր այդ և այդպիսի  
առակները առաջին անդամը չէ՛ որ  
Գրիգոր-աղան լսում էր, ուստի և, ինչ-  
պէս մինչեւ հիմայ, այս անդամես դար-

ձեալ բանի տեղ չը դրեց ձերունու  
խրատները: Անթառեանը դարձաւ դէ-  
պի ծառան:

— Ո՞, անպիտան, ուրեմն դու հօր-  
եղքօրու տանը եղած չես: Տրամաք, ծխա-  
փայտի մի կոթ հասցրեց Գրիգոր-աղան  
ծառայի զլեմին: Նա պատրաստվում էր  
երկրորդ հարուստը տալու, երբ Մինաս  
աղան ձեռքիցը բռնեց տակլով.

— Զուր տեղը ծառային ինչի խը-  
փում ես. նա ոչինչ յանցանք չ'ունի  
Եւ Մինաս-աղան միառմի պատմեց, ի-  
բըր զթէ ծառային թէողորոս-աղայի  
տանը հանդիպած ժամանակ Լեռնը այն-  
տեղ չէր և չէր կարող լինել: Այդ ժա-  
մանակ Լեռնը—շարունակեց Մինաս-  
աղան իրան ստութիւնները—թէողորոս  
աղայի հետ գնացած են եղել մեծառ-  
րի<sup>1)</sup> մօտ: Նրանք չեն իմացել թէ օ-

<sup>1)</sup> Առաջնորդ՝ գաղթականները մինչեւ  
հիմայ այդպէս են կոչում իրանց հոգե-  
ւոր հովուին:

բերումս մեծաւորը շրջում է վիճակում։  
Մեծաւորի մօտ զնալուն պատճառը  
թէոդորոս-աղան չ'ասաց ինձ, բայց  
վաղը և եթ քեզ պէտք է ասէ, կար-  
ծեմ առարկան լեռնի ու ոսկերչու  
աղջկայ մասին է, թէոդորոս-աղան ծե-  
րութեան աշխարհայ նշաններ է ցոյց  
տալիս Նա, կարծեմ. այն կարծիքի է,  
աներձագ-աղա, որ լեռնի միտքը ծու-  
ռըն է, թէ պէտք չէ այդ աստիճան  
ընդգիմանալ նրա ցանկութեանը...

— Պէ, հէրիֆ<sup>2)</sup>). ի զուր չէ ասած.  
«Եօթանասունն անց, խելքն արդէն գըլ-  
խից թռած», բացագանչեց Գրիգոր-ա-  
ղան և տեղիցը վերկենալով ծիսախոտը  
նորոգեց, Նա լուռ էր, ։ Մատածմունք-  
ները շատացան,

Մինաս-աղան և իրան կինը շատ աշ-  
խատեցան այր և կին Անթառեաններին  
հաշտացնել մէկոմէկու հետ, բայց այդ  
անկարելի եղաւ, Արէգնազան-խանու-

<sup>2)</sup> Խռված ծեր.

մը իրան արածների վրայ ստրջացած  
էր, բայց այդ արդէն ուշ էր, Արդէն  
գլուխիակը երթքից անց էր կացելու:  
Գրիգոր-աղան շատ մեծամիտ էր, Կինը  
չէ, ով ուզում է թող լինի, Գրիգոր-  
աղան կատակներ չէ սիրում, Եթէ Լե-  
ւոնը Արէգնազանի որդին էր, իրան  
հերթում Գրիգոր-աղան էլ Արէգնազա-  
նի մարդն էր, 25 տարվայ երիկն էր,  
Արէգնազանի գլխուն աէրն էր:

Ուրիշներիցը, մինչեւ անգամ փաշա-  
ներից ու վալիներից, Գրիգոր-աղան չէր  
լսուծ այն խօսքերը, ինչ որ արդ երեկո-  
յին նա կնոջից լսեց, Դուրս է գալիս  
ուրեմն որ Անթառեան Գրիգոր-աղան  
առրիշին խրատող է, իսկ իրան տան  
մէջ լոլողող<sup>3)</sup>: Քսան և հինգ երկար

<sup>3)</sup> Անհոգ, անփոյթ.

տարիներ մարդուն զիմաց ձայն, քըսկ-  
տուն անգամ հանել չը համարձակող  
Արէգնազանը, երբ ուրեմն մի օր ձե-  
ռին «Ֆրուանտ»<sup>4)</sup> ունեցաւ, այլպիս  
վարժեցաւ, հաւ ջարին մի զատիկ, այն  
էլ հաւակատիկ, հաւ:

Մինաս-աղան և իրան կինը որոշեցին  
այլ զիշերը Անթառեանների մօտ անց-  
կացնել, որպէսզի Գրիգոր-աղայի և Ա-  
րէգնազան խանումի մէջ մի նոր բան  
չը պատահի, նրանց մէջ տեղից մի  
նոր սե կատու չ'անցկենայ: Արէգնա-  
զանը հիւրերին միւս սենեակը հրաւի-  
րեց, որպէս զի ընթրեն: Գլխոր-աղայի  
ախորժակը գեռ ևս բացուած չէր: Նա  
իրան համար ման էր զալիս և մտա-  
ծում էր: իսկ մտածելու բաներ, փառք-  
Աստուծոյ, Գրիգոր-աղան շատ ուներ,

<sup>4)</sup> Առիթ:

Սի ընդհանրացած կարծիք կայ թէ  
տաճկահայերը ճնշվում ու հարստահար-  
վում են թէ տիրող աղքից և թէ քըր-  
դերից: Այդ կարծիքի ճշմարտոթիւնը  
բոլորովին ծխակ անկարելի է: Բայց  
տաճկահայերի համար հիմէ կայ մի խնկա-  
պէս հարստահարող տարր-դա հայկա-  
կան այս կամ այն դասակարգն է:  
Ուամկօրէն զրան տսում ենք զկոթը  
մեզն ից է»:

Այդ կոթերը Եզած են և կը լինին:  
Նրանց արդարացնելու համար շատ և  
շատ հիմունքներ կարելի էր առաջ բե-  
րել, բայց մենք խօսում ենք իրաղու-  
թեան և ոչ պատճառների վրայ: Եւ  
խօսում ենք միմիայն Անթառեան Գր-  
իգոր-աղայի վրայ: Մենք գիտենք որ  
այդ մարդը մեծ յարգ ու պատիւ վայե-  
լում էր Եղդուրումի թէ հայերի և թէ  
աէրութեան պաշտօնատար անձինքների

կողմից։ Նա բաւականին նշանաւոր դեր էր խաղում տիրող իշխանութեան և սրա հպատակների մէջ, էրզուրումի վալիների նպատակները այնքան շատ ու բազմակողմանի չեն, կաշառակերութիւն—ահա այդ պաշտօնատարների ամենազլիաւոր նպատակը։ Այդ նպա, տակին շատ յարմար գործիք էր Գրիգոր աղան, Մենք տեսանք որ էրզուրումի վաճառականները Անթառեանին ձեռքով հարիւր լիրայ տուին վալին։ Պէտք է զիտնալ որ այդպիսի յանձնարարութիւններ յանձն առնելը և կատարելը Անթառեանի համար առաջին անգամը չէր։

Քսան տարի շարունակ, այլ և այլ միջոցներով, Գրիգոր աղան կեղեքքում և հարստահարում էր էրզուրումի հայերին կաշառակուրծ պաշտօնատարների սնյագ կոկորդներին բաւականութիւն տալու համար։ Ահա թէ իսկապէս

ինչով պէտք է մեկնել Անթառեանի մեծակշիռ զիրքը Անաղօլիայի մայրաքաղաքում։ Անթառեանները կարող են շահասէր լինել, փառասէր լինել, կարող են այս ու այն անձնական յատկութիւններն ու ձգտումները ունենալ աչքի առաջ, երբ նոքա գործում են օտարի համար։ Այդ յատկութիւններից եռոչ մէկի համար նրանք, իմ կարծիքով, այնքան զատապարտելի չեն, որքան իրանց տիգիտութեան, կարճատեռութեան համար։ Եթէ նրանք կարճատես չը լինին, չեն զնալ իրանց ընտրած հանապարհով, որի փայլում շափկներն ու կողմերն միմիայն տեսնում են, իսկ այն վիճը, որ այդ ձանապարհի գլուխ փորած է, յատկապէտ իրանց համար, նոքա այդ չեն տեսնում։

ինքնապաշտպամութիւնը մի սրբաւ-  
զան դպացմունք է, որ բնութիւնը դը-  
րած է մարդուն և ամեն մի կենդանու  
մէջ:

Անթառեանին էրգուրումից մեկնիլը  
վալիի սրբումը չէր: Կա նորանում  
կորսնցնում էր մի անձն, որից մեծ  
վաստակ ունէր իրան գրպանի համար  
և մեծ օգնութիւն իրան վարչական  
գործերի համար: Ալիին այդքան պի-  
տանի լինելից յեազ այդ Անթառեանը  
այժմ յանդգնութիւն է ունենումթող-  
նել էրգուրումը, Ո՞նց չէ, Կա, ասենք,  
ազատ հպատակ է, կարող է գնալ,  
լինչու չէ, սայց նախ քան գնալը Ան-  
թառեանը պարտական է իրան սեպ-  
հական գրպանից միանուող վճարել  
վալիին այն, ինչոր տարիների ընթաց-

քում վճարելու էր ուրիշներից հաւա-  
քելով: Ուզում եմ ասել կարաւանի  
կողապտուիլը վալիի իրան սարքած քա-  
նըն էր և զիմաւորապէս Անթառեանի  
համար:

Այս վաճառականները այս անգամ  
Անթառեանի իրան զոհելոն էին - ախր  
ի զուր չէ ասած թէ ամեզաւորի երե-  
սից արդարն էլ կը թմրի»..

ՓՊ.

Երբ պատգամաւորութիւնը սարայ  
համաւ, վալիի կողմնց մեծ սիրով ըն-  
դունուեցաւ: Գրիգոր-աղայի բոլոր  
խնդրուածքները կատարուեցան: Անք  
զիտենք որ զողեւի եաքելից վալին իս-  
կոյն զօրք էլ ուզարկեց: Ուրախացած

Անթառեանը — վալիի մօա առանձնատպէս ոշէքէլլի դահուան» անոյշ անելից յետոյ — երբ գառնում էր տուն, չար լեզուները զանազան վրաղիրներով հաղորդեցին նրան այն լուրերը, ինչոր կեռնի մասին խօսուում էր այդ միջոցում Երզուրումի մի քանի փողոցներում, Խեղճ Գրիգոր-աղան կարծես կայծակնահար եղաւ,

Նա հիմայ խելամուտ եղաւ այն փոփոխութիւններին, որոնք որդուն վրայ երբեմն-երբեմն նկատած էր րայց րանի տեղ չէր զրած, Մինչդեռ հիմի բանից զուրս է զալիս... ինչ... չոս ու պինչ... և Խաղը մնաց Խշտիկին իսկ պարը կաղինու: Միթէ... Տէր Աստուած... միթէ այդպիսի բան Էլ անց է կացել կեռնի մտքից... ոչ, ոչ, այդ ամենն էլ սուտ է... կեռնը հօ բոլորովին յիմար չէ... նա չը զիտէ ախր թէ ինքը ում որդին է... Այդ բանը այդ երազը պէտք է շուտով, շատ շուտով,

ստուգել ու ստուգաբանել: Գրիգոր-աղան տուն հասաւ և մենք արդէն գիտենք որ փողոցում ականջին հասած երազը խեղճի համար մէկ գլուխ ինչպէս պարզուեցաւ:

Երբ միւսները միւս սենեկում ընթրումէին, Գրիգոր-աղան իրան առանձնարանում ծխախոտին զօռ տալով լեցնում ու գտարկում, չափում ու չափչփում էր, ծամանակ առ ժամանակ էլ քթի տակով նա մոթմոթում էր, կարծես երգում լինէր, Գրիգոր-աղայի այդ մաթմաթոցին ուշ զրութեամբ ականջ կախողին համար՝ դժար չէր հասկանալ որ Երզուրումի գոռող հայ վաճառականը սրտի խորքերիցը լաց էր լինում:

Աշբ զըր, զիւնէ զիւշղիւմ  
Քեօլկէզէն կիւնէ զիւշղիւմ  
Մինայիպ, կեօզն չըքսն  
Գեղըզըն զիւնէ զիւշղիւմ:  
Աշբ զըր, քիմէ կէտիւմ

Քիմոէմ եօդ, քիմէ կէտիմ  
Պուն զէրտի սէնդէն բուլդում  
Գէրմանայ, քիմէ կէտիմ<sup>1)</sup>,  
Արագածու բնակչութիւն պահա-  
նական սէնդէն պահան սէն-

Աղամայ մութը նոր էր կոխել, Ա-  
քաղաքը իրան ծովուղուն դեռ առա-  
ջն անդամն էր կանչում: Հացաթուկ  
Մրտօն տեղիցը վերկացաւ, մի երկու  
ափ ջուր երեսն ի վեր սրակեց, սըր-  
բուեցաւ ու խաչակն քուեցաւ: Յետոյ

<sup>1)</sup> Աշըդ, այս թէ օրի ընկայ,  
Շուաքիցը արեն ընկայ:  
Ո՞վ բազզ, աչքերդ կուրանան,  
Քո ցանկացած օրին ընկայ:  
Աշըդ, թնչ անհմ, ուր գնամ,  
Ոչոք չունիմ, ում մօտ գնամ,  
Այս ցաւը քեզնից տամ  
Կեզի համար ուր գնամ:

տեսնելով որ իրան անկոչ հիւրը հան-  
դիսու քնած է, ձէթի կանթեզը պատից  
վեր առաւ և աշայր մերն ասելով վըռ,  
համանից ցածր իշաւ, թիերը վեր քա-  
շեց Մրտօն, ալիւրի տօպրակը բացա-  
րաւ, մազը պատիցը վեր բերեց և  
սկսեց ալիւրը մաղել, մաղել և իրան  
սովորական երգն երգել:

Մազը պատիչն իջուցի, իջուցի,  
Ալիւր, Եկ մաղեմ քեզի, ևս քեզի.  
Թըքըլէ, Փըթըլէ, Թըքըլէ, Փըթըլէ:  
Սչու զաշտի ցորնի հատ—ուկէհատ  
կըծած, սնած Բիւրակնի ջուրը առատ  
Թըքըլէ, Փըթըլէ, Թըքըլէ, Փըթըլէ:  
Գոչզոչանի<sup>2)</sup> սասը ջրովը շաղուեն  
Տաշտիդ վրայ ևս զիմ, մուշտակ կը  
ձգեմ,  
Ոխխայ, օխխայ, տաքուկ, փափուկ,  
Խմորը կ'աճի, հայ հույ, տաշտ կը  
կոտրի

<sup>2)</sup>) Մի ջրպէժ էրգուրումի մօտ:

Ծովին ելեր զիւր, հայ հնոյ, ափ կը  
պատռի  
Ֆըշ-ֆըռաշ, ֆըշ-ֆըռաշ, ֆըշ-ֆըռաշ:  
Թիմկ, մսոս թիմկներդ հասուր.

Տաս մատներէդ առագաստներ կախ-

տուր:

Եափ-շըրփ, շափ-շըրփ, շափ-շըրփ:

Բասենի մեծ-մեծ զերաններ կչկչան,

Առմին, բուլում<sup>3)</sup> զիմ փոփ մէջ

պար կուգան,

Քըժ-զըժ, փըս-թըս, ֆըշ-փոքշ:

Կարմիր թշիկ, պուխար մառմառ,

Հայ-հայ,

Ցիսուն փարի հացը արի ինձմէն մռ

Ա՛ռ, մռ, բալմամ, աղմայ, արի հացը

ինձմէն մռ,

Հացաթուխին ողեսլող այս երգի ա-

նոյշ եղանակից լեռնը զարթեցաւ:

Փռնատանից նա կամացուկ ցածր իջաւ,

Դրսի զուռը զգուշութեամբ բացեց և

<sup>3)</sup> Հացի տեսակներ:

գնաց: Մենք գիտինք, որ պատաճին  
այժմ իրան աներանց տան, նշանածի  
կշտին քնած է:

ԻԱ.

« Ինքը քուն, մեղքն արթուն, ա-  
սում է ժողովրդական առածը և կեան-  
քը իրան ամեն մի քայլափոխում ար-  
դարացնում է այդ առածի միտքը:

Աղամայ մութն էլ էր անցած, ար-  
շալոյսն էլ էր բացուած, բոլոր քաղա-  
քի զուռ ու երթիկը բաց արած, բայց  
մի կունք առնելու համար զլուխը ա-

թուսին վրայ կռացնող Մարիսաթօւնի  
հետ կեռն ու Եսթերն էլ տակաւին խոր  
քնի մէջ էին: Առաւոտեան հով քամին  
երթքից խփել հանգցրել էր ճրագու-  
մումը, որի հալուած կեղաերը գունդ-  
գունդ աշտանակի կողքերից կախ էին  
ընկած, Արեգական ճառագայթները

շեշտակի խփելով Մարիսաթօնի քա-  
մակին, տաքացնումէին նրան և աւելի  
խորկացնում խոնջած կնկայ քունը:

Դռան առաջ գիտուած կենդանիների  
թարմ կուրց առաւոտուն կանուխ ձեռ-  
ցաթար պատրաստելով և չափ, չըրփ  
պատի արեգկողին խփելով, Օդիզա-  
անան, զարմանում էր թէ այդ ոնց է  
պատահել որ այդ առաւօտուն Մար-  
իսաթօնի տան գուռը դեռ ևս բա-  
ցուած չէ: Բայց իրան-իրան մտածում  
էր հինաւուրց պառաւը՝ անամօթրինչ  
երես ունի որ գուռը բանայ և Աստու-  
ծոյ ու դուռ ու գոկցի վրայ մտիկ  
տայ: Անտառները, լեռները, սարերն  
ու ձորերն են այդպիսիների տուն աւ  
բնակարանը, քննի ատկավ փնթփըն-  
թում էր Օդիզա-անան, և ոչթէ քա-  
ղաքներն ու գիւղերը Շննը, դայլը,  
գաղանը, ինչ բան ու գօրծ ունին  
մարդկանց մէջ... Անզայ Տեան, մե-  
զայ Տեան, ում մարիցն էր անց:

նում, ով էր նրազում որ մի օր Մար-  
իսաթօնի ու նոթերի նման շուն ու  
շնորի զոկիցը պիտի դառնայի ես:  
Վայ մեզ, վայ մեր անօրինութեան  
մեղքին... կարծես Ուզոմումն ու Գո-  
մորումը վիճնք... Մեզայ, մեզայ, Ու-  
տուած էլ կարծես երեսը մեղնից բոլո-  
րովին շուռ է տուել: Ո՞ւր է... Նա  
երբեմն երբեմն անձրե ու հեղեղ է թա-  
փում, տուն ու տեղ քանդում, վայ-  
լակ ու կայծակ կածխտեցնում, երկինք  
երկիր իրար խտոնում և անօրէնին  
գլուխը ջախչախում, տուն ու տեղ բը-  
րիշակ շինում, զարմօք զաւակօք հոգ  
ու մոխի ի հետ հաւասարեցնում... այ-  
ժըմ ուր է Նա... այդ Աստուածը...  
վայ ինձ... Եւ երկիւղած պառաւի բոլոր  
մկանունքները ցնցվում էին այս բա-  
ռերը արտասանելիս:

Այդ օրը Գրիգոր աղան սովորականից փող մերկացաւ և փողոց զնաց։ Այնտեղ նա իմացաւ, որ Մինաս-աղայի Լեռնի մասին նախընթաց երեկոյինհագործած տեղեկութիւնը շինովի էր։

Գրիգոր-աղայի ետքեկից փողոց հասաւ և Մինաս աղան, բայց նա շատ գարմացաւ լսելով Մրտօյից Լեռնի փախուսար փոնատանից, վերջին գէպքը Լեռնի ծնողը ու ազգականներին համար պատճառ դարձաւ նորանոր մտատանջութիւնների և խուզարկութիւնների, Հացաթուխը բանդ դրուեցաւ, Ողջ էրզուրումը ձէնձնուեցաւ. Գրիգոր աղայի մունետիկները փողոցից փողոց շրջելով 1000 դուռուշ ընծայ առաջարկում էին նրան, ով որ կարող էր Գրիգոր աղայի կորած որդուն անդ ցոյց տալ։

Աթէ ճշմարիտ է այն առածը թէ ոչատ խելացին, շուտ է սիալվում օայդ առածը Անթառեանի վրայ ճշութեամբ կատարուեցաւ. Զանազան մտածմունքները, գիշերուայ անքնութիւնը, կամ դուցէ ծայրահեղ ամբարհաւաճութիւնը, պատճառ եղան, որ ողջ էրզուրումը, խելք սովորացնող Դրիգոր-աղան, ողջ րոպէ միտք չ'արաւ, թէ որդին կարող է սոկերչու տանը լինել, Բայց ինչ որ մարդը չը մտածեց ու չ'արաւ, նրա կինը մտածեց ու արաւ։

Արէգնազան խանումը հէնց որ եղելութիւնը լսեց, իսկոյն և եթ զրացի Շոգերին հետք վերցրած, զէպի նիվանեօլի փողոցը ուղղեց իրան շտապ-շտապ քայլերը, Բայց նախազգուշութեան համար իրանից առաջ ուղարկեց ծառային, որ գնայ և որը որոց լինելը իմանայ, Հիւմեյինը (ծառան այդպէս էր կոչուում) վազ տալով հասաւ սոկերչու

տունը և չըք, թըք, չըք, թըք, բաղ-  
խում է դուռը, բացանող չը կայ:  
Երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ խը-  
փում է Հիւսէյինը, դարձեալ ձայն ու  
ծպտուն չէ լսվում ներսից:

— Բաղնիս զնալու ժամանակ չէ, ի-  
րան-իրան դատում էր Հիւսէյինը, ե-  
թէ եկեղեցի են զնացել, այդ ոնց է  
պատահել, որ դռան աղիք կողբած  
չեն, եթէ տանն են, այս միջոցիս չեն  
կարող քնած լինել, ուրեմն ինչի դու-  
ռը չեն բացանում: Չափիք թրամփր  
չափիք թրամփր, ծառան նորից սկսեց  
թակել դուռը:

Պառաւ Օղիղան իրան տանիցը դու-  
ռըս եկաւ:

— Անմ, սոքա տանը չեն միթէ,  
հարցրեց ծառան, մէկ ժամ է դուռը  
թակում եմ և ոչոք չէ բացանում:

— Չը գիտեմ, որդի, պատասխանեց  
պառաւը և մտածունը մէջ ընկաւ:  
Կա տառջ եկաւ, Մարիաթունի տան:

գուռը լուս զննեց և էլի մտածում էր:  
Պառաւը գիտէր, նախընթաց երեկոյին  
տեսած էր Մարիաթունին դուռը կող-  
բեկիս, գիտէր որ առաւօտեանից ի վեր  
նրա դուռը զեռ ևս չէր բացուել:  
օֆնյն, աղջ, ինքնասպանութիւն» մի  
վայրկենում կարծես պառաւի աչքի  
առաջ երևացին և նրա խիզճը պինդ  
կերպով խայթեց նրա սիրտը: Ական  
թօթափել Օղիղան աղաղակ հանեց,  
հաբեանուհիներին ձայն տուեց: Մի  
քանի մանուկներ իսկոյն տանս կտուրը  
բարձրացան:

— Ճուացէք, ամուր ճուացէք, որ-  
դիքս, մի վախենաք, զլուխներդ երթ-  
քից քիչ ցածր իշեցրէք, մանուկներին  
խրախուսումէր ներքեից Օղիղան, Հա-  
րեան կնանիք ամենն կողմից հաւաք-  
վում էին:

— «Կրմկ, հրդէհա կանչուռտեկով յան-  
կարծ վեր թռան քնաթաթախ Մար-  
իաթունը, Եսթերն և Լեոնը, Նշկուած

ու չփոթած մէկզէկու հրելով, հըշշ-  
տելով նոքա երեքով միասին դուրս  
թռան: Դուռը բացուեցաւ և երկու  
կողմից էլ զարմանք ու ափշութիւն  
տիրեց:

— Հնչ խարար, էլի ինչ էք հա-  
տքուել, աներեսներ, զայրացաւ Ան-  
թառեանը, և բժոտ աչքերը սրբումէր:

— Բերանդ քեզ հատքիր, անպի-  
տան, ապա թէ ոչ, հիմայ և եթ... Օ-  
դիգան մի քայլ առաջ եկաւ,

Յարխաթուն ու Եսթերը ջուրը լը-  
ցուած դարձան, Նրանք Լոռից խընդ-  
րում, աղաչում էին կամ ներս դալ և  
կամ փողոց դնալ, բայց Անթառեանի  
որդին ուզում էր իրան տղամարդու-  
թիւնը ցոյց տալ կնիկարմատներին:  
Պատանի Անթառեանի և Դիվան-հօլի-  
հայ տիկնանց մէջ սկսուեցաւ կոիւը:  
Չանթ ու բարուջ առաջ եկան: Ոտնա-  
մանների հարուածների տակ պատանին  
տնքտնքում էր, Եսթերը աշխատում էր

մօր ձեռքից պրձնել և իրան սիրեկա-  
նին օգնութեան հասնիլ: Մարխաթունը  
չէր թողնում, աղջկան թակումէր, Կը-  
նանիքներից մի քանիսի գլխի փաթոյթ-  
ները, եազմաները, Լոռի ճանկերի մէջ  
աձուիկ-ձուիկ եղան: մի քանիսի էլ  
քինթ ու պունզը չարդ ոտուեցան:  
Ոտնամաններին փոխանակեցին քարի  
ու կոշտի կտորատանք: Եթէ Հիւսէյինը  
չը միջամտէր մէջտեղում մարզասպա-  
նութիւն տեղի կ'ունենար, Վերջինս  
աշխատում էր որ ճակատամարտը վը-  
տանդաւոր կերպարանք չստանայ:

Փողոցի ծալրում երեեցաւ Ա-  
րէզնազան խանումը: Լեռնը թո-  
ղեց կնանիքներին և ներս քաշուե-  
ցաւ Ամբովի մէջ ծածկուած Հիւսէյինը  
շտապեցաւ իրան խանումին դիմաւո-  
րել և իրան տեսածի ու լսածի մասին  
համառօտ զեկուցում տալ: Արէզնա-  
զանը բարկութիւնից ու առու ամօթից  
իրան իրան ուտելով առաջ էր զալիս:  
Շողերը նրան խորհուրդ էր տալիս չը

պատասխանել կատաղած կնանիլների  
խօսածներին, ապա թէ ոչ — ասում էր  
Արէգնազանին նրա փորձառու հարեա-  
նումին — այս կնանիք մեղ երկուքիս էլ  
այստեղ և եթ բզիկ-բզիկ կ'անեն:

— Քմ, մայրս, Օզիզան բարձր  
ձայնով զիմաւորեց Արէգնազան խա-  
նումին, քմ, դու քո նշանած տղայի-  
ցըք բոլորովին ձեռք ես վերցրել միթէ,  
այս ինչ խաբար. ամենայն օր... ոչ  
ւուր օր զիտէ, ոչ կիւրակէ...

— Ախր մենք էլ մեր ջահիլներն ու-  
նինք, առաջ եկաւ մին ուրիշը, այս-  
պէս ոնց կարելի է... քո տղայիդ պատ-  
ճառով հօ չենք թոյլ տալ որ մեր ջա-  
հիլներն էլ ուրպից կէրպից դուրս  
դան:

— Խանում ես, ինչ զահբուզուխում  
ես, քեզ համար ես, մեղ ինչ, մի եր-  
բորդ կին կշտամբեց Արէգնազանին.

— Եթէ չես կարող տղայիդ կոթել<sup>1)</sup>,

ինչի՞ համար վաստկում ես... այս փո-  
ղոցում մարդիկ են ընակվում, թէ...  
մրայ տուեց մի այլ կին:

— Վայ հողեմ ես քո խանումու-  
թեանը զլիխին, օրով ցերեկով եկել է  
տղան սիրեկանի տանիցն հանելու, հայ,  
հնայ, ձեռքի և դէմքի շարժումներով  
քամահրում էր մին ուրիշը:

Տիկին Աեթառեանը վերջապէս շըն-  
չասպառ Մարիսաթունի տունը հասաւ  
Շրամիք, մի այնպիսի բարկութեամբ  
դուռը խփեց Արէգնազանը, որ ծղինի-  
ների ծեփերը բոլորն էլ վալը թափե-  
ցան:

— Անառակ կին, գոչեց Արէգնազան  
խանումը ուկերչու կնկայ երեսն ի վեր.  
թիւ, մի կոռոփ թքով էլ ծեփեց խեղճի  
երեսը, Յետոյ Շողերի ձեռքերը թափ  
տալով Արէգնազան խանումը, իսկոյն  
Ասթերի մրայ յարձակուեցաւ և ծամե-  
րիցը քաշ տալով, օրիորդին, շընիք,

<sup>1)</sup> Կոթել.

գետին փռուեցրեց, Մարիսաթունի  
ծնկները ծալուցան.

— Ամօթէ, մայր, ամօթ. Լեռնը  
մօր ձեռքից բռնեց, Մայրը նրան յետ  
հրեց և Յոթերին իրան ոտքերի տակ  
առած. կոխկռտում էր, Շողերի ու Լե-  
ռնի բոլոր ջանքաը ազատել օրիորդին  
կատաղի կնկայ ձեռքից, ի զուր անցաւ.

— Մեղքէ, մայր, մեղք, մի փոքր  
խիզճ ունեցըր, Լեռնը էլի պաղատում  
էր մօրը: Բայց Արէգնազանը հաղեկան  
այն դրութիւնումն էր, որ ինչ արածը  
չը զիտէր: Թոյլ տալով օրիորդին՝ նա  
այնուհետեւ սկսաւ Լեռնին կռվիսարել:  
Եսթերի քինթ ու բերանից արիւն էր  
վաղում: Ամենքը իրար անցան: Օղի-  
զան և մի քանի հարեանուհիներ ներս  
թափեցին և կատաղած Արէգնազանին  
բռնեցին. պատանու վրայ հարեանու-  
հիները իրանց ատամները կրծտացնում  
էին: Մինչդեռ Շողերն ու Մարիսա-  
թունը Եսթերին կողքեր' ց ընկած տա-

նում էին նրան դէպի առան ոէքիւն և  
իրանց խրիստոներից հանած բամբակի  
կառողները նրա քիթն ի վեր կոխում,  
Արէգնազան խանումի աչքին դիպաւ  
չոր մրգեղինի սկաւառակը, որա մէջի  
մրգերի փշրանքներն ու կճեպները: Ա-  
րիւնը նորից Արէգնազանի զլուխը իր-  
փեց, Նա ուժուկող անելով շրջապա-  
տողներից ազատեց իրան անձը, Եւ  
հէնց որ Արէգնազան խանումը երկրորդ  
անգամ կիսամեռ Յոթերի վրայ էր ու-  
զում յարձակուել, Լեռնը նրա ետքերից  
աքացու մի սաստիկ հարուած հասցրեց:  
Արէգնազանը գետին փռուեցաւ: Ամեն-  
քը սոսկացին: Սոսկաց ինքը և Լեռնը:  
Ափշութեամբ ու արհաւիրքով կնանիք  
սկսան յետ յետ քաշուել իրան մօր  
վրայ ձեռք բարձրացնող այդ անօրէն  
զաւակից:

— Զարթիմ, տղայք, դհւա, դոկից,  
շնւա զարթիմ հասցրեք, զուցց օղի-  
զան և դէպի զուրս վաղեց: Լեռնը այդ

միջոցում մօր կրայ ընկած բարձրագոչ  
ձայնով լալիս էր: Արէզնաղանը ոտքի  
ելաւ: Նա շշմուած էր: Լոռնը անդա-  
դար պաշտչում էր նրա երեսն ու ձեռ-  
քերը: Մօր կրայ մի տեսակ անզգայու-  
թիւն եկած էր:

Բարի մարդիկ մէջ մտան և գրիգոր-  
աղայի կնոջն ու անօրէնս զաւակին  
տարան իրանց տունը հասցրին:

ԻԲ.

Վայ լէ, լէ, լէ, լէ, ևսթեր,  
Լոռնին խելքն է գողցել.

Եսթերին կարմիր թուշը  
Պագնողը զարիբ դուչ է<sup>1)</sup>:

Վայ լէ, լէ, և այլն,

Եսթերին չինար բօյը<sup>2)</sup>

Հիւրիմէէկ է սօյը<sup>3)</sup>,

Վայ լէ, լէ, և այլն.

<sup>1)</sup> Օտար թուչուն:

<sup>2)</sup> Հասակ:

<sup>3)</sup> Չնաշխարհիկ ցեղ — ծաղրական  
մաքով է ասած:

Եսթերին կանանչ կապան  
Լոռնը արաւ եօրդան<sup>4)</sup>: բժուայձն  
Վայ լէ, լէ, և այլն:  
Եսթերը ելաւ ծառին  
Գարափիքը մնաց տալին<sup>5)</sup>: աւլ —  
Վայ լէ, լէ, և այլն:

Եսթերին խրիսան<sup>6)</sup> կարճ է և ցւուն  
ինքը եահանւորի<sup>7)</sup> խարճ է ու ցւուն  
Վայ լէ, լէ, և այլն:

Եսթերը կայնել դուռը  
Դէրէնֆիլը<sup>8)</sup> բուռը

Հետեեալ օրը, իրիզնաղահին, Դիվան  
Կօլի փողոցի մանուկնիրը այս բամ-

<sup>4)</sup> Վերմակ:

<sup>5)</sup> Ճիւղ:

<sup>6)</sup> Հագուստ:

<sup>7)</sup> Հետեակ — եօրդայ:

<sup>8)</sup> Միխակ:

բառակ<sup>9)</sup> երգն երգում էին, երբ մեռելատիպ Եսթերը գլուխը անկողնի մի ջից փոքր ինչ բարձրացնելով նորազած ձայնով կանչում էր «ջնշր, ջնշր»:

— Ահա, խմիր, որդեակ, խմիր, սա ջուր է, պատասխանում էր Մարիսաթունը և նոր Նփ հկած դաղձաջուրը հիւանդի պատակած բերանին դէմ տալիս: Հիւանդը չէր ուզում խմել: Մայրը զուսում էր: — Լեզի չէ, դառը չէ, ասում էր Մարիսաթունը, քո բերանն է լեզի, քո բերանն է դառը, իսկ ջուրը լեզի չէ, գառնուկ, հասարակ, սառը ջուր է, խմիր, հոգիս, մի փոքր էլ խմիր, որ չուտափ լաւանաս, անկողնից գիր կենաս: Եւ կըլ կըլ, կըլ, տաք դաղձաջուրը նորից աղջկայ բերանն էր ածում նրա դորովագութ մայրը:

Զերմութեան մէջ խաչվում էր հիւանդը: Խեղձի աչքերն ու բերանը չին բացվում: Ի զուր մայրը աչխատում էր

<sup>9)</sup> Փասկիվլ.

նրանից մի բառ լսել, մի պատասխան սուանալ իրան հարցմունքներին: Եսթերի երեսի և շրթունքների մկանունքները տաքութիւնից դողում, դողում էին Բերնիցն ու առնվներից զուր ելած արտաշնչութիւնը մօրն երեսն ի վեր գոլորշիանումէր: Մարիսաթունը երկու ձեռքի ցուցամասներով և միջամտաներով հիւանդի թերթեիճներից բռնած մեծ զգուշութեամբ աշխատում էր աչքերը բանալ, աչքերի բացուին ու գոցուիլը հենց մէկ էր լինում:

— Դէս մէկ աչքերդ էլ է բաց արմ, հնդեակ, մէկ երեսիս մտիդ տուր, Եսթերջան, մորմոքում էր Մարիսաթունը, Եսթերը անքում էր մրմիւյն: Մայրը փորձեց աղջկաւ սրախն աւելի մօտիկ առարկաների անուններ յիշել: — Եզուց հայրդ կուզայ, քեզ համար լաւելան բաներ կը բերէ... չէրիտիզ<sup>1)</sup> համար

<sup>1)</sup> Ոսկու շարք ճակատի վրայ.

մեծ. մեծ մարդարիտներ... գոզնոցիք  
համար մերաքսեայ կապեր... բօղմա-  
ղիդ<sup>2)</sup> համար դշխուն. հեղնարներ<sup>3)</sup>,  
Բայց բնութիւնը իրանն էր անում,  
Մօր փաղաքշական խօսքերը հիւանդի  
վրայ ոչ մի ներդործութիւն չարին,

Նա շարունակ աջներ, ջներս էր կան-  
չում և աշխատում մի կողմ ձգել վրա-  
յի հաստ վերմակներն, որոց ծայրերից  
պինդ բռնած Մարխաթունը չէր թող-  
նում, Մթնչողը կոխնեց. Մարխաթունը  
վառեց ձրագը և աղջկայ աչքից հեռու  
մի տեղ դրեց, բայց, ոչ սոսկալի բո-  
պէ... Եսթերը յանկարծ աչքերը բաց-  
արաւ ու դէպի ձրազը չուեց. Մարխա-  
թունի ձեռքն ու սաքը գող ելան,  
ծնդները թուլացան: «Վահ, որդեակա  
աղէկտուր ճիչ արձակեց Եսթերի մայրը,  
ցնորուածի նման նա փչեց հանգցրեց

2) Մանեակ.

3) Աւտրիական մեծ ոսկիներ.

Ճրագը և մաղերը վեհտելով դռւրս վա-  
ղեց.

Պէտք է զիտնալ, որ երբ մի ծանր  
հիւանդ աչքերը ճրագի վրայ և չռում,  
զա նշան է, որ այդ հիւանդից պէտք  
է ձեռք վերցնել անողատճառ.

Ինթիզար. Հեքէրը, Մակտալ. անան,  
Նարդու. տուտուն, Սելլի. բաջին և մեր  
ծանօթ միւս հարման կնանիքներից մի  
քանիսը թշուառ մօր օգնութեան հա-  
սան, Մարխաթունի դոկիցները կարծես  
մոռացած էին նախընթաց օրուայ անց-  
քերը: Հիմա ամենքն էլ կարեկից էին  
դէպի ոսկերչու դժբաղդ ընտանիքը.  
Նրանցից մի քանիսը յրջապատել էին  
Մարխաթունին, իսկ միւսները Եսթե-  
րին, Նորից ճրագ վառեցին:

— Վախեցաւ, իսեղձ աղջիկը երէկ  
շատ վախեցաւ, ասում էր Ինթիզար.  
Հեքէրը, չես ահսնում, Սելլի, թէ սիր-  
աը ոնց հօպպուր, հօպպուր թռչո-  
տում է, Մակտալ. անա, Էսածով դու

իմանում ևս վախ բռնել, եկ, եկ այս-  
տեղ և հիւանդի վախը դու մէկ ըըռ-  
նիր:

— Եկ, եկ, ինզրեցին և միւսները  
ու հիւանդի անկազմու մօտ Մակալ-  
անային տեղ բացարին. Մարխաթունի-  
բերանը չէր բացվում խօսելու, նա մէկ  
գլուխն էր տարուքերում, մէկ ապուշ  
ապուշ հիւանդին նայում և յանկարծ  
փոթկում, փղձկում ու սրտառչոր  
ձայնով լաց լինում. Կողքին նստողնե-  
րը նրա բերանը բռնում էին ձեռքի  
թաշկինակով:

Մակալ-անան հիւանդի բարձի վրայ  
չոքեցաւ, երեք անդամ երեսը խաչա-  
կնեց և սկսեց օթիւ, փիշտ, փոքրտ,  
իրան անվերջանալի յօրանջմունքները.  
Կնանիք բոլորը երկիւղածութեամբ խա-  
չակնքվում էին:

Մակալ-անան իրան աջ բազուկը  
երեք անդամ հիւանդի ամբողջ մարմ-  
նոյն վրայ խաչածի տարածեց, յետոյ

զոյգ ձեռքերով սկսեց տրորել Ասթերի  
քունքերը, վիզը, ուսերը, բաղուկները,  
կաստակները, ափերը, մատները, կո-  
ղերը, սրունքները, ոլոգները և կար-  
շապարները, Մարմնոյ այդ զանազան  
ժամերը երկայն բարակ տրորելս, ճը-  
մռաւելիս, պառաւը քիթի տակով իւրա-  
քանչիւր անգամի համար առանձին  
առանձին աղօթներ էր ասում:

Մակալ-անան դեռ նոր վերջացրել  
էր վախ բռնելու ծիսակատարութիւնը,  
երբ մեր ծանօթ Օղիդան տուն մտաւ  
ձեռքին ունինալով մի փայտեայ փոք-  
րիկ գուշ: Եսթերին ու նրա մօր համար  
էրէկ առաւօտ սրտանց մահ խնդրովը  
այսօր հիւանդի համար պասուայ չօրի-  
բայ-խօշաւ<sup>1)</sup> էր բերել: Տեսնելով  
Մարխաթունի յուսահատ դրութիւնը,

<sup>1)</sup> Նշից ու քիչմիշից շինած մի տե-  
սակ ջրային կամպօտ, որ միշտ սառն  
է լինում:

խստաբարոյ հարեանուհին կշտամբեց  
նրան հաւատի պակասութիւնը և հրա-  
մայական ձայնով ու շարժմունքներով  
ձեռքիցը բռնած հիւանդիմօտ տարաւ:  
—Ո՞ւր է, հապա ինչի ճրագին չէ  
նայում, քեզ ով ասաց թէ հիւանդը  
ճրագին նայեցաւ, սարսափս, թիմարա-  
բար երեակայութեանդ զօռ տուած ոչ  
խօսածդ ես խմանում, ոչ արածդ ու-  
տեսածդ: Մարխաթունին այդպէս նա-  
խատելով 0ղիղան փայտէ գղալով խօ-  
շաւը շարունակ ածում էր հիւանդին  
բերանը:

Եսթերը անյագաբար կլում էր այդ  
գովարար խմիչքը, Դշի խոշաւը պար-  
պեցաւ, Հիւանդի վրայ մի տեսակ հան-  
գստութիւն եկաւ, Նրա րդաւոցն ու  
տնքտնքոցը կտրուեց, Ամենքը ուրա-  
խացան: Մարխաթունը սկսեց աղատ  
շունչ քաշել, Նա մի քանի անգամ  
ձեռքը երկարացրեց հիւանդի երեսը շը-  
փելու, բայց 0ղիղան չէր թողնում:

Հիւանդը քնեցաւ, Նրա զլուփին ու  
ոտքերը կամացուկ ծածկելով, վրան մի  
նոր վիրմակ ձկելով 0ղիղան և միւսնե-  
րը մի կողմ քաշուեցան Հանդարտ  
ձայնով խօսում էին նրանք: Մարխա-  
թունը երբեմն երբեմն թաթերի վրայ  
հիւանդի անկողնին մօտ էր գալիս,  
զլուխը վեր բերում նրա երեսի վրայ և  
երբ տեսնում էր աղջկայ պեծացած  
այտերի ու ճակատի վրայ քրտինքի  
փոքրիկ կաթիլները, ուրախութիւնիցը  
ինչ անելիքը չէր իմանում: Հիւանդի  
այդ փոփոխութիւնը կնանիկներից շա-  
տերը վերաբերում էին Մակտալի ա-  
զօթքներին իսկ ոմանք 0ղիղայի խօշա-  
ւին: Ինքը 0ղիղան յանդիմանում էր  
խօսակիցներին ամենքին էլ առհասա-  
րակ: Այդպիսի խօսակցութիւնները,  
պառաւի կարծիքով, բոլորովին անտե-  
ղի էին և այդ հանգամանքում որեէ  
կարծիք կամ պարակուսանք յայտնելը,  
Մակտալի ազօթքի վրայ պառաւի

կարծիքուի, կնանիկների թերահաւա-  
տութիւնը միմիայն ապացուցանումէր ո-  
վէն վերկացէք, վեր, ի վերջոյ համա-  
յեց նա իրան խօսակիցներին, վերկա-  
ցէք ամեն մարդ թող իրան տունը քա-  
շուի իսկ դու Մարիսաթուն, վերկաց  
անկողինդ պատրաստիր և քեզ համար  
հանգիստ քուն եղիր. Այս գիշեր ես  
ինքս աղջկադ մօտ պահապան կը մնամ  
ե, միամիտ եղիր, քեզանից պակաս  
մայրութիւն չեմ անել, Պառաւը վեր-  
ջացրեց իրան կարգադրութիւնները:  
Միւները հետզհետէ դուրս գնացին,  
Հիւանդի մօտ մնացին միմիայն նրա  
մայրն ու պառաւ 0ղիդան.

Մտաբերելով 0ղիդայի երէկվայ ա-  
րածները և տեսնելով նրա այս օրվայ  
վարմունքը՝ անշուշտ ամեն մարդ զար-  
մանում է այդ հինաւուրց պառաւների  
վրայ, թէ ինչի մեր 0ղիդանները այդ-  
պէս են բացատրելու տեղը չէ Ես թող  
նում եմ 0ղիդային ոսկերչու տանը և

քաշվում գնում այլիջա կողպաւուզ  
վաճառականների հալ ու խաթրը հարց-  
նելու, որուած իսկ բայց ( նվազան  
... զի՞ առաջ շատ առա

Ալիջայի մութասարիֆ Ալի-աղան ի-  
րան բնակարանում, որը և զատարանի  
պաշտօն է վարում, վափուկ բազմոցի  
վրայ ձակապատիկ նուտուտած խմում է  
իրան չիբուխը<sup>1)</sup>. Միենայն ժամանակ  
վը, վոքը Ալի-աղան դահուան է ա-  
նուշ անում նրա հանգէպ հազընին<sup>2)</sup>  
չքած, ցուցակագրում է աւազակնե-  
րից յետ առած ապրանքները, վաճա-  
ռականները, թուով ութը հոգին բա-  
րեւ բռնած կանգնած են Ալի-աղի  
հանգէպ, վաճառականների մէջն է  
մեր ծանօթ ոսկերիչը, որի կերպարան-  
քը շատ տիսուր է, Սենեկին կից մեծ  
սրահի մէջ աքան ցաքան դարսուտած են  
զանազան ապրանքներ, որ բայց կը

<sup>1)</sup> Օլուել:

<sup>2)</sup> Գրագիր:

— Աստուած է վկայ, Ալի աղա, ապ-  
ռումէր վաճառականներից մինը, ալա-  
ջաներից <sup>3)</sup> հինգ թօփ այստեղ, ձեր դը-  
ռան առաջ ծառաները...

— Մաշալլահ! Ալի՛ աղան ընդմիջեց  
վաճառականին, այդ բնչ խօսք է, ասով  
կը համարձակուէր իմ դռան առաջ քո  
ապրանքները գողանալ և դառնալով  
դէպի գրազիրը, զրիր, Մուստաֆա, ա-  
սաց, զու զրիր թէ թուջարը <sup>4)</sup> իրան հա-  
րիւր յիսուն թօփ ալաջանները ամբող-  
ջապէս ստացաւ, վաճառականը լուց  
և գրազրի թղթի տակ ստորագրեց ի-  
րան անունն ու տղդանունը,

— Այդ երկու շալերը թող ձեր տա-  
նը մնայ, իմ կողմից խանում քըրջս  
փոքրիկ նուէր, միայն աղաչումնեմ ձեղ,  
Ալի աղա, հրամայիր գիւղի միջից զըս-  
նեն զութքնիներիս <sup>4)</sup> մի հակը, ասում  
էր երկրորդ վաճառականը:

<sup>3)</sup> Մետաքսեայ ճօթ:

<sup>4)</sup> Վաճառականը.

<sup>5)</sup> Մետաքսեայ ճօթ:

— Եվալլահ <sup>2)</sup>, պատասխանեց Ալի  
աղան, և հրամայելով ծառային մի զոյգ  
ընտիր շալերը մի կողմ դնել, ապա  
դարձաւ դէպի միւս ծառան, Օսման,  
զգերին իմ կողմից պատուիրիր փնտոէ  
և այս թուջարի մի հակ զութնին զըտ-  
նի, Եթէ իրաւի, թուջար, ինչպէս ա-  
սումնու, քո հակը գիւղի միջումնէ  
կորել, այն ժամանակ միամիտ եղիր,  
որ երբ գտնուի, սաղ սալամաթ <sup>3)</sup> կըս-  
տանաս, Ակամայից գոհ եղաւ և այս  
վաճառականը, Այսպէս և միւսները  
վայնաչար, համաձայնում էին Ելիշայի  
մութասարիփի վիճառներին, և Ալի աղա-  
յին ստացականներ տալով ոկսումէին  
ապրանքները կապուտել:

Բանից այնպէս զուրս էր զալիս, որ  
հայ վաճառականները երեք տեսակ ա-  
ւաղակների ճանկն էին ընկել նախ քըր-  
դերը, որոնք մի քանի ժամ յետոյ

<sup>2)</sup> Ենորհակալութիւն:

<sup>3)</sup> Ամբողջ:

թէն բռնուեցան մութասարի փի զար-  
թիաների ձեռքով, բայց ոչ բոլորը և  
նրանցից որոնք որ փախած աղատած  
էին, բաւականին ապրանք էլ հետերն  
էին վիախցրած, Քիւրդերից յետ չը  
մնացին, Խլիջայում Ալի աղայի իրան  
մարդիկը, որոնք բաւական ապրանք  
հենց գիւղի միջին սիվդի սիվդի արին,<sup>4)</sup>  
Երբորդ տեսակ աւագակը հենց ին-  
քը մութասարի քն էր, որը պինդ երե-  
սը գէմ տուած, ամեն մի վաճառակա-  
նիցն էլ մի մի բան ստանում էր, անի-  
րան կնիկների և գրագրի անունով,  
Հերթը եկաւ ոսկերչուն, Անքաղի  
տենք, որ Խաչօն իրան ճետ 10 հազար  
մանէթի ակնեղէններ ու գոհարեղէններ  
բերում էր կատանակնուալօլսից,  
Բացի զբանից Անթառեանի ընկերը  
իրան հետ բերում էր մի մնձ հակ ճո-  
թեղէն, զանազան տեսակի Այդ ամենը  
Կրիզոր-աղան յատկացրած էր ընծայի  
4) Ձեռաց յափշտակել, Արային (չ)

Համար թէ Երգուրումի փրան աղգա-  
կանն երին ու մօտիկ բորեկամներին և  
թէ Ախալցխանի աղգականն երին, ու  
հարսնացուին համար, Այդուն էլ եր-  
տակերչուն կնոջն ու աղջկան համար  
յատկացրած ջուբացուն Ախալցխու-  
էնթերցուն իշլիկցու<sup>1)</sup>, Կառնսեր, Այդ  
հակին ոչոք ձեռը չէր առւած բարե-  
րազդաբար, անիրաւ քրդերը միտյն մի-  
թօփ միխակի մահուտ հանած էին այդ  
հակի միջից, Այդպէս ասում էր Ալիւա-  
զանիայց սկերչումն դժբաղութիւնը  
նրանումն էր, որ տասնը հազար մանէթի  
ակնեղէնների կապոյը սաքով գլխով  
մէջ տեղում էլ երեսում գիւրդ աւա-  
զակապեա Հազրօն վախցրած էր ու  
կերչու այդ թանկադին թեթե կապոյը  
Մութասարի զարթիան երն էլ գրգ-  
բազդաբար, չէին կարողացած Հազրօ-  
աւազակապեաին բռնել,  
— Վիտեմ, զուգում<sup>2)</sup> վարպետ,  
1) Հազուստի այլ և այլ տեսակներ  
2) Գահնուկ.

քեզ ամենից աւելի վնաս եղաւ, ասում  
էր Խաչօյն Ալի-աղան, բայց բնչ ա-  
րած, որուրդ չազրօն այսպիսի աւա-  
գակապեաներիցը չէ, որ իրան ձեռքն  
ընկած որսը շուտով յետ տայ, այն էլ  
այսպիսի զարթիաներու միայն երդ-  
վում եմ քեզ մարդարէի անունով, որ  
ես այսօր և եթ կը զրեմ Դարսի պիա-  
շային, Եմզըռումի մեր վալիի այս թուզ-  
թըն էլ մէջը կը դնեմ և կը խնդրեմ,  
կ'աղաջեմ, որ անպատճառ կալանաւո-  
րէ այդ անիրաւ չազրօյին, նա հիմայ,  
աւասաս, իրան բնակատեղին, Ալաշկերտ  
հասած պրծած է, Այդ էր ահա պատ-  
ճառը, որ վալիի ուղարկած ձիաւորնեչն  
րին ես յետ դարձրի, որովհետեւ պի-  
տէի, որ չազրօն մինչեւ այդ ժամանակ  
մեր կուսակալութեան սահմաններիցը  
անց է կացած, Դրիգոր-աղային իմ  
կողմից յատուկ բարե արա և ասա որ  
իրան կորուսար ձեռք բերելու համար  
և ձեռքիցս եկածը չը խնայեցի, բայց

իմ սահմանիցը այն կողմը հետախոռ-  
զութիւններ անելու իրաւունք չ'ունիմ  
օրէնքով Ուրիշ բան է եթէ վալին ի-  
րաւունք պուեց, Որի մասին ևս ահա  
զիւմ ամ նրան, Ալի-աղան իրանը  
վերջացրեց, Ուկերիշ խաչօն բնչ կարող  
էր անել կամ ասել, Տաճիկ պաշտօնա-  
տարներին անոր չէր ճանաչում, բայց  
և այնպէս խեղճը մաքից չէր անցկաց-  
նում, որ այդ պաշտօնատարները այդ  
աստիճան անտարբեր պէտք է գտնուին  
գէպի Անթառեանի ընկերը, էլի լաւ է,  
որ Խաչօն սկզբից չը կամեցաւ իրան  
ընտանիքին իրան ցաւին ցաւակից ա-  
նել, Տոմսակը, որ նա Հասմու-աղային  
իրան համբէչի հետ ճամբած էր Մար-  
խաթունին, գիտմամբ իբողութիւնը ու-  
րիշ կերպ նկարագրում էր, Ինչի՞ զուր  
տեղը ընտանիքին էլ վշտացնել և  
Խեղճ ուկերիշ խաչօն չը գիտէր, որ  
ընտանիքը կանացի թեթէհոգութեամբ  
նորանոր ցաւեր պատրաստել է իրան

համար էրզուրումում, խաչօն չէր երեւ  
նակայում, որ այդ ամենի վրայ պէտք  
է աշելանարի և մի ձուրիչ ցածր նոյն  
իսկ այն մարդաւ կողմից, որին ամեւ  
նայն հաւասարմութեամբ ծառայած էր  
ամբողջ ջորմ տարի Յոյսը Ամառուծոյ և  
Անթառեանի հմեծահոգութեան վրայ  
դրած, ոսկերիչ խաչօն վեր առաւ վեր-  
ջապէս իրան մի հակ ապրանքը և ըն-  
կերների հետ ամրավին ճամբայ և ելաւ  
դէպի էրզուրում, ու առաջաւ ու առաջաւ  
ու առաջաւ ու առաջաւ իր առաւ ու առաջ  
մարդար համեն լիս ոսկերչին իրան  
բեռով վեր սեկաւ լինչպէս այդ միշտ  
առում էր Անթառեանի վաճառատան  
առաջ: Մշակները ապրանքը ամբարը  
տարան, իսկ ոսկերիչը ճանապարհի չո-  
րերով Գրիգոր աղայի սենեակը մտաւ  
նրա հետ տեսակցելու, Գրիգոր աղան  
սրբորժկան տեղումք ծալապատիկ նըս-  
տած ծխափայտն էր Փսփսացնում, Ու-  
կերիչը աճապարեց ընկերին ու ճնուքը

համբուրեց յսաւէլ նըրա ճակատը Խաչ-  
ջոն նստեցաւ Սկսուեցան սովորական  
հարց ու բարով մերը Անկարավանի կոչ  
դոպտուելու մանրամասն պատմու-  
թիւնը Անթառեանը լուռ ու 6 մունջ  
լսում էր: Սրա սահասրտութիւնը  
գէպի իրան և ընկերոջ մեծ կորուսալ  
ներքուստ ոսկերչուն շատ ուրախաց-  
նում էր: Արհեստաւորը իրանը վեր-  
ջացրեց, մուռ էր որ Գրիգոր աղան  
ես խօսի և այդ խօսքից ծանակ կախ-  
ուած էր հայ արհեստաւորի ներկան և  
ապագան:

— Կեանքդ ողջ լինի, Խաչօ եղբայր  
վերջապէս ոսկեց Անթառեանը, այդ  
մասին շատ մի մտածել եղածը եղած  
է, այսուհետեւ էլ յետ չի դառնալ  
զը լինէր, չը պատահէր մեզ այդ փոր  
ձանքը, ինչ ասել կուղի, որ լաւ էր  
լայց որ եղաւ, պէտք է համբերութիւն  
Աշխարհքէ, այդպիսի պատահարներ  
շատ են պատահում, խելացի ու փոր-

ձառում մարդը մարդը այդպիսի բաներ  
միշտ պէտք է աչքի առաջ ուղինենայ և  
նախատեսէ... ունչ ու ոքալ աշխարհ քումն  
քաղցածութիւնից չէ մեռել, Տէրն ու ո-  
ղորմած է, ևսու զուէլ քաղցած չենք  
մնալ... ուղարկում ունչ և ունչ և ունչ  
— Աստուած ձեր հրամանքին ողջ  
պահէ, Գրիգոր աղա, խորին յարգան-  
քով ընդհատեց ոսկերիչը Անթառեանին  
խօսքը:

— Աստուած քեզ էլ ողջ ու առողջ  
պահէ, Խաչօհլապայր, Եթէ ինձ որքան  
և իցէ պատուում ես, Եթէ որքան և  
իցէ իմ խաթրը պահում ես, անցած  
գնացածի մասին ըլ պէտք է մտածես,  
Մտածիր, եղբայր, քո նախկին վիճա-  
կը և Աստուծուն փառք առուր այսօր-  
ուայ վիճակիդ համար, Անիծեմ մէջը,  
փող, էլ ուրիշ, հօ կեանքդ նղջ է, հօ  
ջանդ սնղ է, փողը մնդ համար է, ոչ  
թէ մենք փողին համար, փողը մնդ չէ  
փաստկում, այլ մենք ենք որ փողին

դատում: Ընկերոջ այդ իւղալի խօսքե-  
րը, միամիտ արհեստաւորի սրտի դառ-  
նութիւնները միանկամայն մեղմաց-  
նում էին:

— Զորս սարի առաջ, էլի սկսեց  
Անթառեանը, տակիդ մի չուլ կապերա  
անգամ չունեիր: Աստուած կամեցաւ  
այդքան կարծ ժամանակումը քեզ հա-  
մար սեպհական տուն ունեցար, տան  
կարդ ու սարք ձեռք բէրիր և 2500  
ուռբի զրամագլսի տէր գարձար: Հի-  
մայ, անիրաւ աշխարհի անիւը շուռ ե-  
կաւ և զնւ... զու հիմայ միմիայն գը-  
րամագլսիցդ զրկուեցար, իսկ մնացեալ-  
ները հօ էլի քո սեպհականութիւն-  
ներն են: Որհնեալ է Աստուած, զու  
էլի խեղճ չես մնալ, էլի քո արհեստա-  
կիցներից շատերիցը միշտ բարձր ես ու  
բարձր:

— Ես միշտ և ամեն ժտմանակ զոհ  
եմ, աղա, նախի իմ Աստուծուց և ապա  
քո հրաժանուց: Ես մինակ իմ կորուս-

տիւմասին շեմ հոգում, այլ նաև ձեր,  
ձեզ հասած վասը կրկնուպատիկ է,  
հուապատիկ է:

— Ծնորհակալութիւն քո բարի սրբ-  
տին համար, բայց—մեղայ մեղայ մեծ  
խօսուածքու—ես այդպիսի կորուստ-  
ներ շատ եմ ունեցել, Խաչօ եղբայր  
հասարակ սովորական հոգմերով մեծ  
նաւերը չեն տառանում: Վերջապէս  
— զու գիտես իմ բնաւորութիւնը—ես  
շատ զտայ շատ կուտեմ, քիչ զտայ  
քիչ—մեծունանց ասածի նման—չեմ  
կոլում կակաչ, կը կոփեմ կանաչ:  
Մի կին ունիմ և մի տղայ, Աստուծուն  
ինձ պարզեածի վշրանքերովն էլ կարող  
եմ մի պատառ հաց ճարել, Եթէ  
չը լինէր իմ այստեղից հեռանալը,  
մենք իրան կարդով մեր գործը կը շա-  
րունակէլնը և—յուսով եմ—մի-տա-  
րուան մէջ բոլոր վասներս կարողէինք  
հեշտութեամբ ձեռք բերել, բայց,  
դժբաղդաբար, ինձ այլ ես չ լինում  
այստեղ մնալ:

— Ի հարկէ, աղոջան:  
— Բայց և այնպէս, Խաչօ եղբայր,  
ես չեմ կարող քեզ այստեղ երեսի վը-  
րայ թողնել և ուզում եմ վերջին ան-  
գամ մի փոքրիկ լաւութիւն անել քեզ,  
եղբայր:

Ոսկերիչը խօսք չէր գտնում իրան  
շնորհակալութիւնը արտայայտելու:—  
Անթառեանը շարունակեց:

— Մեծունանց խօսք է, Խաչօ եղ-  
բայր, զունիաթ-զէնիաթ<sup>1)</sup>: Աշխար-  
հիս բոլոր գործերի մէջ միմիայն արհես-  
տըն է, որով մարդիկ ապահով կարող  
են ապրել այս աշխարհում: Միւս  
գործերով, առեսուրով վաստակած  
փողը, ձեռքի կեղտ է, յանկարծ չուր  
դիպաւ, կ'անցնի կերթայ, խկ մարդու  
ձեռքը, Խաչօ եղբայր, միշտ և ամեն  
ժամանակ յրերի մէջն է... միտքս հաս-  
կանում ես ի հարկէ...

<sup>1)</sup> Արհեստ և սակաւապիտութիւն.

— Ի հարկէ, մաղայաշատ լաւ էք հը-  
րամայում, մեծունանց խօսքը միշտ  
և ամեն ժամանակ ճշմարիտ է դուրս  
գալիս:

— Ճանապարհից եկած յոդնած ես,  
չեմ ուզում զլուխէ շատ ցաւազնել,  
ուստի և խօսքս կարճ եմ կապում:  
Մենք մէկմէկուց պէտք է բաժանու-  
ինք: Ես անչոփ գոհ եմ քեզանից քո  
արդար և հաւատարիմ ծառայութեանդ  
համար: Եթէ չորս տարուայ մէջ երբ  
և իցէ իմ կողմից մի ակամայ սխալ-  
մունք եմ ունեցել զէպի քեզ, եթէ  
երբ և իցէ, դարձեալ ակամայից, մե-  
ղանչած եմ քո դէմ, յատուկ խնդիրս  
է: Ներող վնիս և ռաւել պակաս ինձ  
հալալ անես...

— Ի՞նչ էք հրամայում, գրիգոր-ա-  
ղա, այդպիսի խօսքերով դուք ինձ վի-  
րաւորում եք, տէր իմ...

— Մարդիկ բոլորն էլ սխալական են,  
եղբայր: Ճամաց այն էլ ուզում ասել:

թէ ինձ կլսես, քեզ առւած բարեկա-  
մական խորհուրդս այս է: Սինք եր-  
կուքով կ'աշխատենք ի հարկէ նախ և  
առաջ մեր կորուսար գտնել: Ես յոյս  
ունիմ որ ուուի հպատակ դառնալիցս  
յետոյ, այդ մասին Ախալցխայից աւե-  
լի լաւ կարող կը վնիմ գործել: Ատեղ-  
ւոյս ուուսական զեսպանատան միջո-  
ցաւ, բայց մինչկ մեր կորստի գտնելը,  
դու պէտք է այժմեանից քու մասին  
մտածես:

— Ինձ համար ես ուրիշ երեք չեմ  
գտնում այսուհետեն, աղա, եթէ ոչ տու-  
նըս վաճառել և այդպիսով մի նոր  
փոքրիկ դրամագլուխ կազմենով, նորից  
իմ արհեստին ձեռք զարնել: Դուք լաւ  
նկատեցիք թէ ողէնիաթ-զէնիաթ: Ծա-  
ռատ-ուզիղը ասած զրիգոր-աղա, եր-  
բէք յոյս չունիմ, որ երբ և իցէ կո-  
րուստներս գտնուի: Էլի մեծունանց  
առած խօսք է զայլի բերանիցը Սիդա-  
րը չի դուրս գալ:

— Գուցէ կարծիքդ ուղիղ դռւրս  
դայ, բայց գուցէ և ոչ, աշխարհիս բա-  
ներին ճվ կարող է խելք ու միտք  
հասցնել, խաչօ եղբայր:

— Տայ Աստուած ձեր ասածովն ու  
բարից անկութեամբը լինի, աղա,

— Աստուած, յոյս Աստուած, խաչօ  
եղբայր: Հա, այն էի ասում. Տանդ  
տէրը, եղբայր, գու ես ինքդ ես, ինչ-  
պէս կամենաս, այնպէս կանես, բայց  
ես այդ բանին հակառակ եմ: Անշարժ  
կալուածքը հաստատուն ապահովու-  
թիւն է մարդուս համար: Հեռատես  
մարդը միմիայն այն ժամանակ ձեռքից  
կը հանէ անշարժ կալուածքը, երբ,  
մեծունանց ասածի նման, «հազարս  
գօտին հարիւր տեղից կը կտրատուի»:  
Օրհնեալ է Աստուած, գու դեռ այդ  
օրին հասած չես և—մեծ է իմ հաւա-  
տը—չես էլ հասնիլ երբէք: Գու մէկ  
լաւ մտածիր: 1500 մանէթ տանդ գինը  
փարեցիր, 500 մանէթ կարկատանքի

համար լրան փող մսինցիր: Նշանա-  
կում է տունդ այժմ քեզ վերայ 200  
մանէթ կանիսիկ փող է նստել: Ասմ  
խնդրեմ, հիմայ, քո այժմնան դրու-  
թեամբ, երբ ամեն ոք էլ գլուէ, որ  
գու փողի մեծ նեղութիւն ունիս, որ  
ես քեզանից բաժանվում եմ, հիմայ,  
ասում եմ ես քեզ, քո տանը ով գին  
կուտայ: Դու չը զիտես միթէ որ մեր  
էրզուրումցիք, մեծունանց ասածի նը-  
ման, ասատկած էլ են պտռում, որպէս  
զի պայտերը քաշեն հանեն».

— Ուղիղ էք, հրամայում, աղա,  
բայց ուրիշ Բնէ կարող եմ անել: Խան-  
թիս մէջ այժմ եղած ընկերովի ապ-  
րանքներով գործ չի դառնալ, շատ-շատ,  
իմ բաժինը հաղիւ 300 մանէթի ապ-  
րանք դուքս դայ խանթից, այն էլ փէս-  
փէնդիա <sup>1)</sup>...

— Խանթիդ միջի ապրանքին ես ոչ-

<sup>1)</sup> Անացած, դժուար վաճառելի ապ-  
րանք.

ինչ նշանակութիւն չեմ տալիս: Իմ  
բաժնի համար էլ մտածել եմ հետո Ա-  
խալցիսայ տանել և այնտեղ վաճառել:  
Այնտեղ աւելի արժեք ունին այդ տե-  
սակ ապրանքներն, Եթէ կամք կուտաս  
քո բաժինն էլ հետո կը տանեմ, և ա-  
թերդ համար կ'սաղացնեմ:

— Ինչպէս կամնաք, Գրիգոր-աղա:  
Ձեռնամուխ լինելով նախկին արհես-  
տիս, ես այլ ես պէտք չունիմ այդ մի  
քանի հարիւր մանէթ ակնեղիններին:  
Եթէ գուք զիտէք և կարող էք Ախալ-  
ցիսայում համեմատաբար լաւ գնոլ  
ծախել այդ ակնեղինները, տարէք, ա-  
ղա, ձեր բաժինին հետ միասին տարէք  
և իմ բաժինը, և...

— Եւ առաջին գործս թող լինի ծա-  
խել, ծախել և փողը օր առաջ քո ձեռ-  
քը հասցնել,

— Շնորհակալ եմ, աղա, Աստուած  
ձեզ արեշատութիւն տայ: Մեծունաց  
ասածի նման Փխաչը միշտ տէրն է զօ-  
րաւոր անողը:

— Բայց հիմակ ու հիմայ, առաջ  
ժըմ, դու ինչ ես մտածում: Հա-  
մանք կամք չեմ տալիս և իրաւունք  
էլ ունիս, շատ շնորհակալ եմ: Հիմայ  
դու լինքը ոնց որ կամենում ես: Մի  
փոքր առաջ ծառատ տսացի ինչպէս  
մինչեւ հիմայ, նմանապէս և այսուհե-  
տե, իմ յոյս վել եռւմ Աստուած է,  
իսկ ներքնում հրամանք, Եթէ ինձ  
հրամայնս որ գնամ, զետն ընկնիմ, զի-  
տէ Աստուած, որ խօսքից դուրս եկու-  
զե չեմ, Գրիգոր-աղաջան, քեզ մատաղ:  
— Տէր Աստուած բարի սրտովդ քեզ  
տայ, խաչօ եղբայր: Այ տղայ, գնա  
պաս խաչօ եզրօր համար ոչէքէրլի դա-  
հուած բերեն, հրամայեց Աթառեանը  
ծառային և գառնալով դէպի ոսկերիչը  
շարունակեց, խօսքի եղանք, ճանապար-  
հից նոր դարձած լինելու անդամ՝ մո-  
ռացայ, խաչօ եղբայր, իսկ դու հօ,  
ծրհնած, կարծիս օտար լինես որ քո

բերնովը մի Փինջան սև ջուր անդամ  
չնս պահանջում, զահուան բերին, չա,  
այ իմ քեզ տալիք խորհուրդը ինչումն  
է, Խաչօ եղբայր, Քո Փողով քո ար-  
հեստին վերաբերեալ առարկաներ շե-  
նել և խանթում դարսած սպասել, որ  
յաճախորդը գայ և գնէ, առ այժմ, իմ  
կարծիքով, հաշիւ չէ քեզ համար, Գու-  
փորձով զիտես, որ այդ աեսակ ար-  
հեստագործութիւնը ամենքին էլ հաւա-  
սարաչափ չէ յաջողում, մանաւանդ  
այժմեան ժամանակ, իմ կարծիքով քեզ  
հարկաւոր են առայժմ զլիսաւորապէս  
քո արհեստին վերաբերեալ զործիքներ  
և մի խանութ, քաղաքի մի յարմարա-  
դոյն փողոցում վարձուած, այնպէս որ,  
մնձունանց առածի նման, օօրէ մալէզր  
օրէ խլէզր ի հարկէ, առայժմ, մինչև  
բազզի անիւն կրկին շուռ, դալը, ուոր  
անսպատճառ պէտք է լինի, ևս յոյս  
ունիմ իմ Աստուծուն վրայ ։

— Արդ, Խաչօ եղբայր, թէ քեզ հա-  
մար խանութ վարձելը և թէ զործիք-  
ների համար փող վճարելը երկուքն էլ  
թող իմ վիճն վիճն, Քեզ համար խա-  
նութ էլ ևս կը վարձեմ, 100 մանէթ  
զործիքի համար փող էլ փոխ տամ ա-  
ռանց տոկոսի, Գործիքների համար  
կարծեմ 100 մանէթը բառական է։

— Հարիւր կամ առ առաւելն հա-  
րիւր յիսուն մանէթ։

— Թող լինի հարիւր յիսուն մանէթ։  
առամ, Խաչօ եղբայր, տամ, Ես չեմ ու-  
զում որ իմ այստեղից հեռանալիցո  
յետոյ զու ծուռձիտ մնաս, իսկ 2000  
մանէթանոց տունդ քեզ համար կը  
մնայ, Խաչօ եղբայր, Եթէ վարձով տա-  
լու լինիս, տարեկան առ նուազն 200  
զուռուշ վարձ կը բերէ քեզ համար։  
ինչ որ վերաբերում է քեզ և քո ըն-  
տանիքին լնակարսնին, կարելի է մի  
աժանազին, 40—50 զուռուշոց տուն  
վարձել, ընտանիքիդ այժմեան կեցած

տան վարձը, Դիվան.եօլի փողոցում,  
ամսական 10 զուռուշ եմ խօսացել;  
Եթէ տեսար և հաւանելով տարեկանով  
կամեցար վարձել, տէրը 50 զուռու-  
շով էլ կուտայ, կամենաս ես ինքս այդ  
մասին հետը խօսիմ, վերջացնեմ:

— Տեսնենք, աղա, շատ բարի ես,  
շատ լաւ գիտեմ որ հրամանք չիմ  
կամ ընտանիքիս վատը չես կամենում:

— Իմ անձին և իմ օջախի գլուխն  
թող վնի այն վատութինը, որը, Խա-  
չօ եղբայր, ես քեզ կամենալիս վնիմ:

— Մեղմ, մեղմ, ինչ էք ասում,  
տէր իմ:

— Դու հիմայ գնա տուն, եղբայր,  
ընտանիքիդ տես, մի փոքր հանգստա-  
ցիր, Տանդ համար էլ տես, եթէ յար;  
մար է, ինձ իմաց արա, վաղը և եթ  
սեպհական տունդ վարձով տանք: Ա-  
լիք օգնականը քանի օր է շարունակ  
գնում գալիս էր շինութեան վրայ:  
Ինչպէս երեսում է տանդ շատ է հաւա-

նել: Անդաղար ինդրում էր իրան վար-  
ձով տալ, լաւ էլ գին է տալիս 300  
զուռուշով ապառիկ, իսկ 250 զուռու-  
շով կանիփիկ, Հիմա տես, եթէ, ինչ-  
պէս ասացի, Դիվան.եօլի փողոցի տու-  
նը քեզ յարմար կուգայ, տունդ տանք  
վալիի օգնականին, Այդպիսի մարդ-  
կանց հետ գործ ունենալը քեզ համար  
էլ լաւ է, մանաւանդ ներկայ հանգա-  
մանքներում, կարծեմ նկատողութիւնն  
ուղիղ է:

— Ի արգէ, աղա: Հիմայ ես կը  
գնամ ձեր վարձած տունը կը տեսնեմ,  
բայց եթէ յարմար էլ չեկաւ, կ'աշխա-  
տեմ ժամանակին մին ուրիշը վարձել  
թեթե գնով: Իսկ իմ տան համար  
հրամանքդ կարող ես վալիի օգնականին  
հէնց կիմիկուանից խօսը տալ: Նրա  
առաջարկած գինը շատ ձեռնտու է:

— Ես էլ այդպէս եմ կարծում: Տես-  
նենք, գլխիս վրայ: Ասկերիչը ուսքի ե-  
լաւ: և ուզում էր գնալ, բայց նկատե-

լով որ ընկերը կրկին խօսելիք ունի,  
չպեցաւ կրկին.

— Կարավանին կողոպտուելու դժբաղդ լուրը առած օրումս, ասաց Անթառեանը, կասկածելով որ քաղաքի մէջ փողոցային անկարգութիւններ չը պատահին, խանթիդ միջի ասլրանքներն մեր առւնը ճամբեցի. Ուզում ես վաղիւ և եթ եկ տար: Եւ կամ, եթէ ուզում ես որ քո բաժինն էլ հետո Ախալցխայ տանիմ, այս երեկոյ կամ վաղը հրամայիր եկ, ինձ մօտ գնահատենք, ցուցակ կազմենք...

— Էլ ինչ նոր գնահատութիւն, ինչ ցուցակագրութիւն, աղա, Պօլիս մեկնելից առաջ չէ որ քեզ հետ միասին գնահատեցինք ու ցուցակագրեցինք: Ցուցակի մի օրինակն էլ կարծեմ ինձ մօտ պէտք է լինի, տանը: Բոլորի գումարը, եթէ չեմ սխալուում—վեց հարիւր ոռորդի էր ընդամենը:

— Ճիշտ այդպէս է: Մի ցուցակ էլ,

Նթէ յիշումես—Լեռնին էիր յանձնել Այդ ցուցակն էլ պէտք է որ մեր տանը լինի:

— Աւելի լաւ, հիմի ով սիրտ ունի նստել նոր մէկանց կարճ երկայն... Սիայն, Գրիգոր աղաջան, խանթիս մէջ Քեօփրիքեօյի եկեղեցու արծաթները կային, Քահանան եկեղեցու հին ու մին արծաթներ, անօթների կտորտանք էր բերել, որ մի նոր խաչվառ և սկիճ շինեմ եկեղեցու համար: Հէնց այն էր ձուլեցի, պատրաստեցի, բայց ճանապարհորդութիւնս վրայ գալով մնաց:

— Ճիշտ է, այդ ձուլած արծաթներն էլ խանթի միւս ապրանքների հետ միասին Լեռնը տուն է տարել: Երբ քեզ համար խանութ վարձենք, երբ գործի սկսես, եկ և տանից տար: Ամանաթ արծաթներդ, եղբայր, տար: գործիքի համար 150 մանէթ ինձանից փող ստացիր, իսկ քո ակնեղենների համար էլ ինձանից մի ստորագրութիւն:

— Ի սէր Աստուծոյ, Գրիգոր.աղա,  
այդ ինչեր էք ասում: Չորս տարի է  
ահա մենք առանց ստորագրութեան  
հարիւր հաղար դուռուշների գործ զար-  
ձուցինք: Մի օր ոչոք մեր ձայնն ու  
ձուզը չը լսեց: Հիմայ ստորագրու-  
թիւնս որն է, աղա, այն էլ ես ձեզա-  
նից առնեմ: Առանց ստորագրութեան  
հրամանքդ վերջին անգամ ինձ 5000  
մանէթ համբեցիր տուիր և հիմայ այդ  
գումարն էլ մեր գրամագլւխին հետ ես  
կորցրի...

— Դու ինչի Կորցրիր, եղբայր, զբժ-  
բաղդութիւն էր, պատահեցաւ, դուինչ  
մեղք ունիս: Ստորագրութեան առար-  
կայ ես այս անգամ նրան համար բաց-  
արի, Խաչօ եղբայր, որ մենք մէկզմէկուց  
պէտք է բաժանուենք:

— Ի՞նչ արած որ պէտք է բաժա-  
նուենք, ինչպէս աղաթէ բաժանուեն-  
քիս մէկզմէկու բաժանման գիր կու-  
տանք կառնենք, իսկ հրամանքդ Ալսալ-

ցիսայից յետոյ իմ ակնեղէնների վողը  
կուզարկնս: Գործիքների համար ինձ  
խոստացածդ 150 մանէթին համար, ու-  
զում էք ես ինքս ճեղ մի պարտա-  
մուբհակ կուտամ, մինչե...

Վակուղիղը առանց Խաչօ եղբայր, ա-  
պածդ ինձ համար վիրաւորանք չէ: Մի-  
թէ դու ինձ այնքան հաստագլուխնե-  
րիցն ես կարծում, որ 150 մանէթ չըն-  
չին գումարի համար քեղանից պար-  
տամուբհակ սահնամ, երբ քո 300  
մանէթի ապրանքը ինձ հետ տանում  
եմ:

— Ներողութիւն աղա, ես այն մըտ  
քով ասացի, որովհետեւ իմ վիճակը...

— Քո վիճակի հետ ես ինչ գործ  
ունիմ, ես գործ ունեցած եմ և ունիմ  
քեղ հետ, մարդու հետ, և զիտեմ որ  
այդ մարդը մարդ է: Մի քիչ առաջ  
էլ քեղ ասացի, վաղ, յաջողութիւն,  
մարդկային վիճակ, դոքա դատարկ,  
չնչին բաներ են, մարդը իրան մարդ-

կութիւնով, իրոն բարի անունովն ու  
համբաւովն է մարդ և ոչ թէ...»

— Լաւ, աղա, ինսպրում եմ մի նե-  
ղանալ: Ես շատ ուրախ եմ, որ հրա-  
մանքով միենոյն կարծիքովն ու սրաովը  
հեռանալու և այստեղից, ինչ կարծիք  
ու սիրտ որ ունէիր ինձ վրայ այստեղ  
եղած ժամանակդ:

— Եւ մինչեւ վերջը, մինչեւ յետին  
շունչս: Դու վեր կաց, Խաչօ եղբայր,  
վերկաց գնա տուն հանգստացիր: Հա՛,  
չը մոռանամ քեզ մի ընտանեկան աղ-  
դարարութիւն էլ անել, Խաչօ եղբայր:  
Եւ Անթառեանը հարեանցի կերպով  
պատմեց ոսկերչուն այն ամենը, ինչոր  
պատահած էր, ինչոր այդ օրերում խօ-  
սուում էր Էրզուրումում Անսի, Մար-  
խաթունի ու սրա աղջկայ մասին: Այդ  
պատմութեան ժամանակ Դրիգոր աղան-  
բնականապէս միշտ իրան կողմն էր  
տաշում: Ճշմարիտ է, նա չէր ծած-  
կում իրան որդուն օջաճութիւնն և

կնոջը ահմիտ վարմունքն, բայց Ա այդ  
ամեն բանի համար առաւելապէս նա  
Մարիաթունին անխոնեմութիւնն էր  
դատապարտում: — Նոթերի հրանդու-  
թեան մասին երբեք հոգ մի անիլ, Խա-  
չօ եղբայր, ի վերջոյ ասաւ Գրիգոր-  
աղան, հէքիմուշին հէնց այս առաւծու-  
երը հիւանդի կշտից վերադառնում էր  
միանդամոյն ապահովացրեց ինձ: Նուա  
առութեամբ, Աստուծովի, Եսթերս մի  
շաբթից յետոյ կը վերկենայ անկողնից:  
Պէտք է զիտանալ, որ Օղիգայի  
սպառնալիքներից վախեցած Անթառ-  
եանը մի և նոյն այդ օրը բժիշկ  
էր ուղարկել Եսթերի մօտ Մի ամ-  
րող զիշեր հիւանդին մօտ մնալով և  
լուսաղէմին հիւանդի ծանր զրու-  
թիւնը անսնելով մառաւ Օղիգան մա-  
ճապարեցն անձամբ անձին Անթառեա-  
նի: տոճու գնաց: Փառաւորապէս ինայ-  
տառակերպի Դրիգոր աղային և նրա  
առաջը, ըմբռ որ ու նա նուա 13

կնոջը, հինաւուրց պառաւը բանը այն-  
տեղ հասցրեց, որ գոռոզ Գրիգոր-ա-  
ղան նրա սիրաը հանգստացնելու հա-  
մար ստիպուած էր իրան հաշուով հի-  
ւանդին մօտ բժիշկ ուղարկել և կնոջը  
Արէգնաղանին ու Լոռնին մի լաւ քօ-  
տակ տալ:

Անթառեանից լսած վերջին խօսքերը  
սուր սլաքներով ծակուաեցին անբաղդ  
ուկերչու սիրաը, Ամօթից, վշտից նրա  
լեզուն կարկամնցաւ: Խեղճ արհեստա-  
ւորի բերանը չէր բացվում որ մի պա-  
տասխան էլ է տայ: Թաղծալից նա  
թողեց Անթառեանի սենեակը և ելաւ  
տուն գնաց:

ԻԵ.

Ոսկերիչ Խաչօյին ճամբու դնելով  
Անթառեանը վալիի օգնականի մօտ զը-  
նաց և ընկերի տունը երկու աարի ժա-  
մանակաւ վարձով տուեց տարեկան 300  
դուռուշով: Գաշնագրի մէջ, իւ միջի  
այլոց, ասած էր, որ տունը Անթառ-

եանի սեպհականութիւնն է, որի վարձը  
վալիի օգնականը վճարելու է տար-  
վայ վերջերում: Բայց մի առանձին  
ստորագրութիւնից, որը Անթառեանը  
տաճիկ պաշտօնատարին տուեց, երե-  
ւում էր, որ այդ տան հէնց երկու  
տարվայ վարձն էլ, տան տէրը ամբող-  
ջապէս ստացած է վարձովից: Աւելորդ  
է ասել, որ Գրիգոր աղան, ոչ մի կօ-  
պէկ չէր ստացած:

Ոսկերչու տան վարձը Անթառեանը  
վալիի օգնականին բագչիչ արաւ, որ-  
պէսզի սա աշխատաի Հաղրօ աւազակա-  
պետին փախցրած ակնեղէնները ձեռք  
բերել, Եթէ վալիի օգնականը այդ ա-  
ղայութիւնը անէր, նա իբրև վարձա-  
տրութիւն իրան աշխատանքին, զըտ-  
նուած ապրանքի կէսն էլ նմանապէս  
իրան պէտք է սեպհականացնէր: Այդ  
բանի համար վեց ամիս ժամանակ նը-  
շանակուեցաւ: Եթէ այդ ժամանակա-  
միջոցում տաճիկ կառավարութիւնը

գողացած ապրանքը աւաղակի ձեռքից  
ըստ կորդէր, Անթառեամնը իրաւունք ուշ-  
նէր, ինչպէս ուռւսի հպատակ, իրանը  
անել այնուհետեւ, Յետոյ, Գրիգոր-աղան  
մի խանթի տիրոջ իրան մօտ կանչեց և  
նրա խանութը Խաչօյի համար վարձեց  
արական 30 դուռուշով Երկու աար-  
վայ վարձը 60 դուռուշն էլ Անթառ-  
եանը իրան գրպանից վճարեց, թէն  
դաշնազրի համեմատ, խանթի մէջ  
պէտք է բանէր նրա նախկին ընկեր,  
ոսկերիչ խաչօն, Վերջ ամենայնի գրի-  
գոր-աղան իրան մօտ կանչեց զաթրջի<sup>1)</sup>  
Գոտորին և պատուիրեց որ իրան չորս  
ձիերին էլ լաւ ուտացնի, կշտացնի,  
որպէս զի երկու օրից յետոյ Անթառ-  
եանին և սորա ընտանիքին Ախալցխայ  
տեղափոխէ, Բնանակրութեան վարձ,  
ձի զլուխ, քառամնական դուռուշ խոս-  
տացաւ Անթառեանը և ութսուն դու-  
ռուշ վարձի կէսը սկզբից վճարեց Գո-

<sup>1)</sup> Բեռնակիր.

գօրին, Հինգ դուռուշ էլ փող ընծայեց  
ձերմակ-ջրի<sup>2)</sup> բեռնակրին համար:  
— Ո՛ բաւետթէ, կուրբանէտթէ,  
կուռէտթէ<sup>3)</sup>, ուրախ ուրախ լեզուին  
տուեց Գօդորը, վերառաւ փողերը և  
վազ տուեց ուղիղ ամէհանան<sup>4)</sup>: Բեռ-  
նակիր Գօդորի հարբեցողութիւնը կը-  
գուրումում առած էր գարձած: Այն-  
անդ նա իրան կատարը լաւ տաքաց-  
րեց: Բայց հէնց որ ձիերին ջրելու և  
թիմարելու ժամը հասաւ, Գօդորը զը-  
տօր զլար օղետունից դուրս եկաւ և  
առանց ուշք դարձնելու փողոցի մա-  
նուկների ծալլածութիւններին, իրան  
ախոռը մտաւ: Գօդորը ընտանիք չու-  
նէր. թէ իրան և թէ ձիաներին համար  
նա միմիացն մի բնակարսն ունէր վար-  
ձած կըսուրումում և այդ ընակարանը  
մի ախոռ էր: Ախոռի մի աւելորդ մը-

<sup>2)</sup> Արագ.

<sup>3)</sup> Քրգեվար. Եղբայրջան, մատազ-  
ան, հոգիջան.

<sup>4)</sup> Օղետուն:

սուրբը և նրա միջի ցախսու ցուխը  
բեռնակիրի մշտական անկողնակալն ու  
անկողինն էին, Այդ ժամանակ նա հա-  
զիւ քառասուն տարեկան կը լինէր,

— Հայրիկ, հարցրի ես ծերուկից,  
այդ ոնց է պատահել որ այդ տարիքի  
մարդը լրգուրումում մինչեւ այդ ժա-  
մանակ ընտանիք չունէր, բեռնակիր  
Գողոբը գուցէ զրկուած էր իրան կո-  
տակցիցը...

— Թող այդ մէկ կէտը քեզնից  
դաղսնիք մնայ, ինչպէս որ դաղսնիք է  
ամենքի համար էլ, Այս որեէ հասարակ  
բեռնակիրի համար ես ինչ որ ասացի  
այն էլ, կարծում եմ, շատ եղաւ Արա-  
գի շնչը նորից բերնին դէմ առւց իմ  
ծերուկը,

Ես մի տեսակ եղայ, բայց և այնպէս  
չուզեցի թափանցել և այդ գաղանիքի  
մէջ, մանաւանդ որ—ինչպէս երեսում  
էր—այդ բանը հիւրիս սրտովը չէր,

Գողոբը վերառաւ փողոցից հեաը բե-  
րած նոր և սուր զաշաւին, <sup>2)</sup> ձիաներին

<sup>2)</sup> Քերիչ:

մօտ գնաց և նախքան ջրելը, սկսեց  
թիմարել, ամեն մի ձիու զլսին մի-մի  
ներբող կարդալով:

Կաց, քեզ մատադ, կաց, իմ հոգիս,  
կաց քեզի լաւ թիմար անեմ,  
Հող ու Փշսի <sup>1)</sup> ճանձ ու ոջիլ մսէդ,  
մաղէդ պոկեմ հանեմ.  
Քորեմ, շինմ, շիշարեմ, հոգիդ ու ջա-  
նըդ զուրանայ <sup>2)</sup>,

Չորուկ Փշսուն, փափուկ յարդին,  
զուաթու <sup>3)</sup> պառկի քամակ դէմ տայօ,  
«Տօռաթիս <sup>4)</sup> լանջն, պոչն է սրմայ <sup>5)</sup>  
սմբակներն քար ու երկաթ,  
թև ու թիկունքն առիւծի է, գեղին  
սրունքն ուկի պողպատ,  
Նախշուն ճակտիդ, գափլան <sup>6)</sup> դօշիդ  
քամին փչէ, հովանարէ,

<sup>1)</sup> Աղբ.

<sup>2)</sup> Հանգստանայ.

<sup>3)</sup> Գիու. անուն, գոյնիցը առած.

<sup>4)</sup> Նոյնպէս.

<sup>5)</sup> Մետաքսեայ թել.

<sup>6)</sup> Ինձ.

Քթէդ, բերնէդ, հանած փոխչդ սար  
ու ձորեր թնդացնէն:  
Ականչներդ ցից-ցից կանես, աչքիդ  
բոցով դաշտեր կ'այրես,  
Վրինչ ու քալքիդ երբ զօռ կ'անես,  
դափ գըտփով լեռներ ճեղքես.  
Քրտինք կուտաս, քրտինք կ'առնես,  
ճամբու կոշտերը կ'թրջես,  
Կեր իմ ալ<sup>7)</sup> ձիս, կուշտ գարի կեր,  
Կեր որ ինձնից չը գանգատուեսու:  
Քիոսնա, դանդաղ, ճերմակ ձիուս, վէր-  
քը լուամ, գեղը քսեմ,  
Փոքրիկ սէմրին<sup>8)</sup> մէջ բարձ կոխեմ,  
ճամբու պաշարը շալկին դնեմ,  
Մէկ քայլ առնէ, մէկ արտ մտնէ, ա-  
նամօթը գարի գողնայ,  
Դունչը կախած, բութ ակոէքով, սու-  
սիկ փուսիկ ալիւր աղայու:  
իջ.

Գլուխը կախ արած, վիզը ծռած,

<sup>7)</sup> Բաց կարմիր.

<sup>8)</sup> Համես.

մտքումը հաղար և մի դառը խորհրդա-  
ծութիւններ անելով, ոսկերիչ Խաչօն  
իրան տունը հասաւ, Երկայն սրահի  
միջից նրան տեսնելիս Մարխաթունի  
ուշքը նորից գնաց, իսկ Եսթերը ու-  
րախութեան աղաղակներով ձեռքերը  
բարձբացրած ուժ ու կող էր անում  
անկողնի միջիցը գուրս գալ, բայց  
խեղճի ծնդներում ուժ չը կար և նա-  
զլորիսում նորից վայր էր ընկնում ան-  
կողնի վրայ: Տեսաբանը շատ սրտաճրմ-  
լիկ էր, Մինչև կնոջը ուշքի բերելը,  
մինչև հիւանդ աղջկան անկողնի մէջ  
նորից տեղաւորելը, թշուառ արհես-  
տաւորի կեանքը կէս եղաւ: Լուսթիւն  
տիրեց:

Մարխաթունը չը կամեցաւ այդ օրը  
պատմել մարդուն իրանց գլուխն պա-  
տահած փորձանքը, Եսթերի հիւանդու-  
թիւնը սորա մրսած լինելուն էր վերա-  
գրում մայրը, Երան հերթում Խաչօն  
նոյնպէս չը կամեցաւ բացուել, բանից

բոլորովին անտեղեակ ձևացնելով իրան  
ոսկերիչը ընդհակառակը աշխատում  
էր մասիթարել կնոջը և փայել ու փայ-  
փայել հիւանդ աղջկանը և մարդ ովզին  
— Հօմաւաղակները անձիղմի մասը  
ըստ անցրին, ոչ մէկրանեղդ միթրաւորու  
ված չէ, ոչ վախեցած չէն, հարցումէր  
կինը մարդուց, ողարք ովզին վարդին  
— Ոչ, ոչ, գուք միամիտ եղիք. օրէ-  
նեալ է Աստուած, ոնք բոլորովին անձր  
վաս եմ և ողջ ու առողջ, բայց վարդ  
— Ապրանքներդ ըստ սոլորն էլ յետ  
ստացար, թէ՞ ո գիտէ՞ մի մասը, գուցէ՞  
տարան աւաղակները ըստուարման ովզու  
— Շատ քիչ բան. զակորուստներս  
շատ չնշին է. յոյս ունիմ այդ էլ ժամ,  
մանակին ձեռք բերութիւն ունիյան  
— Գրիգոր աղային և նրա լիրը բաւար  
Դրիգոր աղային հօտեսական է ծառաւ  
— Տեսան տեսան բժիշկը քանի  
անդամ եկաւ, Մարիսաթուն և ան նասք  
ու երեկուանից ի վեր երկու անդամ:

Նա ամենայն կերպով ապահովացրեց  
թէ մի շաբթից յետոյ աղջկադ ան-  
պատճառ կը լաւացնէ, պաքի կը կանգ-  
նացնէ, Եսթերիդ մասին միամիտ եղիր,  
օրհնեալ է Աստուած, ոչինչ բան չը  
կայ:

— Ամէն. օրհնեալ է Աստուած,  
փառք նորա բարի կամեցողութեանը:  
Այս ասելով հայրը կուչ եկաւ, կուցաւ  
աղջկայ զլմին ընկաւ և իրան լուռ  
արտասունքներով հիւանդի երեսն էր  
թրջում: Մարիսաթունը քաշեց, յետ  
արաւ մարդուն հիւանդի կշտից:

— Գրիգոր աղային տեսնելիս թո-  
ղարիս<sup>1)</sup> առուիր,  
— Զէ, ինչի, ինչ կայ, զարմացաւ  
խաչօն:

— Լինին նշանածը, ախալցինցի  
Դշնունը, ախր մեռել է:

— Ի՞նչ ես ասում, կնիկ, այդ քեզ  
ով ասաւ: Գրիգոր աղան ինձ այդ մա-

<sup>1)</sup> Գուգ ողջ միաբ:

սին ոչինչ չ'ասաւ. ընդհակառակը նա  
պատրաստիում է շուտով գնալ այս  
տեղից. Պատմախան տուր, ուժմից են  
լսել դու այդ լուրը,

— Լեռնը ինքն իւր բերանով յայտ-  
նեց...

— Լեռնը, լեռնը շնւա-շնւա էր զա-  
լիս միթէ այսակեղ...

— Ոչ... նա... մի անգամ միմիայն  
... կարառանի կողոպտուած օրը...  
հայրը նրան ուղարկել էր... Մարիսա-  
թունը կմկմաց.

Եսթերի տնքսնքոցը ստիպեցին ծը-  
նողքին վերջ գնել այդ խօսակցութեա-  
նը. Մարիսաթունը շուտով ճաշ բերեց.

իէ»

Բեռնակիր Գօգորին ճանապարհ ձը-  
գելով Անթառեանը ինքն էլ տուն զը-  
նաց. Առաջն պատուէրը, որ նա  
տուեց Արէգնազանին, տուն ներս մըտ-  
նելիս, այն էր որ սա պատրաստուի և  
պատրաստէ տան հարկաւոր շորեղին-

քը Փրկար օրից յետոյ ճանապարհ լնկ-  
նելու դէպի Ախալցխայ, Յետոյ Գրի-  
գոր աղան մօտը կանչեց միւս սենե-  
կում առանձնացած Լեռնին և սկսեց  
խրատել նրան. Որդին լուռ ու մունջ  
և զիմակոր կանգնած էր հօր հանդէպ,  
իսկ Արէգնազանը նրա ոտքերի մօտ  
նստած. Ինքը Գրիգոր աղան սենեկի  
զվարում բաղմած ծխում էր.

— Երբ մի մարդ ցեխի մէջ, սկսեց  
Անթառեանը իրան յորդորական ճառը,  
մի ակն է տեմնում և ուզում է վերց-  
նել այնքան խելօթ և զգոյշ պէտք է  
լինիր մը ակը ցեխի միջից հանելիս  
մատները չը ցեխուէ. Զավահիրջու-  
թիւնը ուկերիչ Խաչօյի ձեռքի ակն է,  
իսկ այդ ձեռքը, այդ ձեռքի ափբաւափ-  
քը առհասարակ ցեխեր կարելի է. հա-  
մարել մեր անուան, պատւայն ու աս-  
տիճանին հետ համեմատելով, ի հարկէ  
Յու քեզ ոսկերչուն յանձնեցին որպէս  
պի նրա ձեռքի ակը իսկս, և ոչ թէ

վերկենաս նրա... նրա... լկտի կնկայ  
հետ... առաջ առ առ առ առ առ առ

— Ասոնը աչքերը իշտաղաբար հօր վե-  
րայ շորթեց, գեռ լրան կեանքումը  
Գրիգոր-աղան ոչքից այդպիսի լուռ  
անարդանքի հանդիպած չէր, Նա մի բո-  
պէ կանգ առաւ, Խօսքը բերնումը կի-  
սատ մնաց,

— Ասոնս ինքը Բնչ յանցանք ունի,  
խօսքի մէջ մտաւ Արէզնաղան խանու-  
մը, նա անփորձ, ջահիլ տղայ է, յան-  
ցանքը այն, այն, այն անամօթ կնկա...  
յանցանքը էլի քոնն է, որ չը բաւա-  
կանացար որդւոյդ ոսկերչուն մօտ տալ  
միմիայն, այլ նաև թոյլատրեցիր որ նա  
ոսկերչու տունը գնայ ու գայ... հէնց  
իմանաս իմ տղաս նոցա քաշալ աշա-  
կերաը լինէր... առաջ բարձաւ առ առ

— Մեծ քաջութիւնը հէնց նորա-  
նումն է, կնոջ խօսքը ընդհատեց Գրի-  
գոր-աղան, որ Ասոնը մտածելով իրան  
ում որդին լինելը, պէտք է այդ ցե-

խերի միջից առանց կեղտոտուելու դու-  
րս գար, Քառասումն ապրի է ես Եր-  
գուրումումն եմ, զրեթէ ամենայն օր  
ամեն կարգի և աստիճանի մարդկանց  
հետ նիստ ու կաց եմ անում, ամենքի  
հետ գործ ունիմ, բայց միշտ և ամեն  
ժամանակ նոյն Գրիգոր-աղան եմ.

— Շատ բան. զու հասակդ առած,  
փորձուած, խելահաս մարդ ես, իսկ Ասոնս,  
գեռ նա զիժ մողի է, Նա գեռ ոչ իրան  
չարը զիտէ, ոչ բարին, ոչ ցեխը, ոչ  
էլ մաքրութիւնը, Տայ Աստուած ողջամբ  
հասնենք Ախալցխայ, Ասոնիս պսակենք,  
տեսնենք առան ու կանաչը, հաւ անենք  
թառը նենքն, այնուհետեւ զու ինքու  
էլ կը տեսնես թէ յանկարծ որքան կը  
փոխուի Ասոնս.

— Ես ինքս էլ հարկաւ հասկանում  
եմ, որ մէջ տեղում մի փոքր անխելք  
ջահլութիւն կայ, զիտեմ որ լսածնե-  
րիս մեծ մասը զրապարտութիւններ են...

— Բոլորն էլ, շեշտեց Ասոնը:

— Գուցէ և քաջարը, և ես դորս մա-  
սին անչափ ուրախ եմ, ուսորդիրա միայն  
ես այն բանի վրայ եմ մտածում, որ  
եթէ այս ձայները յանկարծ Ախալցխայ  
հասած լինին, ես ինչ երեսով պիտի  
կարողանամ ինասի՞ Մարկոս աղային  
վրայ մտիկ ասալ ուս, որդիր գեռ չեմ  
հասկանում զեռ քեզ ինն էլ հարկա-  
ւոր է որ տասը դառնաս, զու դեռ չը  
զիտս թէ ինչ առել է բարի անուն,  
բարի համբաւ ինձ համար ման, կա-  
տարեալ ման է, եթէ Ախալցխայում  
ինձ համար առեն թէ սա այն զոված  
գրիգոր աղան է որ ողջ Երզուրումին  
խելք էր սովորացնում, ուսկայն հարա-  
գատ զաւակին կըթել չէր իմանում:

— Լեռնս քո երեսին ամօթ չէ բե-  
րել և այսուհետեւ չի էլ բերել, — այդ  
մասին դումիամիտեղիր, ինչ որ նե-  
ղաւ, անցաւ գնաց, միադժբաղդ գէպք  
էր Արտայստեղից հեռանալուց այն-  
տոյ ամեն առեսակ խօսք ու զրոյցի էլ

վերջ կը տրուի միանգամայն, Դատար-  
կախօսութիւնը, ուրիշին բամբասելը  
նոր բան չէ կըդուրումցիներին համար նրանք, ինչպէս շուտ և առանց մտա-  
ծելու մի բան սկսում են, այսպէս էլ  
շուտ վերջացնում, Այս ձայները ոչ  
երբէք կարող են Ախալցխայ համնել.

— Եւ նոյնպէս ոչ էլ կրկնուել, այն-  
պէս չէ, կեռն ևս յոյս ունիմ որ Ա-  
խալցխայում գու քեզ այնպէս կը  
պահես, որ աներանցդ հետ բոլոր քա-  
ղաքն էլ քեզ վրայ մատ կծի, Անթառ-  
եանի որդւոյն և ժառանգին ես այդ-  
պէս եմ ուզում տեսնել մինչեւ գերեզ-  
ման մանելս կարողութիւնս, որ քեզ  
համար եմ տնտեսել ու տնտեսում, ա-  
ռետրական յաջող գործողութիւններ,  
որոց ձեռնամաւիս լինել եմ ուզում,  
ինձ համար չէ, որդեակ, այլ քեզ և  
միմիայն քեզ համար, Քանի ես ողջ  
եմ քեզ և քո ապագայ կողակցին վար-

դի պէս կը պահեմ, իսկ երբ ոտքու դե-  
րեղման դրի, ուզում եմ որ օջախիս  
մուխը ծխայ միենոյն կարդով, չափով  
ու համբաւով, ինչպէս որ 40 տարի  
շարունակ ծխացել է և ծխում է, 0-  
ջախ, որդեակ, օջախ, օջախ, հասկա-  
նում ես: 0 ջախ, օջախի անուն—սա է  
այն միակ սրբազան ու վախճանական  
նպատակը, որի համար մարդիկ աշխար-  
հիս երեսին միմեանց են ուտում, մի-  
մեանցից գուփում ու զջլում անդաշար:  
և ԱԷԿ Աստուած, հազար արարածն ա-  
սել են մեծունանք: Ամենայն օր, ա-  
մենայն բռպէ մեր աչքի առաջ միշտ  
տեսնում ենք. հարիւրաւոր և հազա-  
րաւոր մարդիկ ծնում են, լաւ վատ  
ապրում են և յետոյ մեռնում, բայց  
ինչպէս ապրելիս, նոյնպէս և մեռնե-  
լիս ոչոք, ոչոք չէ յիշում այդ մարդ-  
կանց: Ծաղիկներ, խոտեր, լեռն, շատ  
են բումնում, ծլում ու ծաղկում, բայց  
հէնց որ թարշամեցան, մեռան, նոյցա

բուսած տեղը, չոր գետինը, նրանց ար-  
մասները, ոտքի կոխան նն դառնում:  
Բայց տես այն բարձրաբերձ կաղնին,  
որ հարիւրաւոր ատոփիներ գլուխը ամ-  
պերին ու աստղերին դէմ տուածն ահա-  
ես, միշտ կամ ու կը մնամ ասում է:  
Բարձրաբերձ կաղնին իրան տեսակին  
մէջ մի փառաւոր օջախ է ներկայաց-  
նում, որդեակ: Ոսկերիչ Խաչօներ հա-  
զարաւոր և բիւրաւոր եղել են և կան  
աշխարհիս ամեն մի անկիւնում, բայց  
Անթառեանների թիւը սակաւ, շատ սա-  
կաւ է լինում առհասարակ...

Ոգնորուած Գրիգոր-աղան դեռ ևս  
չէր վերջացրած իրան ճառը, երբ մեր  
ծանօթ Սլնաս-աղան իրան կնկայ հետ  
ներս մյուս: Նրանք եկած էին Արէզնա-  
զանին օգնելու տան իրեղնքը կապո-  
տելում և դարսոտելում:  
Խօսակցութեան հիւթը փոխուեցաւ,  
Լիոնը, որ մինչ այդ ժամանակ արձա-  
նացած լսում էր, և հօր քարոզները

նորա մէկ ականջիցը մտնում էին միւս  
սիցը դուրս գալիս, ազգական հիւրերի  
գալստեան վրայ, կարծես, ուրախացաւ:  
Այդ օրը ընթրիքի վրայ նա սովորա-  
կանից աւելի զուարիթ կերպարանք ու-  
նէր, Միւսների համար դա ամենալաւ  
ապացոյց էր, որ Լոռի վրայ շատ լաւ  
ազդել են իմաստուն հօր իմաստուն  
խօսքելու:

Հետեւալ առաւօտը Անթառեանի  
վաճառատան սենեկում թմրած ու շըշ-  
մուած ոսկերիչ Խաչօն 150 մանէթ փող  
և իրան համար վարձուած խանթի դաշ-  
նագիրն Գրիգոր-աղայի ձեռքից ստա-  
նալուց յետոյ, իրան աջ ձեռքը երկա-  
րացնում էր դէպի սենեկում կանգնած  
մի անծանօթ մարզը, խնդրելով որ իրան  
աեղակ ձեռք դնէ (ոսկերիչը ինքը ան-  
գրագէտ էր) ընկերութեան հետեւալ  
օբաժանման գրիո վրայ:

«Աստուծով. 18... թուին յունիսի  
15-ին ի քաղաքն Երզուրում. մենք ի

ներքոյ ստորագրեալքս 18... թուէն  
մինչև 18... թիւը չորս տարի շարու-  
նակ ընկերովի առետրականութեամբ և  
ջավահիրջութեամբ պարապելով, այս  
թիւ հաշիւներս մաքրեցինք և միմեան-  
ցից բաժանուեցանք: Այսուհետեւ մէկ-  
զմէկուց ոչինչ տալացու և առնելացու  
չունինք: Մէր մէջ եղած ամեն տեսակ  
ընկերական-առետրական տոմարներն  
ու թղթերը քննուած, զննուած և վեր-  
ջացրած են, և ոչ մենք, ոչ մեր ժա-  
ռանգներն երբ և իցէ այդ մասին ոչ-  
ինչ վէճ բանալու իրաւունք չ'ունինք:  
Խոկ եթէ, Տէր մի արասցէ, այդպիսի  
բան երբ և իցէ, և ում և իցէ, կողմից  
տեղի ունեցաւ, անընդունելի և ապօ-  
րինի պէտք է համարել Աստուծոյ և  
դատաւորների առաջն:

Թղթի տակ ստորագրեց նախ ինքը  
Անթառեանը և ապա Խաչօնի ներկա-  
յացուցիչը, որը օբաժանման դրիո իս-

կականը Անթառեանին, իսկ պատճէնը  
ոսկերչուն յանձնելով, հեռացաւ:

— Այժմ Խաչօ եղբայր, քրաֆանման  
գիրը մի կողմ զնելով սկսեց Անթառ-  
եանը, ևս քեզ մնում եմ պարտ քո  
ակնեղինների արժէքը 300 մանէթ, կամ  
որքան որ գոյացաւ—հարկաւ ոչ պա-  
կաս այդ գումարից, իսկ զու մնում ես  
ինձ տալացու այժմ տուած 150 մա-  
նէթն, Երբ ակնեղիններն Ախալցխա-  
յում վաճառեմ, միմեանց հետ կը հա-  
շուենք: Խանթիր համար վճարածս 60  
զուռուշը իմ կողմից ընծայ ընդունիր,  
ինչ որ վերաբերումէ տանդ վարձն,  
տարփայ վերջերում, ինչպէս ասացի,  
300 ական զուռուշ վալիի օգնականից  
կ'ստանաս, խակ կորուստներու համար  
ևս ինքս շատ և շատ ինդրած եմ թէ  
վալիին, և թէ տանդ վարձկան նրա  
օգնականին: Դու ինքդ էլ շարունակ  
հետեիր և գոնեա երկու ամիսը մի ան-  
գամ ինձ այդ մասին գրաւոր տեղեկու-

թիւն հազորդիր Ախալցխայ, որպէսզի  
ես էլ ըստ այնմ այնտեղից դործեմ:  
Քեօփրիքէօի եկեղեցւոյն արծաթներին  
համար Արէգնաղանին պատռուիրած եմ  
տան իրեղինները դարսուելիս առան-  
ձին տեղում պատրաստի ունենայ: Տա-  
նը այսօր զալմազալ է: Վաղն էլ բոլոր  
օրը զբաղած ենք լինելու գերթաս բա-  
րովից համար եկող գնացող ազգական  
բարեկամների հետ, ուստի վաղը իրիդ-  
նապահին եկ մեր տուն և արծաթներդ  
ստացիր: Էսթիրին հիւանդութեան  
պատճառով, զիտեմ, սիրտ չ'ունիս, ա-  
պա թէ ոչ կը խնդրէի, որ մի քիչ վաղ  
գաս միւնների հետ միասին ընթրիք էլ  
անէխնք բայց եթէ ընթիրիքին չը կա-  
մեցար գալ, կամ որեէ պատճառով  
վաղը իրիկնապահին գալու միջոց չ'ու-  
նեցար, զոնեա միւս օրը առաւօտ վաղ  
արի, եղբայր, և քո ամանաթը ստա-  
ցիր: Շատ և շատ ցաւում եմ, Խաչօ  
եղբայր, որ վերջին անգամ ընտանե-

կան այս փոքրիկ անախորժութիւնը  
մեր մէջ պատահեցաւ, բայց ի հարկէ  
այդ բանը երբէք չէ կարող մազիւ չափ  
մեր մէջ սառնութեան աեղիք տալ:  
թէ Մարիսաթունը և թէ Արէգնազանը,  
ինչքան էլ որ լինի, էլի կնիկ-արմատ-  
ներ են, իսկ մեծունանց ասածի նման,  
կնիկ-արմատների միմիայն մազերը եր-  
կայն են լինում:

Ընկերները բաժանուեցան: Կարաւա-  
նի կողոպտուած օրից մինչև այդ բո-  
պէն խեղճ սրհեստաւորի գլխովն ու  
սրտովը այնքան և այսպիսի մտած-  
մունքներ, հոգսեր, ցաւեր ու վշտեր  
էին անցկացել, որ նա ոչ իրան արածն  
էր խմանում, ոչ տեսածն ու լսածը:  
Ինչպէս իսկըն ու միաքը թացրած մի  
ապուշ, խաչօն այդ օրերում բնազդ-  
մամբ միմիայն անում էր այն, ինչոր  
նրան թելազրում էր իրան նախնական  
կրթութիւնը—անպայման և կուրօրէն  
հպատակութեան մհծի, տղայի, կամքին

ու հրամանին, Եւ ոսկերիչը իրաւունք  
ունէր այդպէս վարուելու: Բացի լա-  
ւութիւնից, բացի բարերարութիւնից  
ուրիշ ոչինչ տեսած չէր նա մինչ օրս  
Անթառեան Գրիգոր-աղայից!

Խաչօն մոռացած էր մինչև անգամ  
որ Կոստանդնուպոլսից բերած մի հակ-  
ապրանքին մէջ իրան կնոջն ու աղջ-  
կան հագուստցու կային: Գորա համար  
վճարուած փողը արհեստաւորին իրան  
սեպհական, արդար վաստակն էր: Ան-  
գութ Անթառեանը այդ մասին էլ լոեց  
դիտմամբ: Նա իրան առանձին հաշիւ-  
ներն ունէր: Հենց որ սոկերիչը ոտքը  
սենեկից դուրս գըեց, Գրիգոր-աղան  
մի կտոր թուղթ վերցրեց և հետեւ  
հաշուեցինը կազմեց:

Ընկերութեան դրամագլխի մէջ ու-  
նեցած իմբաժինը, 2500 մանէթ, Փօլիս  
ուղարկելիս կանխիկ փող տուի, 5000  
մանէթ, այդ գումարին երեք ամսուան  
տոկոսը հարիւրին քսանով, 150 մանէթ:

Գործիքների համար այժմ իրան տռւի  
 150 մանէթ. խանթին երկու տարվան  
 վարձը վճարեցի 60 դուռուշ, սորա եր-  
 կու տարուան տռկոսը 60 դուռուշ. մի-  
 ասին անում է 6 մանէթ, գումարն ա-  
 նում է 7806 մանէթ, Այս գումարի  
 փոխարէն ստացայ. տունը 2000 մանէթ  
 արժողութեամբ. խանթի միջի ակնե-  
 զէնների նրա բաժինն 300 մանէթ,  
 Քեօփրիքիօյի եկեղեցւոյն արծաթներն  
 400 մանէթ, մի հակ ասլրանքին մէջ  
 իրան հասանելի ճոթեզէնների արժէքն  
 300 մանէթ, գումարն է 3000 մանէթ.  
 Կրկին 4806 մանէթ բաց, բաց, բաց է  
 մնում, բացագանչեց Անթառեանը  
 թուանշանները գումարելից զինի, նա  
 միտք էր անում մի կերպով փոքր ինչ  
 էլի կրճատել այդ գումարը, բացը էլի  
 ծածկել, բայց հնար և յարմարութիւն  
 ըսկար, ձարը կտրած վերկացաւ բա-  
 ժանման գիրը տարաւ վալիի օգնակա-  
 նին հաստատել տռւեց, Յետոյ թէ վա-

լիին և թէ նրա օգնականին և միւսնե-  
 րին վերջին մնաս բարովը տռւեց այդ  
 օրը Անթառեանը և քաշուեցաւ զնաց  
 տռւն, որպէսզի կրգուրումից դուրս  
 գալու պատրաստութիւն տեսնի, Վալիի  
 կարգադրութեամբ Անթառեանի ընտա-  
 նիքին մինչեւ ոռուական սահմանը պէսք  
 է ուղեկցէն չորս հոգի զարթիաները  
 — Հայրեկ, Ընդհատեցի ես ծերուկիս  
 խօսքը—ուրեմն Անթառեանը...

— Ուրեմն Բնչ. Անթառեանը իրան  
 հաշուեկշիռը կազմեց, Այդպիսի հա-  
 շուեկշիռներ կազմելում Գրիգոր-աղան  
 շատ հմուտ էր, Այդ ոչինչ, Այդ մա-  
 սին խօսել անգամ չ'արժէ, ինձ այժմ  
 մնում է ծանօթացներ քեզ ուկերիչ  
 Խաչոյի տան պատքութեան հետ և ա-  
 պա ելթալ Անթառեանին ճամրու դը-  
 նելու:

Ընկերութեան երկրորդ տարին Ան-  
 թառեանի խորհրդովն ու սրա ձեռքով,  
 Խաչօն գնած էր, այդ տունը, որը մինչ

օրս նրա վրայ նստած էր, ինչպէս զիտենք, 2000 մանէթի, որ ամենապահանքաւ կաս գինն էր, Անշարժ կալուածքի տերերը էրզուրում չմեր պատմութեան ժամանակ. և մինչև այսօր Էլ—օրինական հաստատուն ապացուցութեան թղթեր չունին: Անշարժ կալուածքների առ և ծախսն էլ լինում է հասարակ, անվաւեր թղթերի միջոցաւ: Երբ մէկը որեէ անշարժ կալուածք է վաճառում, այդ կալուածքի նախկին, ամենահին տիրոջից և սորա անունով եղած, ստացած թուղթը յանձնվում է կալուածքը գնողին, առանց որեէ մակադրութեան անդամ: Իրան կողմիցն էլ վաճառողը մի այլ հասարակ սփառաման գիր» է տալիս, որը շատ հավիւ վաւերացնում են տէրութեան պաշտօնեաները:

Այս կարգով ահա, մի կալուածք հարիւրաւոր մարդկանց ձեռքն է անցնում: Բայց գնողի համար վաճառողից

ստացած «վաճառման դիրք մինակ զօրութիւն չ'ունի, եթէ այդ վաճառման գրի հետ կից չէ նաև նախնի տիրոջ զիրը, կամ թափին:

Երբ Անթառեանը իրան ընկերին համար տուն գնեց թափին և վաճառման զիրը առաջին նուագում յանձնեց ուկերչուն, բայց վերջերում երբ ոսկերիչը առևտրական գործերով սափուած էր յաճախակի բացակայել էրզուրումից, ապահովութեան համար սեպհական տան թղթերը Անթառեանին մօտ պահ էր տուել: Դակ ինքը հանգիստ և միամիտ սրտով բնակվում էր տանը ինչպէս լիակատար տէր: Մինչև վերջին անգամ քաղաքից բացակայելը խաչօյի համար կարիք չը կար թղթերը Անթառեանից յետ ու զել: Գործերի յաջողութեան մէջ նրա մտքովն անդամ չէին անցնում այդ թղթերն և նոցառում մօտ լինելն: Երբ դիբաղութիւնը վրայ, հասաւ, ոսկերիչը, ինչպէս տե-

սանք, իրան-իրան բոլորովին կորսնց-  
րուց: Այդ գէպքից և ոսկերչու անդրա-  
գիտութիւնից Գրիգոր-աղան օգուտքա-  
ղեց: Դեռ Երզուրումից չը մեկնած,  
նա մի կեղծ վաճառման զիւ շինել  
տուեց, իբր թէ ոսկերչուց այդ տունը  
պարտքի փոխարէն վիր է առել: Վա-  
լիի օգնականը այդ վաճառման զրից  
վրայ էլ, ինչպէս և օրաժանման զրից  
վրայ, իրան զրօշմը զրեց և վաւերաց-  
րեց: Ախր Անթառեանը այդ տան եր-  
կու տարվայ վարձը զուրտեղը վալիի  
օգնականին չէր ընծայում:

Վերջերում մենք կը տեսնենք և այս  
կալերը, որ Երզուրումի վալիի օգնա-  
կանը և այդ քաղաքին մեծանուն հայ  
վաճառական Անթառեանը, կալսեցին  
խեղծ ոսկերչու զլիսին.

Դու արդէն գիտես, որ Լին Ան-  
թառեանը աքացու մի հարուած տուեց  
մօրը ոսկերչու տան միջին: Դու տե-

սար թէ այդ տարօրինակ հանգամանքը  
ինչ վատ ներգործութիւն ունեցաւ հա-  
րեանուհների և նոյն իւկ պատանու  
իրան վրայ առաջին անգամ: Որդին ծը-  
նողքին վրայ ձեռք բարձրացնէ, ամեն  
տեղ և ամեն ժամանակ այդ բանը դա-  
տապարտում են թէ օրէնքը և թէ բա-  
րոյականութիւնը:

Բայց մի երկրում, ինչպէս որ Եր-  
զուրումն է, օրէնքն ու բարոյականու-  
թիւնը ինքնըստինքեան այնքան նշա-  
նակութիւն չունին ժողովրդեան աչ-  
քում, որքան հասարակական կարծիքը:  
Թէ Երզուրումում ինչ ասել է հասա-  
րակական կարծիք, ոու այդ անսար, և  
ինձ հետ զու ինքդ էլ, հարկաւ, դա-  
տապարտում և արհամարհում ես այդ  
տեսակ հասարակական կարծիքը, բայց  
Լեռն Անթառեանը զարգացման այն  
աստիճանը չունէր—և որտեղից կարող  
էլ ունինալ—որ հասարակական կար-  
ծիքների մէջ որսէ զանազանութիւն

տեսնէր։ Արդ՝ Երդուրումի հասարակական կարծիքը ոչ միմիայն դատապարտում էր մի զաւակ, որ իրան ծնողքին վրայ ձեռք է բարձրացրել, այլ նաև պատրաս էր քարկոծ առնել այդպիսի անօրէնին։

Ոչոք նորա հետ այնուհետեւ չէր խօսում, հետք ընկերութիւն կամ առետուր անել ոչոք չէր կամենում։ Եթէ նա տղայ էր, ոչոք նորան աղջիկ չէր տալ, իսկ եթէ աղջիկ—կուսանոցը միայն կը պաշտպանէր նորա կեանքի թշուառ մնացորդը։ Դեռ այդ հերիք չէ. ծնողքին վրայ ձեռք բարձրացնող զաւակի գործերը անդիմաղրելի անյաջողութիւնների պէտք է հանդիպէլին նորա բոլոր կեանքում, անքուժելի ախտերը և հիւանդութիւնները նրան հալումաշ պէտք է անէին։ Եթէ որ և է պատճառով գերդաստանի տէր եղաւ այդպիսի որդին, նա ոչ երբէք կարող էր միենայն ժամանակ և հայր լինել։ Այդ տեսակ ամոլների անկողինը մի անդամ ընդմիշտ կ'անիծէր և կը նզումքը վրիժառու բարձրեալը։

Այս և այսպիսի դառը մտքեր մէկ զմէկու ետքեից յաջորդում էին պատանի Անթառեանի տհաս ուղեղի և փափուկ սրտի վրայ, երբ բարի մարդիկ նրան, մօր հետ միասին, ոսկերչուտանից յետ դարձրին։ Այդ օրից Լունը վճռեց իրան մահացու մեղքը քաւել և ամեն կերպ աշխատում էր, որ գէթ այսուհետեւ խէթ աչքով չը մտիկ տան իր վրայ ծնողքը։

— Եւ ուրեմն նա մոռացաւ Յսթերին, այդ օրից ի վեր պատանու սիրտը դադարեցաւ ուրեմն զարկելուց իրան սիրած ու պաշտած օրիորդի համար, անհամբերութեամբ հարցը ես ծերունուց։

— Հազար երանի չէր, պատասխանեց ինձ ուկորը, եթէ քո ասածով լինէր։ Անթառեանի որդուն համար հէնց այդ էր ահա վրկութեան միակ եւքը, բայց դժբաղդաբար այդ այդպէս չ'ե-

զաւ։ Ասոնի լեզուն այդ օրից իւվեր  
կարծես լուեց, որպէս զիւ աւելի ոյժ  
տայ այնուհետեւ սրտի ներքին բարախ-  
մանը։ Ահա թէ ինչին Ասոնը մի առե-  
սակ անտարբերութեամբ, կարծես հը-  
լու հպատակութեամբ, լուսմ էր վեր-  
ջին անգամ հօր յորդորական ճառը և  
թէ նա ինչի ուրախ կերպարանք ստա-  
ցաւ, երբ Մինաս աղան կնոջը հետ  
հիւր եկաւ իրանց տանը։ Կապուտեցին  
դարսուտեցին տան իրեղինները և ամեն  
ոք իրան անկողինը մտաւ ննջելու։  
Որդուն վերայ նկատուած վափսիսւ-  
թիւնը այր և կին Անթառեաններին,  
ինչ ասել կուզի, շատ ուրախացրեց  
այդ գիշերը։

Տիկին Արէգնազանը մինչև անգամ  
մարդուցը ծածկել էր Ասոնից ստայած  
դժբաղդ հարուածի պատմութիւնը։ Որ-  
դուն վրայ նկատած վափսիսւթիւնը,  
կարձ ժամանակում նկատելով՝ մայրը  
մինչև անգամ ուրախացրեց յանձնուած

ծիլվրայ, թէ ժամանակ առժամանակ  
սարսափում էր, երբ աչքի առաջը բե-  
րում էր հարուածի հետեանքները սի-  
րեկան, զաւակին ասկազային նկատ-  
մամբ։ Ինչ էլ որ լինի գէթ առայժմ  
չարը խափանած էր։ Այր և կին հաշ-  
տուած էին մէկդմէկու։ հետ և այդ վի-  
շերը ուրախ ու հանգիստ քուն եղան։  
Մթութեան մէջ իրան անկողնումը  
անդադար չուռ ու մուռ եկողը մի-  
միայն Ասոնն էր, Պատանուն սրտի հա-  
մար շատ ծանր էր բաժանուել Ասթե-  
րից, բայց նորա ուղեղի համար, ծանր  
էր նոյնպէս ընդդիմադրել ծնողքին։  
Շատ ծրագիրներ կազմելից յետոյ վեր-  
ջագիւ պատանին սրուշեց մի անգում  
և վորձել հօր ու մօր հաճութիւնը  
սուանալու չը բաժանել իրան Ասթերից  
և պուն եղաւ։ Վահանանիւ առ և  
ու պատասխան կան վայրա պահ Ա-  
մրոշած օրին ու ժամին, երբ արշա-  
լոյնը նոր է բացուում, եկաւ բեռնա-

Կիր Գօգորը իրան ձիաններով և Անթառեանի ընտանիքին էրզուրումից դուրս հանեց, Առաջին անգամին տեսնելով իշխանութեան չորս ձիաւոր զարթիաներին դուան առաջին կանգնած, Լեռն Անթառեանը այնպէս կարծեց որ զարթիաններին յատուկ իրան համար հրաւիրել է հայրը, և ուրեմն ամեն փորձ ու դիմադրութիւն անօգուտ էր, և ոչ միայն անօգուտ, այլ նաև վտանգաւոր նոյն իսկ Եսթերի անուան համար:

Ես մոռացայ քեզ ասել որ իրան սիրելինի հիւանդութեան մասին ոչինչ տեղեկութիւն չունէր Լեռնը, Ոսկերչուտանից վերջին նուազում դուրս եկած օրից, մինչև էրզուրումից հեռանալը, ծնողաց ճարպիկ կարգադրութեամբ, Լեռն Անթառեանը հայրենի տան ու Մինաս աղայի մօտ պատուաւոր կերպով բանդարկուած էր միշտ: Զախախուած սրտով, ապագայ յոյսերով

Լեռն Անթառեանը երբ հօր հրամանով բեռնակրին ու զարթիաններին օղիի լիք լիք զարթներով հիւրասիրեց պըրծաւ, կէս շիշ օղի էլ, ծնողքից ծածուկ իրան ջանին քաշեց և թռաւ ձիուն հեծաւ:

Եսթերի վիճակը այդ գիշերը շատ ծանրացած էր, ուստի և խաչօն ու Մարիսաթունը ամբողջ գիշերը, և մինչև արշալոյսի բացուկլը, զբաղած էին իրանց հիւանդով, երբ հիւանդը փոքրինչ հանգստացաւ, խաչօյի առաջին զործն եղաւ, գնալ իրան բարերարին ճամբու զնել և Քեօփրիկեօյի եկեղեցւոյն արծաթներն յետ ստանալ, բայց արդէն ուշ էր: Արհեստագործ տղամարդու համար շատ ցաւ եղաւ, որ չէր կարողացել իրան վերջին պարտքը գէպի Գրիգոր աղան կատարել և վերջին անգամ նրա բարեգործ ձեռքիւն ու զորմած սիրտը համբուրել:

Այդ ակամայ պարտազանցութիւնից

աւելի խղճահարուած, երբ նա ձեռն-  
թափ գէպի Մինաս-ազայի տունն էր  
զնում կարծելով թէ Քեօփրիքեօյին  
արծաթներն Գրիգոր-աղան նրան է  
յանձնել, ճանապարհին հանդիպեցաւ  
ինքը և Մինաս-աղան, Ուկերիչ Խաչօյի  
նման Մինաս-աղան էլ շատ ցաւեցաւ,  
որ իրան աղականին վերջին ամեաս-  
բարովին չ'արժանացաւ, Յետոյ նա  
յարակցեց, Երէկ երեկոյեան թէ Գրի-  
գոր-աղան ինքը և Արէգնազան խանու-  
մը, քանիցս անգամ ինձ ապսպիցին,  
Խաչօ եղբայր, որ քո արծաթներն հե-  
տըս վերցնեմ այսօր քեզ յանձնելու,  
Օրհնածները կարծես իմանում էին որ  
դու չը պիտի կարողանաս վրայ հասնիլ,  
բայց ես, թիւ յիշողութեանս, դար-  
ձեալ մոռացայ, Երանք անպատճառ  
հետերը կը տանէին այդ արծաթները,  
եթէ ոչ քաղցած դրացիներից որին կա-  
րող էին հաւատալ, Բայց այդ ի հարկէ,  
ոչինչ, եթէ հաւատարիմ մարդ գտան

Կարսից և կամ անպատճառ Ախալցիս-  
յից էլի շատով քո ամանաթը կը վե-  
րադարձնեն, Խաչօ եղբայր Ուկերիչը  
ոչինչ չը պատասխանեց, Մինաս-աղայի  
կշակից նա հեռացաւ, Միամիտ արհես-  
տաւորի աշքերը այդ բոպէում կարծես  
փոքր ինչ բացուեցան, Ափ անախորժ,  
մի դառը կամկած նրա մտքի մէջ ծա-  
գեցաւ յանկարծ գէպի Անթառեան  
Գրիգոր-աղան:

Երգուրումի շինութիւնները գեռ ես  
աշքից բոլորովին անհետացած չէին,  
երբ օդին, որը Լեռն Անթառեանը առա-  
ջին սնգամն էր գործածում, արդէն ու-  
նեցաւ իրան ներգործութիւնը պատա-  
նու վրայ Նա մի անգամ ես գլուխը  
գէպի հայրենի քաղաքը շուռ տուեց և  
ձիու փորին մի լաւ մտրակ հասցրեց,  
Գօգորի տօռաթը սացաւ, Ծնողքի հը-  
րամանաւ զարթիաներից մէկը հասաւ  
և Լեռնի ձին բռնից, կանգնացրեց,

Քայլերին ոյժ տալով վրայ հասաւ և  
բեռնակիր Գօգորը քահ, քահ, քահ,  
բարձրածայն ծիծաղում էր Լեռնը ծը-  
նողաց վախկոտութեան վրայ Գրիգոր  
աղան ու Արէղնազան խանումը միա-  
մտեցան, ուրախացան Զարթիան յետ-  
եկաւ, Պատանու մօտ մնաց միմիայն  
Գօգորը, որը տօռաթի սանձից բռնած,  
դանդաղցնում էր նրա քայլերը, որ-  
պէս զի յետնորդները վրայ համայն  
Մի քանի օրավար տարածութիւն նո-  
քա գեռ հեռու էին, Զին տաքացած  
էր և չէր ուզում կամաց քայլել.  
— Անիձած, հապա տեսնեմ հիմայ  
ոնց կը փախչիս, ասաց բեռնակիր Գօ-  
գորը և թռաւ Լեռնի գաւակը հեծաւ,  
Այդ բանը կարծես իրան համար վի-  
րաւորանք համարեց տօռաթը, Փըշ,  
փա՛շտալն ու ոտքերը բարձրացնելը  
մէկ արաւ տօռաթը և ահա Գօգորը  
քաշեց տռաւ. Լեռնի ձեռքից ձիռ սան-  
ձը, Տէրը ձիռն յետ լնկրկեց, Զին

շտապ հօրդայի զարկեց: — Զանդ դուրս  
դայ, այնքան գնա, մինչև որ ինքդ դա-  
դրիս, ասաց Գօգորը և ձիռ. սանձը  
զարձեալ Լեռնին յանձնեց, թէի ծայրը  
միշտ էլի իրանց ձեռքումը ունէր,

Սովորական զանդաղ քայլերով հե-  
տեռում էին Լեռնի ձիռն նրա միւս  
ընկերները, Գրիգոր աղան զարթիանե-  
րի հետ խօսքի էր բանուած,

— Օվն լաւ բան է, վարպետ Գօ-  
գոր, հարցրեց Լեռնը բեռնակիրն,

— Ուհ, Լեռնջան, պատասխանեց  
յայտնի հարբեցողը, առանց օդու, իմ  
կարծիքով, մարգուս կեանքը կեանք չէ,  
Այն որ ուրիշներից թաքուն ես մըտ-  
նում եմ օղետուն, այն որ օղերի շի-  
շերը չարան-շարան տեսնում եմ դա-  
րակներում, թուքս բերնումս չորա-  
նում է, կոկորդս քոր է դալի: Ձեռքու  
կամացուկ, գրպաններս եմ տանում,  
ածմծում և ահա զընդ, զրընդ դուրս  
են գալիս ձերմակ-ձերմակ փարաներն

ու զուռուչները: Խմում եմ մէկ, ոչ ոչ ինչ, երկու, ոչինչ երեք, չորս հինգ և ահա մէկ էլ տեսնում ես քէփս չաղացաւ և հս կատարեալ մարդ եմ յագաւում, իսկ այսպէս... անիծեմ այսպէս ճամբայ գնալը:

— Ծնողքս իրանց հետ առատ օղի ունին վերցրած վարպետ գօգոր, ձիւ ուց վեր եկ և գնա ինդրիք, քեզ կը տան:

— Իրաւ... բայց վախենում եմ տոռաթը, անպատանը, քեզ էլի վախցիւ:

— Զես տեսնում ինդի ոտքերը մեր ծանրութեան տակ ծալունմ են, իջիր, ցածր իջիր, ձին ափսոս է: Ես կամաց կամաց առաջ կը դնամ:

Գօգորը ձիուն նայեցաւ, զննեց նրա ոտքերը, ցածր իջաւ, քրտինքը ձիու ճակատից սրբեց և արտի կշտին նստած սպասում էր յետնորդներին, Տօռաթը խաղալով գնում էր:

Քան, քան, քան, բարձրաճայն ծի-

ծաղում էր Անթառեանի որդին և ձիւ ուց աւելի ինքը նորա վրայ թռչկուում, Վանը զինժղած էր:

— Ինդա, ինմաղ, ինդալուդ մատաղ, որդուն ետքեից ասում էր Արէգ նազան խանումը, ինդա և թող սիրտդ մէկ բաց լինիւ Հըմ, ժպտաց Գրիգոր աղան, ի զուր չէ որ մեծունանք ասել են զղարկ հորթի զնչին, որ գնա կանգնի մոռւրքի զլիինու: Երգուրումը վերջին օրերում, Արէգնազանը իրանն էր շարունակում, քեզ համար չարչարան, քի ու սրտմաշուք վշտերի կատարեալ օթեան դարձաւ, որդեակ, թող այս զով քամին քշէ և անդառնուլի տանի իրան հետ քո սրտի փղձուկներն, անմիտ զառնուկ, թող քո դալուկ կերպարանքը այս կանաչ կարմիր ծաղկանց նըման ալիքն ալիքն գոյն տայ, հոգեակս, թող...

— Բայց, հայրիկ, ընդմիջեցի ես ծերուկիս իսօսքերը, ոսկերչու կասկածը

Բնչ հետեանք ունեցաւ, նա չը դիմեց  
ոստիկանութեանը, արդարագատու-  
թեանը, չը ինդրեց որ Անթառեանի  
ճանապարհը արգելուի, Ծերունին ծի-  
ծաղեցաւ: Ինքս ինձ նեղացայ:

— Դատու զատաստանի, այն, ոս-  
կերիչը չը դիմեց: Հեղնօրէն ասաց ծե-  
րունին, ինձ հասկացնել ուղելով թէ  
մին և մատեղ եր էրզուրումում այդ  
գատն ու զատաստանը, արդարադա-  
տութիւնը, Մինաս աղաւի վերջին բա-  
ռերը ուկերչին դեռ իրան մտքումնու-  
նէր և նա արամագիր էր աւելի իրան  
կասկածը աշտեղի համարել, քան Ան-  
թառեանի փեսայի խօսածները սուտ  
հանել:

— Սորան կամ նորան, բարեկամի  
ու ծանօթի գոնեա չը յայտնեց, Խաչօն  
իրան կասկածը դէպի անդութ վաշ-  
խառուն:

— Շատ քչերին, բայց ում էլ որ  
յայտնեց նոքա կամ փարատեցին այդ

կասկածը, կամ սրտանց ուրախացան  
ոսկերչու այդ նոր անբաղդութեան վը-  
րայ, Նախանձը ինչեր չի անել տալիս  
մարդուն, Դու պէտք է զիտնաս, որ  
ոսկերիչ Խաչօն իրան նախանձուներն  
ու չարախնդիրներն ունեցաւ, այն օ-  
րից երբ Անթառեանի չորհիւ փոքր  
ինչ առաջ եկաւ, Այնպիսի մարդիկ էլ  
կային, որոնք Խաչօյի խօսքերից մի  
պարզ բան չը հասկանալով, կարծում  
էին թէ նա կամ խէլացնորուել է և  
կամ Անթառեանի վրայ շառ է ձգում:  
Խոկ թէ ինչի՞ Խաչօն պարզ չէր իո-  
սում, որովհետեւ բացի Անթառեանի  
տարած արծաթներից և մէկ էլ տան  
կալուածագրերից (այդ թղթերն էլ հի-  
մայ ոսկերչու միտքն էին ընկել) նա  
ուրիշ շօշափելի փաստ չունէր Անթառ-  
եանին բացարձակաբար դատապարտե-  
լու համար: Վերջապէս ինչպէս ար-  
ձաթներն նոյնպէս և կալուածագրերն,  
Անթառեանը կարող էր մոռացմամբ,

կամ շոտ-շատ սխալմամբ տանել իրան  
հետ, մտածում էր խաչօն,  
— ձևմարիտ որ, հայրիկ, մի զար-  
մանալի էակ է եղել քո այդ խաչօն,  
— խաչօյին մի մեղաղը ել, նա այդ-  
պէս էր դաստիարակուած, Ծնած օրե-  
րիցը մինչեւ գերեզման մտնելները հայ  
արհեւտաւորների դառը կեանքը ամո-  
քեցնողը, նոցա աղնիւ և բարեսիրա  
բնաւորութիւնն է, հեռու ամեն տե-  
սակ խարդախ շահախնդրութիւնից և Աս  
այդ կողմից միշտ նախազաս համա-  
րում եմ մեր ոսկերիչ խաչօներին Ան-  
թառեանի նման սեղանաւոր վաճառա-  
կաներից,  
— Բայց ուռ գոնեա ինչ ես ասում  
քո այդ էրգուրումի, այսպէս ասած,  
հասարակական կարծիքին որը յան-  
կարծ փոքրիկ լուից ահագին ուղարք է  
շինում և տարաբաղդ ոսկերչութ ընտա-  
նիքին բարի անունը մի քանի ժամումը  
հողի ու մոխրի հետ հաւասարեցնում

իրան խայտառակ վայ լէ, լէներով  
մինչդեռ...  
— Գուռ շատ շուտ դատավճիռներ ես  
կարդում, խօսքս ընդմիջեց ծերունին,  
Մի երկրում, ուր օրէնք և արդարու-  
թիւն ասած բաները լոկ անունով են,  
ուր այդ օրէնքի ու արդարութեան  
ներկայացուցիչները ամեն կողմից ստոր  
են քան իրանց ձեռքի տակի ժողո,  
վուրզը, ուր խաչօների բողոքն ու գան  
զամը կամ խեղդվում են և կամ ար-  
համարվում (ի դուր չէ ասած աղքատ  
էրիցու քարոզը չէ անցնում), այդպի-  
սի երկրում, ասում եմ ես, թէն չա-  
րաճնի, սակայն անմեղ մանուկների այդ  
խայտառակ վայ լէ, լէները, էլի մի  
տեսակ բարոյական նեցուկ ու միի-  
թաբանք են խաչօների համար, էլի այդ  
խայտառակ վայ, լէ, լէներն են, ո-  
րոցմով ճնշուած ու խեղդուած արդա-  
րութիւնը բացարձակաբար բողոքում  
է...

— Ես հէնց այդ էի ուզում ասել,  
հայրիկ, բայց ուր է, ինչի՞ այս անգամ  
էլ չը լսուեցաւ այդ բողոքը:

— Ինչպէս չէ, լսուեցաւ և խաչօյի  
համար լաւ էլ հետեանք ունեցաւ, բայց  
ես յոգնեցայ, այլ ևս չեմ կարող պատ-  
մել: Ծերունին խնդրեց որ իրան ննջա-  
րանը ցոյց տամ, Նա ննջել էր ուզում:

— Անիծած ծերունի, պատմութիւնդ  
վատ տեղում կարեցիր, ինքս ինձ ա-  
սացի, և տարաց ննջարանը ցոյց տաի:



7909

2013

